# ԷՋՄԻԱԾԻՆ



ՌՆԵ

ԺԳ. ՏԱՐԻ

Հոկտեմբեր

# ԷՋՄԻԱԾԻՆ

Պաշտօնական ամսագիր

Հայրապետական Աթոռոյ

Ս. Էջմիածնի

X

1956

215

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԷՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԻՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | Էջ |
|---|---|
| ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Առաջին տարին | 3 |
| Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Վազգեն Ա-ի գահակալության առաջին տարեդարձի առթիվ Վեհափառ Հայրապետի անունով ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները | 9 |
| Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Վազգեն Ա-ի պատասխանները իր գահակալության առաջին տարեդարձի առթիվ ստացված շնորհավորական հեռագրերին ու գրություններին | 19 |
| ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Ռուսական պաշտամունքների խորհրդի նախագահ Իվան Վասիլևիչ Պոլյանսկու մահվան առթիվ փոխանակված հեռագրեր | 21 |
| Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Միաբանության ընդհանուր ժողովի դիվանի հեռագիրը Վեհափառ Հայրապետին | 22 |
| Հանդիսավոր սուրբ պատարագ և մաղթանք Նորին Սուրբ Օծության Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ | 23 |
| Պաշտոնական ընդունելություն և շնորհավորություն Վեհարանի Մեծ դահլիճում Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ | 26 |
| Ճաշկերույթ Վեհարանում Նորին Սուրբ Օծության Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ | 29 |
| Հանդիսակատարություն Հոգևոր Ճեմարանում Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ | 36 |
| ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ— Ոսկեղեն Մեծ Սիոն և Սուրբ Էջմիածին | 42 |
| ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ | 47 |
| ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԹՂԹԱԿԻՑ— Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը Շիրակի թեմում | 50 |
| Սրբոց թարգմանչաց տոնը Հոգևոր Ճեմարանում | 52 |
| Ա. Հ.— Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանն այսօր | 56 |
| Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Վրթանեսյանի մահվան առթիվ փոխանակված հեռագրեր | 62 |
| Հանգիստ Տ. Պարգև եպիսկոպոս Վրթանեսյանի | 63 |
| Աբեղության տվչություն | 64 |
| Մասնավոր վարդապետական իշխանության տվչություն | 66 |
| Հայրապետական բարձր գնահատություն | 71 |


[library stamp]


ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин. Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

[illegible], 1956 թ.




ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. Վ Ա Զ Գ Է Ն Ա.
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ԱՌԱՋԻ՛Ն ՏԱՐԻ՛Ն

Հոկտեմբերի 7-ին, կիրակի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և Հայաստանյայց Առաքելական բոլոր եկեղեցիներում, առատագին ցնծությամբ և խանդավառ մթնոլորտի մեջ, տոնվեց Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսի ընտրության, օծման և գահակալության առաջին տարեդարձը:

Այդ օրը համազգային ուրախության և հոգևոր մխիթարության տոն էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և բոլոր հայ հավատացյալ հոգիների համար:

Հայրապետական գահակալության այդ բարեբաստիկ օրվա առթիվ, բովանդակ հայության սիրտն ու զգացմունքները մի անգամ ևս սևեռվում էին դեպի Ս. Էջմիածին և նրա արժանավոր նոր Գահակալը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անվան ու գոյության հետ կապված ամեն մի դեպք, Ամենայն Հայոց Հայրապետի կյանքի և գործունեության հետ առնչված ամեն մի առիթ, միշտ էլ հանդիսացել է նշանակալից իրադարձություն մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ:

Եվ դա պատահականություն չի եղել երբեք: Հայ հավատացյալ ժողովրդի համար միշտ թանկ ու նվիրական են եղել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անունն ու խորհուրդը և Ամենայն Հայոց Հայրապետի անձնավորությունն ու հեղինակությունը:

Էջմիածնասիրությունը, Ամենայն Հայոց Հայրապետի անձնավորության և հեղինակության հանդեպ ցուցաբերված որդիական նվիրումն ու հարգանքը սրբազան ժառանգությունն է հայ ժողովրդի, նվիրագործված Ս. Գրիգոր Լուսավորչի լուսեղեն տեսիլքով և այդ տեսիլքի պաշտելի ու հավերժական խորհուրդներով: Այդ տեսիլքը անբաժանելի է Ս. Էջմիածնից և Ամենայն Հայոց Հայրապետի բարձր անձնավորությունից ու Քահանայապետական գերագույն իշխանությունից: «Եթէ մոռացայց զքեզ, Էջմիածի՛ն, մոռասցի զիս աջ իմ, կցեսցի լեզու իմ ի քիմս իմ՝ եթէ ոչ յիշեցից զքեզ, եթէ ոչ նախ նուագեցից զքեզ, Էջմիածի՛ն, սկիզբն ուրախութեան իմոյ»: Ահա այսպիսի բուռն ու արտառոց զգացմունքներով է տրոփել Քրիստոնյա հայության սիրտը Ս. Էջմիածնի համար, Ամենայն Հայոց Հայրապետի համար:

Հայ ժողովրդի բոլոր ուրախությունների սկիզբն է հանդիսացել Էջմիածինը: Այսօր էլ նա, Նորընծա Հայրապետի գահակալության առթիվ, դարձել է համազգային ցնծության անսպառ աղբյուր, որովհետև Փրկիչն մեր Հիսուս, Քրիստոնեական հավատի և Եկեղեցու Հիմնադիրն ու Գլուխը, իջել է ի Հայաստան աշխարհ և Հայրենի հողի վրա հաստատել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Մայր Տաճարը, իր աստվածային լույսի, երկնային շնորհների լուսեղեն խորանը, սուրբ կայանը: ԵՎ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՅԴ ԼՈՒՅՍԻ ՈՒ ՇՆՈՐՀԱՑ ՄԵՋ ԿԱԶՄԱՎՈՐՎԵԼ ՈՒ ԶԵՎԱՎՈՐՎԵԼ Է ՄԵՐ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ: «Տեղիդ այդ լիցի Աթոռ Քահանայութեան և տուն աղօթից»: Ս. ԷՋՄԻԱԾԻՆՆ Է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՅՐ ԱԹՈՌԸ, Ի ՎԵՐՈՒՍՏ ՍԱՀՄԱՆՅԱԼ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԿԱՅԱՆԸ:

Այս գաղափարների լույսի տակ, Նորին Ս. Օծությունը Վեհափառ Հայրապետի ընտրությունն ու գահակալությունը Լուսավորչի Աթոռի վրա, անցյալ տարվա այս նույն օրերին, հանդիսացավ մեր ազգային-եկեղեցական պատմության բացառիկ ու անմոռանալի դեպքերից մեկը:

Վեհափառ Հայրապետի ընտրությունը ընդունվեց բովանդակ հայ համաշխարհային ժողովրդի կողմից սրտագին ուրախությամբ, անվերապահ հարգանքով և արտասովոր միաձայնությամբ: Հայրապետական ընտրությունը մի անգամ ևս փաստեց հայ ժողովրդի միասնականության և Հայ Եկեղեցու միության տենչը, հայության սիրո և հարգանքի տենչը դեպի Ս. Էջմիածինը, դեպի նորընտիր Կաթողիկոսը:

Ուշագրավ էր սիրո և համերաշխության այն ոգին, որ իշխում էր ազգային-եկեղեցական պատկառելի ժողովի բոլոր պատգամավորների մեջ: Այդ հանգամանքը ինքնին պերճախոս վկան էր այն մեծ վստահության և ժողովրդականության, որ իրապես և երջանկապես վայելում էր Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը հայ ժողովրդի լայն ու տարբեր խավերում: Ընտրությունը կատարվեց կանոնական ճշտությամբ, ավանդական կարգավորությամբ, և ընդհանուր համերաշխ ու միաձայն հավանությամբ Կաթողիկոս և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ծայրագույն Պետ հռչակվեց Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, քրիստոնեական առաքինություններով և անբասիր կենցաղով հռչակված արքազանը, մեր հավատավոր ու տեսլապաշտ հոգևորականներից մեկը, ժողովրդանվեր և հայրենանվեր մեր ազգային-եկեղեցական դեմքերից մեկը:

Ընտրության, ձեռնադրության, օծման և գահակալության սրտագրավ հանդիսությունները կատարվեցին աննախընթաց շքեղությամբ և ԱԶԳԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԱԶԳԻ ՄԻԱՀԱՄՈՒՌ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԲԱՐՁՐԱՑԱՎ Ս. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՎՐԱ:

Մեր սուրբ հայրապետները մեծ են եղել ու լուսավոր հետք են թողել մեր պատմության մեջ և հայ ժողովրդի երախտագետ սրտում այն չափով, ինչ չափով նրանք ապրել ու առաջնորդել են ժողովրդին աստվածային շնորհաց ուժով, աստվածային ներշնչման ազդեցության տակ և Աստծո սիրով ու ծառայության ոգով, նվիրման խորունկ գիտակցությամբ: «Վասն Յիսուսի, վասն Հայրենեաց»,— ահա այն գիտակցությունը, որով ապրել ու գործել են մեր երախտաշատ հայրապետները և իրագործել իրենց մեծությունը հայ կյանքում:

Եվ ահա այսպիսի գիտակցությամբ, նախնյաց ոգով գահ բարձրացավ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը:

Դեկտեմբերի 1-ին Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը գրեց Իր օրհնության անդրանիկ սրբատառ կոնդակը, որի առաջին տողերից ազգընտիր Հայրապետը սրտագին ուրախությամբ ավետում էր բովանդակ հայության, որ «Վերացավ սգո Քողը Ս. Լուսավորչի Գահի վրայեն և Հայաստանյայց Ս. Եկեղեցին ուրախութեամբ ուրախ եղև Ամենայն Հայոց նոր Հայրապետի ընտրությամբ և գահակալությամբ և «Այսօր, երբ ճամբա կելլենք Մեր հովվական գործը սկսելու, ԿԱՊԱՎԻՆԻՆՔ ԱՍՏՈՒԾՈ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ, ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՎԱՏՔԻՆ ՈՒ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՅԱՑԱԿԱՄՈՒԹՅԱՆ...: Մեր առաջ ճանապարհը բաց է և լուսավոր: Այստե՛ղ, Հայոց աշխարհի երկնքին տակ, կենդանի է հավատքը, կենդանի է Մխիթարիչն ու Փրկիչը մեր Քրիստոս մեր հավատացյալ ժողովրդի սրտին մեջ: Կմնա, որ ինքը Եկեղեցին յարե իր հոգևոր ու իմացական ուժերը և գիտնա օգտվիլ ստեղծված օրինական ու գործնական բարենպաստ պայմաններեն»:

Վեհափառ Հայրապետի այդ կոնդակը միաժամանակ Նրա ապագա գործունեության և ծրագրերի մի ամփոփ խտացումն էր կազմում, գրված քրիստոնեական սիրո և եղբայրության ջերմ շնչով, հայ զգայնությամբ և մտայնությամբ, Ամենայն Հայոց Հայրապետի հատուկ հեղինակությամբ և իմաստությամբ մի սրտագին կոչ՝ ուղղված բովանդակ հայ ժողովրդին, որ ամեն տեղ և ամեն պարագայի մեջ բարձր պահվի մեր Եկեղեցու և ժողովրդի միասնականությունը:

«ԸԼԼԱՆՔ ԱՐԹՈՒՆ, ԸԼԼԱՆՔ ԱՐԴԱՐ, ԸԼԼԱՆՔ ԱՐԻ ԵՎ ՊԱՀԵՆՔ ՄԵՐ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՄԵՐ ԼՈՒՅՍ ՀԱՎԱՏՔԻ ՎԵՄԸ, ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ, ՄԵՐ ՀՈՒՍՈ ԱՄՐՈՑԸ, ՄԵՐ ԱԶԳԻ ՄԱՅՐ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ, ՄԵՐ ՍԻՐՈ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆՍԱՍԱՆ, ԱՄԲՈՂՋ ՈՒ ԱՆԽՌՈՎ» (ընդգծումը խմբագրությանն է):

«Լի հավատքով և հույսով և լավատեսությամբ», Նորընտիր Հայրապետը ձեռնամուխ է լինում աշխատանքի: Նրա առաջին գործերից մին պիտի ըլլա վերակազմակերպել Մայր Աթոռը... վերանորոգել ու վերազարդարել մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, հայրական հոգածությամբ հետևիլ Հոգևոր ճեմարանի մակարդակի

բարձրացման, շարունակել հրատարակությունը Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի և սկսել հրատարակել նաև այլ պարբերականներ և հոգևոր-եկեղեցական գրականության, ի մխիթարություն և ի դաստիարակություն մեր հավատացյալ ժողովրդին, հիմք դնել հոգևոր կաճառի մը, մեր եկեղեցին օժտել Սահմանադրությամբ մը և կանոնագրով մը, համաձայն հայրապետահաստատ կանոններու և մեր սուրբ ավանդության»:

Մի տարի է անցել այն ընտրությունից. և ի՞նչ է մի տարին ժամանակի ու հավիտենականության առաջ. բայց այդ կարճ ժամանակում էլ, Նորին Ս. Օծության գահակալությունից հետո, կատարվեցին «գործք արութեան, արժանի գրոց յիշատակութեան»:

Նորին Ս. Օծության մի տարվա գործունեությունը ընդգրկում է ընդարձակ հորիզոններ: Անցնող այդ մի տարին լի է եղել շինարարական, կազմակերպչական, վանական-վարչական ոգևորիչ և բեղմնավոր իրագործումներով, խանդավառ հեռանկարներով:

Շուտով անցան Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման, կաթողիկոսական ձեռնադրության և օծման հանդիսությունների պատմական ու անմոռանալի օրերը: Մայր Աթոռը նորից ներամփոփվեց իր վանական խաղաղ շրջանակի մեջ: Նորընտիր Հայրապետը երիտասարդական կորովով, իրեն հատուկ հետևողականությամբ և գործիմացությամբ, առաջին իսկ օրից ձեռնամուխ եղավ Մայր Աթոռի հոգևոր, վանական, մշակութային, տնտեսական կյանքի վերակառուցման աշխատանքներին: Գերագույն Հոգևոր Խորհրդի հետ խորհրդակցաբար կազմվեց Մայր Աթոռի Միաբանական կանոնադրությունը 30 հոդվածներից բաղկացած, որպեսզի Մայր Աթոռը իրապես դառնա Վեհափառ Հայրապետի գեղեցիկ բնորոշմամբ և ցանկությամբ՝ «կրոնական հաստատություն մը, ուր ի Քրիստոս սիրով միաբանած հոգևորականներ ապրին համայնական կյանքով, ուխտած լինելով անձնվիրաբար ծառայել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, ժուժկալության, աղքատության և անպայման հնազանդության հայրապետահաստատ կանոններուն համաձայն»:

Նորընտիր Հայրապետի հրամանով և կարգադրությամբ կազմակերպվեց միաբանական ընդհանուր սեղան, առողջ ու խաղաղ հիմքերի վրա դրվեց միաբանական կյանքը, մեծ ու հայրական հոգատարություն ցուցաբերվեց դեպի երիտասարդ միաբանները, զարկ տրվեց նրանց միջոցով և մասնակցությամբ կատարվող քարոզչության: Վեհափառ Հայրապետի անմիջական հսկողությամբ վերակազմակերպվեցին Մայր Տաճարին կից եկեղեցական-հնագիտական թանգարանը, Մայր Աթոռի դիվանատունը, հաշվապահությունը: Վերակառուցվեցին «Էջմիածին» ամսագրի խմբագրական և Հոգևոր Ճեմարանի ուսումնա-դաստիարակչական աշխատանքները: Ուրախությամբ ենք արձանագրում այստեղ այն հուսադրիչ փաստը, որ այսօր մեր ներքին բոլոր թեմերում՝ Շիրակի, Վրաստանի, Ադրբեջանի, Նոր-Նախիջևանի, Մոսկվայի, առաջնորդական և փոխ-առաջնորդական արդյունավետ և օգտակար աշխատանքներ են տանում Մայր Աթոռի երիտասարդ միաբաններից և Ճեմարանավարտներից՝ հոգեշնորհ Տ. Կոմիտաս, Տ. Վահան, Տ. Տիրայր, Տ. Հայրիկ, Տ. Գարեգին վարդապետները, Վեհափառ Հայրապետի ցուցմունքներով և հրահանգներով: Իսկ Մայր Աթոռում, Հոգևոր Ճեմարանում, ամսագրում շնորհակալ տարբեր աշխատանքներ են կատարում Վեհափառ Հայրապետի անմիջական հսկողությամբ և ղեկավարությամբ հոգեշնորհ Տ. Մեսրոպ, Տ. Եղիշե, Տ. Մուշեղ, Տ. Խորեն, Տ. Նահապետ վարդապետները ու հոգեշնորհ Տ. Մաշտոց, Տ. Հարություն և Տ. Հուսիկ աբեղաները:

Այս բոլոր բազմազան աշխատանքների մեջ, ծրագրվեց և սկսվեց Մայր Աթոռի, վանքերի ու եկեղեցիների վերանորոգման և շինարարության ծավալուն աշխատանք: Մայր Տաճարը գեղեցկորեն մարմարապատվեց. Տաճարի շրջափակը սալահատակվեց, երթուղիները ասֆալտապատվեցին և մինչև այսօր էլ շարունակվում են շինարարական աշխատանքները Մայր Աթոռում և մյուս վանքերում:

Մայր Աթոռի հոգևոր-վանական, մշակութային ու տնտեսական, շինարարական ու վերանորոգչական աշխատանքների հետ միաժամանակ, Նորընտիր Վեհափառ Հայրապետի տեսադաշտից երբեք դուրս չէին մնացել Սփյուռքի մեր եկեղեցական թեմերի կազմակերպության ծանր ու պատասխանատու աշխատանքները, մեր եկեղեցական թեմերի կենդանի հարաբերության և սերտ համագործակցության կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Նորընտիր Հայրապետի հետ: Այս շատ կարևոր հարց էր, որը առաջին իսկ օրից գրավել էր Վեհափառ Հայրապետի ուշադրությունը, որովհետև Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետությունը և նրան ենթակա մեր նվիրապետական մյուս Աթոռները՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքությունները և մեր բոլոր թեմերը կազմում են անքակտելի մի ամբողջություն.

և նրանց փոխհարաբերությամբ էլ բնորոշվում է մեր ազգային-եկեղեցական միասնությունը:

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, կազմակերպելու համար Սփյուռքի բեմերը և էլ ավելի ամրապնդելու, սերտացնելու համար կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և մեր նվիրապետական մյուս Աթոռների և բեմերի միջև, 1956 թվականի փետրվար—մայիս ամիսներին արտասահմանում կատարեց հովվապետական այցելություն, որը մեծ իրադարձություն հանդիսացավ Սփյուռքի հայության ազգային-եկեղեցական կյանքում: Նորին Ս. Օծությունը արտասահմանում Իր հավատացյալ և հայրենասեր զավակների կողմից առավ փառավոր և ոգեշունչ ընդունելություն: Վեհափառ Հայրապետը եղավ Լիբանանում, Եգիպտոսում, Իտալիայում, Ֆրանսիայում, Անգլիայում:

Նորին Ս. Օծության արտասահմանյան ուղևորության օրերը կմնան մեր նորագույն ազգային-եկեղեցական պատմության մեջ որպես հիշատակելի և անմոռանալի օրեր:

Վեհափառ Հայրապետը Սփյուռքում, Իր հայրենակարոտ և հավատացյալ ժողովրդի ծոցում հայտնվեց որպես կենդանի էջմիածին, Ս. Էջմիածնի անվան ու խորհրդի մարմնացումը, մեր ազգային-եկեղեցական միասնության խոսուն խորհրդանշանը, խաղաղության աղավնին, որ Իր հավատի ջերմությամբ, լավատեսությամբ, հայրենաբույր պատգամներով, Ս. Էջմիածնի հազարամյա Տաճարի խորհրդով և օրհնությամբ, Մայր Հայրենիքի կենսանորոգ ողջույնով և սիրով բոցավառեց, ջերմացրեց, լուսավորեց Իր զավակների հոգիները: Սփյուռքի հայությունը զգաց մի անգամ ևս, որ Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետությունը ինչպես միշտ, այսօր էլ հանդիսանում է հայոց հավատի երևելի սյունը և այն հոգևոր կամուրջը, որ կապում է ի սփյուռս աշխարհի ցրված հայությունը իր Մայր Երկրի հետ: Վեհափառ Հայրապետի այս շնորհաբեր այցելությամբ էլ ավելի խորացավ հայ ժողովրդի սերն ու հավատարմությունը դեպի հայ հավատի խարիսխ ու կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Նրա արժանավոր Գահակալը:

Առանձնապես հիշատակության արժանի է Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի արտասահման գտնված ժամանակ Նրա բարձր Նախագահությամբ մարտ ամսի 5—8-ին Կահիրեում գումարված ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ, որը շատ կարևոր և պատմական նշանակություն ունեցող իրադարձություն հանդիսացավ մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ, իր նվիրապետական ամբողջ ներկայացուցչությամբ, օրակարգում դրված եկեղեցական կարևոր հարցերով և ժողովում ընդունված համապատասխան վճռական որոշումներով:

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ գումարված Կահիրեի Եպիսկոպոսական ժողովում որոշվեց կազմել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սահմանադրություն և Կանոնագիրք, Աստվածաշնչի տպագրության 300-ամյակի առթիվ կատարել Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանություն ու տպագրություն և ձեռնարկել Հայաստանյայց Եկեղեցու բարեկարգություն:

Եպիսկոպոսական ժողովը զբաղվեց նաև կարգապահական-կանոնական հարցերով. որոշվեց վանքերից դուրս կուսակրոն եկեղեցականներ չձեռնադրել, առանց բեմակալ առաջնորդների հավանության ուրիշ բեմերից եկեղեցականներ չընդունել, այլ բեմերի համար քահանաներ չձեռնադրել, առանց պատկանյալ բեմի հոգևոր իշխանության հավանության, կարգաթող կամ դասալիք և կարգալույծ հոգևորականներին չվերահաստատել իրենց կարգի մեջ առանց իրավասու հոգևոր իշխանության հրամանին, ծիսարանը ենթարկել վերաքննության, մասնակցել համաշխարհային միջեկեղեցական ժողովներին և այլն:

Ամենայն Հայոց Հայրապետի արտասահմանյան ուղևորությունը կարևոր նշանակություն ունեցող իրադարձություն հանդիսացավ նաև միջազգային եկեղեցական կյանքում: Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը արտասահմանյան Իր ուղևորության ժամանակ արժանացավ նաև քրիստոնեական քույր եկեղեցիների հոգևոր պետերի և կառավարական բարձրաստիճան անձնավորությունների ջերմ ու սիրալիր ընդունելության: Հիշատակության արժանի է նույնպես Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի տեսակցությունը մայիսի 12-ին, Կրեմլում, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ պ. Ն. Ա. Բուլգանինի հետ: Կրեմլի պալատում Վեհափառ Հայրապետը արժանացավ ջերմ ընդունելության և պ. Ն. Ա. Բուլգանինի հետ ունեցավ մի ժամ տևող սիրալիր տեսակցություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը կարևոր դիմումնագրեր ներկայացրեց մեր ազգային-եկեղեցական կյանքի վերաբերյալ հարցերի կապակցությամբ: Այս առթիվ Վեհափառ Հայրապետը մեծարգո Վարչապետին ներկայացրեց Սփյուռքի հայրենաբաղձ հայ ժողովրդի բոցավառ ողջույնը, երախտագիտությունը հանդեպ ռուս ժողովրդի ու Սովետական իշխանության, ինչպես նաև Նրա բաղձանքներն ու արդար իղձերը:

Նորին Վսեմություն պ. Ն. Ա. Բուլգանինը մեծ ուշադրությամբ և համակրանքով լսեց Նորին Ս. Օծության սրտագին խոսքերը, ասաց, որ Ինքը և Սովետական կառավարությունը ամենայն բարյացակամությամբ ուշադրության կառնեն Հայ Եկեղեցու հետ կապված հարցերը, ի բավարարումն հայ ժողովրդի հոգևոր-ազգային բաղձանքների։

Արդարև, Հայ Եկեղեցին, հայ ժողովուրդը, ունեն մի անկեղծ և սրտագին բարեկամ, դա ռուս մեծ և ազնիվ ժողովուրդն է և նրա հարազատ Հայրենի կառավարությունը։

Մայիսի կեսերին, իր եռամսյա բացակայությունից հետո, Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը և պաշտոնապես հայտարարեց. «Արտասահմանի մեջ Մենք զգացինք մեր ժողովրդի սերն ու նվիրվածությունը Մեզ հանդեպ։ Մենք ոչ ոքե ոչինչ խնդրեցինք, բայց Մեզի ամեն բան տրվեցավ։ Մեր ժողովուրդը ինքզինք հանձնեց Մեզի, կրնանք ըսել, և վստահ եղեք, որ ծայրահեղ կամ չափազանցված խոսք մը ըսած չենք ըլլար, եթե հայտարարենք, որ մեր ժողովուրդը ամբողջապես նվիրված է Մայր Հայրենիքին և Մայր Աթոռին և Ամենայն Հայոց Հայրապետին։ Մեզմե սկսած և մինչև մեր ամենահամեստ սարկավագը կամ եկեղեցվո սպասավորը, հուսախաբ պետք չէ ընենք մեր Հայրենիքը, մեր ժողովրդի զգացումներ և մտածումներ մեզի նկատմամբ։ Առավելագույն եռանդով պետք է մեր աշխատանքը շարունակենք նորանոր հաջողություններ ձեռք բերելու համար, ի շինություն և ի հաստատություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո, ի վերակազմակերպություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և ի մխիթարություն համայն հայ ժողովրդին»։

Մայիսի 26-ին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ ըն. Ա. Ե. Քոչինյանը, Երևանի Կառավարական Տան մեջ, ընդունեց Ամենայն Հայոց Հայրապետի պաշտոնական այցելությունը։

Վեհափառ Հայրապետը, Նորին Վսեմություն պ. Ա. Ե. Քոչինյանի հետ իր ունեցած տեսակցության ժամանակ, Հայրենի հարազատ կառավարության ներկայացրեց Սփյուռքի հայրենասեր հայ ժողովրդի բոցավառ ողջույնը, սիրո ու հավատարմության զգացմունքները, ինչպես և նրա արդար իղձերը և ավելացրեց. «Հայ ժողովուրդը արտասահմանի մեջ իր հոգվույն մեջ վառ կպահե ամենաջերմ հայրենասիրությունը և իղձը՝ երջանիկ օր մը գալու Մայր Երկիր, իր հավատագիրը վերջնականապես կապելու հայ ժողովրդի վերածնված նոր Հայրենիքին։ Հավատքը դեպի Ս. Էջմիածին և Մայր Հայրենիքի գաղափարը՝ խարիսխ զգացումներ են Սփյուռքի հայության հոգվույն մեջ, և միաժամանակ անոնց կենսունության աղբյուրը»։

Վեհափառ Հայրապետի Մայր Աթոռ վերադառնալուց հետո, նոր թափ ու շունչ ստացան Մայր Աթոռի միաբանական-վանական, հոգևոր-մշակութային, տնտեսական-շինարարական աշխատանքները։ Վեհափառ Հայրապետի գահակալությունը և մեկ տարվա ազգային-եկեղեցական գործունեությունը գեղեցիկ ու խանդավառ վկայությունն է այն բանի, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար ստեղծվել է հոգևոր վերազարթոնքի, ազգային-եկեղեցական կազմակերպության մի նոր ու խոստումնալից շրջան և Վեհափառ Հայրապետի գահակալությունը Լուսավորչի պատմական Աթոռի վրա կոչված է լինելու մեր եկեղեցական պատմության գեղեցկագույն և արդյունաշատ էջերից մեկը։

Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ բովանդակ հայ ժողովրդի սրտագին մաղթանքն է, որ Լուսավորչի Աթոռի վրա Նրա գահակալությունը լինի երկարատև և արդյունավետ, ի շինություն և ի ծաղկումն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի։

Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ մեր Եկեղեցին, մեր հավատացյալ ժողովուրդը, որդիական հնազանդությամբ և ակնածանքով պիտի լսեն Վեհափառ Հայրապետի հայրական սիրո զգացմունքներով գեղուն ջերմագին ՊԱՏԳԱՄԸ ու ԿՈՉԸ.

«ԿՈՉ ԿՈՒՂՂԵՆՔ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ, ՄՆԱԼ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄԵՐ ՊԱՊԵՐՈՒ ԼՈՒՅՍ ՀԱՎԱՏՔԻՆ, ԵՐԿՅՈՒՂԱԾՈՒԹՅԱՄԲ ՊԱՀՊԱՆԵԼ ՄԵՐ ՆՎԻՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԵՐ ՀՐԱՇԱՔԱՆՉ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ, ՑԱՐԴ ՏԱԼ ՀԱՅ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻՆ..., ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՋ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՀԵԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆԱԴԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԱՐ ԻՂՁԵՐՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՀՈՒՅՍԸ» *(Վեհափառ Հայրապետի Անդրանիկ կոնդակից)*։

«Մեր օրերում կպայծառակերպվի մեր Ս. Եկեղեցին, հավատքը կվերածնի, հոգիները կմանկանան, Քրիստոսի Ս. Ավետարանը նոր ջերմությամբ և քաղցրությամբ կլեցնե բոլոր դատարկ սրտերը։ Լո՜ւյս, պայծառ լո՜ւյս կիջնի Հայաստանյայց վրա «Մերոյ լուսաւորչեան վերակացու» մեծ Լուսավորչի անմար կանթեղեն։

Երանի՜ թէ կարենայինք նոյն հանգնալ ու տեսնել այս խմանայի լոյսը, որ սկսած է գալիք, և մենք մեր ծնունդով լայն բանայինք մեր հոգիներու լուսամուտները, ավելի շատ և ավելի լիությամբ ընդունելու համար զայն:

Մեր քաղաքականությանը, Մեր համայնքը, ըն կաղապարությունով Ս. Էջմիածինը կ'ելլէ նախ Մեր ներքին տարածքն ու կենտրոնին այն հավատքի զգացումին վրա, որ ամենակարևոր գործ Միջնորդ ըլլալ և ջերմությամբ սկսած է բարեշեն մեր ժողովուրդի լայն զանգվածներու հոգիներ:

Այս Մենք հաստատում կանենք Ճշմարտությունը այն սրբազան սերն և հավատարմության, որով տոգորված է մեր Ազգը ըն՛ այստեղ, ըն՛ Սփյուռքի մեջ, ցեղի իր սուրբ հավատքի կեղոնը՝ անձեռ կառոյ հույսը Ս. Էջմիածինը:

ԱՅՍՏԵ՞Ղ ՀԱՅՏՆՎԱԾ Է ԱՌՏՎԱԾ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ. ԵՎ ԱՅՍՏԵՂ Է ԸՆՎԱԾ ՆՈՒՅՆԸ.

ԱՅՍՏԵՂԻ՞Ն ԿՈՉՈՒՄ ՄԵԶ ՀԱՄԱՐ «ՃԱՆԱՊԱՐՀԸ, ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ» ՀՈԳԻՆԵՐՈՒ:

«ՄԻԱԾԻՆԸ ՄԵԶ ԿԲԱՑՆՎԻ ԷՋՄԻԱԾՆՈՎ» *(Վեհափառ Հայրապետի հայիսի 15-ին Մայր Տաճարում խոսած քարոզից, «Էջմիածին», 1956 թ., № VII)։*

«Հայ հավատացյա՛լ ժողովուրդ, ո՛ւր որ ալ գտնվիս, հարազատ Հայրենի հողի վրա կամ օտար երկինքներու տակ, անշարժ կանգնած մեր նախնյաց սուրբ հավատքի վեմին վրա, հավատա՛, մխիթարվի՛ր ու բոլոր կենդանի ուժերդ և միության կենսատու ոգիով զորացնելով, շինե՛, զորացրո՛ւ, ծաղկեցրո՛ւ քու Մայր Եկեղեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի. հավատքդ սնված ըլլայ մեր Ազգի սպայծառ ապագան» *(Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ, հոկտեմբերի 7-ի պաշտոնական ընդունելության ընթացքում Ստորին դահլիճում արտասանած խոսքից)։*

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի անունից և անձամբ իմ անունից խնդրում եմ ընդունել ջերմագին շնորհավորանքներ Ձեր գահակալության առաջին տարեդարձի առթիվ: Ի սրտե ցանկանում եմ Ձեզ հաջառողջություն և բեղմնավոր գործունեություն հանուն ժողովուրդների բարեկամության, խաղաղ ու երջանիկ կյանքի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
**ՀՐԱՉՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ

---

Կոստանդնուպոլսից Թյուրքիայի Հայոց Պատրիարքը՝ ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյան, իր նոյեմբեր 17 թվակիր հատուկ նամակով, սրտագինս շնորհավորում է Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի գահակալության առաջին տարեդարձը:

---

Սուրբ Օծությանդ գահակալության առաջին տարեդարձի առթիվ հաճեցե՛ք ընդունիլ իմ և առաջնորդական վիճակիս հոգևորական դասու և տնօրեն մարմիններու և համայն ժողովրդյան սրտագին մաղթանքները հաջողության և արևշատության: Տերը անսասան պահե Մայր Աթոռը:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ՝
**ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱԼՖԱՅԱՆ**

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

Ձեր հայրապետական ընտրության անդրանիկ տարեդարձին թեմիս եկեղեցիներում մեջ կատարվեց հատուկ մաղթանք, աղոթեցինք Ձեր թանկագին կյանքի արևշատության և գործոց հաջողության համար: Ողջունելով մեր շնորհավորությունը, հայցում ենք Ձեր Հայրական օրհնությունը:

ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՖՐԵԶՆՈ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

---

Ողջունում եմ Ձերդ Սրբության գահակալության առաջին տարեդարձը, ցանկանում եմ Ձեզ կատարյալ առողջություն և բեղմնավոր աշխատանքի հաջողություն:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔՈՐՈՍՅԱՆ

ԿԱՅՐՈ

---

Ձեր ընտրության և գահակալության առաջին տարեդարձի առթիվ կներկայացնենք Ձերդ Ս. Օծության մեր սրտագին շնորհավորություններն և որդիական հնազանդությունը: Թող Աստված Ձեզ շնորհե երկար և բեղմնավոր տարիներ: Կաղոթենք Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Եկեղեցվո սուրբ միության համար: Անգլիո համայնքը իր աղոթքներով կմիանա ինձ:

Հայրապետական պատվիրակ Անգլիո հայոց
ԳՈՒՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՅԱՆ

ԼՈՆԴՈՆ

---

Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմական խորհուրդը, եկեղեցական խորհուրդները, հոգևոր դասը և հավատացյալ ժողովուրդը շնորհավորում են Ձերդ Սրբության ընտրության և օծման առաջին տարեդարձը: Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, արևշատություն և երկար տարիների բեղմնավոր գործունեություն՝ ի բարօրություն մեր վերածնված Հայրենիքի, եկեղեցու և հայ ժողովրդի:

Թեմակալ առաջնորդ
ԳԱՐԵԳԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈՍՏՈՎ

---

Հանուն Կեդրոնական վարչության և հավատացյալ ժողովրդի, Վեհափառությանդ գահակալության տարեդարձին առթիվ կուզամ արևշատություն մաղթել, որպեսզի շնորհազարդ պայծառանա դավազանն իշխանության Հայրապետից:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՇՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

---

Ես և մանկունք իմ, հանուն Պալերմոյի Սուրբ Խաչ եկեղեցվո, կուզենք արևշատություն մաղթել Վեհափառությանդ գահակալության առաջին տարեդարձին առթիվ:

ԳՈՒՐԳԵՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԱՇՃՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

---

Սիրակի, 7 Նոյեմբեր, հետ հանդիսավոր սուրբ պատարագի, մատուռին մեջ տեղի ունեցավ Հայրապետական մաղթանք, ի ներկայության գաղութիս ստվար բազմության: Այնուհետև խոսեցան Էջմիածնի դերին մասին և տվին Վեհափառությանդ կենսագրության մանրամասնություններ. Բաժնեցավ «Էջմիածին» հանդեսը:

Ներկաներ գոհ տպավորություն կրեցին ու մեզ հետ կմասնակցին ի համբույր Ձեր Ս. Աջին, շնորհավորելով իրենց Վեհափառը ու աղոթելով, որ Տերը Ձերդ Ս. Օծության պարգևե երկար ու առողջ տարիներ, անսասան և անշարժ պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Փառաբանեցին «Շնորհազարդ պայծառացո զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին» բնաբանով:

Հոգևոր հովիվ Վիեննայի հայոց՝
ԵՂԻՇԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԹՈՒՃՅԱՆ.

ՎԻԵՆՆԱ

---

Ձեր Երջանիկ օծման առաջին տարեդարձի առթիվ ընդունեցեք Շիրակի թեմի հավատացյալների, Լենինականից զատ և անձամբ մեր ջերմ ու սրտագին շնորհավորանքները:

Մեր եկեղեցիներում այդ օրը մենք բազում աղոթեցինք, որ մի տարի առաջ Ձեր վրա իջած Ս. Հոգին լինի Ձեզ պահապան ու առաջնորդի Ձեր բոլոր ազգօգուտ գործերին:

Երկար ու բեղուն տարիներ Ձեր հովանին անպակաս լինի մեր ժողովրդի վրայից:

Շիրակի թեմի Առաջնորդական տեղապահ՝
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ
Ե ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ

ԼԵՆԻՆԱԿԱՆ

---

Հաճեցեք ընդունել շնորհավորություններս Վեհափառությանդ գահակալության տարեդարձին առթիվ:

ՆԵՐՍԵՍ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ.

ԼՈՆԴՈՆ

---

Ձերդ Ս. Օծության առաջին տարեդարձին առթիվ կմաղթենք առողջություն և երկար կյանք:

ԷԴՎԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ.

ԿԼԻՎԼԵՆԴ, ՕՀԱՅՈ

---

Խնդրեմ ընդունեցեք շնորհավորություններս Ձեր բարեբաստիկ գահակալության առաջին տարեդարձին առթիվ:

Մաղթելով Վեհիդ երկար և առողջ կյանք՝

Ա. Գ. ՅԱԶԸՃՅԱՆ.

ՖՐԵԶՆՈ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

---

Կշնորհավորենք Ձեր գահակալության առաջին տարին: Առողջություն, կարողություն, հաջողություն:

ՄՈՎՍԵՍ ՄՈՎՍԵՍՅԱՆ.

ՖՐԵԶՆՈ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

---

Սրտագին շնորհավորություններ գահակալության առաջին տարեդարձի առթիվ մեծ և սիրելի Առաջնորդից ու Հայրենասերից:

ՀԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ

ՅՈՒՆԻՈՆԹԱՈՒՆ, ՓԵՆՍԻԼՎԱՆԻԱ

---

Ձեր Վեհափառության օծման առաջին տարեդարձին առթիվ հաճեցեք ընդունել մեր շնորհավորությունները:

ԽՈՐԵՆ ԴԱՎԻԹՅԱՆ,
ՀԱՐՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՖՐԵԶՆՈ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

---

Ձերդ Սրբության օծման տարեդարձին առթիվ ընդունեցեք մեր կրոնական ջերմագին մաղթանքները:

ՅԱԿՈԲՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԿԱՀԻՐԵ

---

Ձերդ Սրբության գահակալության առաջին տարեդարձին առթիվ Ռումանահայ հավատացյալ ժողովուրդը և Խորհուրդս ջերմագին կշնորհավորենք Ձեզ և կմաղթենք առողջություն և կորով, ի կատար հանելու համար Ձեր ծանր, բայց շինարար պաշտոնավարությունը: Սուրբ Էջմիածինը մնա միշտ կանգուն և անսասանելի:

ՌՈՒՄԱՆԻԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՒԽԱՐԵՍՏ

---

Լոս Անջելոսի հայոց Եկեղեցվո հովիվը, հոգաբարձությունը, եկեղեցական կազմակերպությունները և հոգևորական դասը, Ձերդ Ս. Օծության գահակալության առաջին տարեդարձին առթիվ, կհղեն իրենց անկեղծ շնորհավորությունները ու լավագույն ցանկությունները: Թող Աստված Ձեզ շնորհե քաջառողջություն և խաղաղ ու երջանիկ կյանք:

Հովիվ՝
ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՎԻՇՅԱՆ
Հոգաբարձության ատենապետ՝
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՅՈՒՐՔՃՅԱՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍ

---

Ձերդ Վեհափառության օծման և գահակալության առաջին տարեդարձին առթիվ, Ս. Սարգիս Եկեղեցու քահանայական դասը և հոգաբարձությունը, հանգերձ հավատացյալներով, կբարեմաղթենք երկար կյանք և առողջություն:

Եկեղեցական Խորհրդի կողմից՝
ՀՈՎՍԵՓ ՔԱՀԱՆԱ ՔՅՈՍԵՅԱՆ,
ՍԻՄՈՆ ԹԱԹԱՋԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

---

Ձերդ Սրբության օծման տարեդարձի առթիվ Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու քահանայից դասը և ծխական խորհուրդը անկեղծ սրտով շնորհավորում են Ձեզ և ցանկանում են արևշատություն:

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ,
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

---

Ձեր գահակալության առաջին տարեդարձի առթիվ, կիրակի, նոյեմբերի 7-ին, կատարեցինք Հայրապետական մաղթանք Ս. Սարգիս եկեղեցում ի ներկայության դպրոցական աշակերտների, պաշտոնական անձանց և հավատացյալ հոծ բազմության:

Առաջնորդական տեղապահ՝
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԹԱՎՐԻԶ

---

Ձերդ Ս. Օծության գահակալության առաջին տարեդարձին առթիվ Կալիֆորնիայի Ֆառլըր քաղաքի հայոց Ս. Գրիգոր Եկեղեցվո հովիվը, հոգաբարձությունը, եկեղեցական կազմակերպությունները և հոգևորականությունը կհայտնեն իրենց որդիական հարգանքները ու շնորհավորությունները: Կաղոթենք, որպեսզի Աստված Ձեզ շնորհե քաջառողջություն և արևոտ օրեր:

Հովիվ
ՇԱՀԵ ՔԱՀԱՆԱ ՍԵՄԵՐՃՅԱՆ
Հոգաբարձության ատենապետ՝
ԱՐՄԵՆ ՔԱՆՏԱՐՅԱՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

---

Շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության օծման և գահակալության առաջին տարեդարձը: Մաղթում ենք արևշատություն և հաջողություն:

Ի դիմաց Սոֆիայի Եկեղեցական վարչության՝
Ատենապետ՝ ՀԱՅՐԱՊԵՏ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ
Ատենադպիր՝ ՀԱԿՈԲ ՊԱԼՅԱՆ

ՍՈՖԻԱ

---

Վառնայի Եկեղեցական վարչության, պաշտոնէից, հայ հավատացյալ ժողովրդի և իմ անունեն ընդունեցեք մեր սրտագին շնորհավորությունները Ձերդ Վեհափառության գահակալության առաջին տարեդարձի առթիվ: Կմաղթենք Ձեզ երկար կյանք՝ ի բարօրություն Եկեղեցվո, Հայրենիքի և հօգուտ համայն մարդկության խաղաղության սուրբ գործին:

Ատենապետ՝
ԼԵՎՈՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՎԱՌՆԱ

---

Հնդկահայերը խորին հարգանքով շնորհավորում են Ձերդ Վեհափառության ընտրության և օծման առաջին տարեդարձը, մաղթելով Ձերդ Վեհափառության արևշատություն և Ս. Էջմիածնին՝ անսասանություն:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱԼԿԱԹԱ

---

Ձեր կաթողիկոսական սուրբ օծման տարեդարձի առթիվ Թբիլիսիի հայ հավատացյալները, ծխական խորհրդի անդամները և քահանաները հայտնում ենք մեր սրտագին ջերմ շնորհավորությունները և ցանկանում ենք Ձերդ Վեհափառության երկար և բեղմնավոր կյանք, պարզավանում Հայրենիքին և հաստատություն Մայր Աթոռին:

ԶԱՐԵՀ ՔԱՀԱՆԱ ԲԱՐԱՄՅԱՆ

ԹԲԻԼԻՍԻ

---

Ձեր սուրբ օծման առաջին տարեդարձի կապակցությամբ Բաքվի ծխական խորհուրդը, քահանայական դասը և հավատացյալ համայնքը մաղթում են Ձեզ երկար կյանք, անսպառ եռանդ՝ կյանքի կոչելու Ձեր բոլոր իղձերը, հօգուտ Հայրենիքի և Հայաստանյայց Եկեղեցու:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԱՔՈՒ

---

Ձերդ Սրբության գահակալության առաջին տարեդարձի առթիվ Ռոստովի հայոց Մայր Եկեղեցու խորհուրդը, բոլոր հավատացյալները ամբողջ հոգով ողջունում են Ձեզ և ցանկանում երկար կյանք՝ ի բարօրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հայ հավատացյալ ժողովրդի:

Եկեղեցական խորհրդի նախագահ՝
ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՌՈՍՏՈՎ

---

Ձերդ Սրբության օծման տարեդարձին առթիվ շնորհավորում ենք Ձեզ. ցանկանում ենք առողջություն և երկար կյանք:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
և ՀՈՒՍԻԿ ՔԱՀԱՆԱ ՋՀԱՆԴՈՒՂՅԱՆ

ՌՈՍՏՈՎ

---

Շնորհավորում ենք Ձերդ Ս. Օծության գահակալության առաջին տարեդարձը, մաղթում ենք հաջողություն և արևշատություն՝ ի փառս հայ ժողովրդի և ամբողջ աշխարհի խաղաղության համար:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
և ԱՎԱԳԵՐԵՑ ՀԱՅԿԱԶ ՔԱՀԱՆԱ ԽՈՒԽՈՒՅԱՆ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆ

---

Կիրովաբադի հայոց եկեղեցու խորհուրդը և հոգևոր դասը ողջունում են Ձերդ Սրբության գահակալության առաջին տարեդարձը, մաղթելով հաջողություն և արևշատություն՝ ի փառս հայ ժողովրդի:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԻՐՈՎԱԲԱԴ

---

Շնորհավորում ենք Ձեր բարեբաստիկ գահակալության առաջին տարեդարձը ի փառս Հայ Եկեղեցու: Հավատացյալ համայնքի հետ միասին ջերմորեն աղոթում ենք առ Աստված Ձերդ Սրբության արևշատության և հաջողության համար:

Հայոց եկեղեցու ավագերեց՝
ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԹԱՎԱՐԻԿՅԱՆ

ՕՐՋՈՆԻԿԻՁԵ

---

Օրջոնիկիձեի հայ հավատացյալ համայնքի, եկեղեցական խորհրդի և անձամբ իմ կողմից շնորհավորում եմ Ձերդ Սրբության գահակալության տարեդարձը իբրև Հայ Եկեղեցու Գերագույն Պետի: Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և արևշատություն՝ ի փառս Մայր Աթոռի բարգավաճման:

Եկեղեցական խորհրդի նախագահ՝
ԹԵԴԼԱՐՅԱՆ

ՕՐՋՈՆԻԿԻՁԵ

---

Հայ համայնքի անունից ընդունեցեք մեր անկեղծ շնորհավորանքները Ձեր գահակալության առթիվ: Ամբողջ սրտով ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և երկար տարիների կյանք՝ ի փառս հայ ժողովրդի, Սովետական Հայրենիքի և խաղաղության:

Եկեղեցու ավագերեց՝ ՏԵՐ ՀԱԿՈԲ
և ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՂԶԼԱՐ

---

Շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության գահակալության առաջին տարեդարձը, ցանկանում ենք քաջառողջություն և երկար կյանք:

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍ.
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
և ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ

ԱՐՄԱՎԻՐ

---

Ձեր կաթողիկոսական ընտրության առաջին տարեդարձի առթիվ ընդունեցեք մեր անկեղծ շնորհավորանքները: Ցանկանում ենք երկար տարիների համար քաջառողջություն:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱԽԱԼՑԽԱՅԻ ՇՐՋԱՆԻ
ՅԱՐՈՒԹ ԳՅՈՒՂԻ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ

ԱԽԱԼՑԽԱ

---

Բուդյոննովսկու հայ հավատացյալ համայնքը, եկեղեցական խորհուրդը և քահանայից դասը շնորհավորում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության և օծման առաջին տարեդարձը, մաղթելով Ձերդ Վեհափառությանը երկար տարիների կյանք՝ ի փառս և ի պայծառություն եկեղեցու:

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՔԱՀԱՆԱ ՔՅՈԽՎԱՅԱՆ

ԲՈՒԴՅՈՆՈՎՍԿ

---

Դեպի Ձեզ տածած անհուն սիրո և հպարտության խորին զգացմունքով, Կրասնոդարի հայ հավատացյալների, եկեղեցական խորհրդի և անձամբ իմ անունից շնորհավորում ենք Ձերդ Սրբության գահակալության առաջին տարեդարձը: Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն, երկար տարիների բեղմնավոր գործունեություն՝ ի փառս եկեղեցու և հայ ժողովրդի:

ԳԱՐԵԳԻՆ ՔԱՀԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿՐԱՍՆՈԴԱՐ

---

Հոգևոր հովիվ, բարգավաճություն և ֆիզիքական առողջության ուրախությամբ կողջունենք Վեհափառիդ գահակալության երջանիկ տարեդարձը, որդիական սրտագին շնորհավորանքներով, արևշատության մաղթանքներով, օծյալ և Ս. Աջույդ համբույրներով:

ԱՐՍԵՆ ՔԱՀԱՆԱ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

ՏՈՔՃԱՆ

---

Ձերդ Վեհափառության գահակալության առաջին տարեդարձի բարեբաստիկ և ուրախ առիթով թույլ տվեք ինձ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի երգչախմբի կողմից հայտնելու որդիական անկեղծ շնորհավորություններ և բարեմաղթություններ, հայցելով ի Տյառնե Ձերդ Ս. Օծության համար երկար տարիների կյանք և արդյունավետ գործունեություն՝ ի փառս մեր սիրելի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու:

ՀՐԱՆՏ ԴԵՎԼՈՐԴՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

---

«Շարժում»-ի և ընթերցողներու անունով կշնորհավորենք Ձեր գահակալության առաջին տարեդարձը:

ԱԲՐԱՀԱՄ ԷՕԼՄԵՍԵՔՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

---

Ձերդ Վեհափառության սուրբ օծման տարեդարձի երջանիկ առիթով ընդունեցեք մեր որդիական անհուն սիրանքը և խոր հարգանքը: Կհայցենք Ձեզ երկար կյանք և բարգավաճ շրջան մը Ձեր նվիրյալ ասպարեզին մեջ:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

ՄՈՆՏԵՎԻԴԵՈ

---

Ընդունեցեք մեր ջերմ մաղթանքները Ձեր գահակալության առիթով:

ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

---

Բուենոս-Այրեսի Մարաշի Հայրենակցական միության անդամներու անունով կշնորհավորենք Ձեր գահակալության առաջին տարեդարձը:

ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

---

Ընդունեցեք Հաճընի Հայրենակցական միության որդիական հարգանքները Ձեր գահակալության առաջին տարեդարձին առիթով:

ՀԱՃԸՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

---

Ձերդ Ս. Օծության գահակալության տարեդարձի առիթով կհայտնենք մեր սրտագին շնորհավորությունները և որդիական անխախտ հավատարմություններ Մայր Աթոռին, նաև մեր անկեղծ ցանկությունը՝ պահպանված տեսնելու Հայաստանյայց Առաքելական եկեղեցվո միասնականությունը:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

---

Ջերմագին շնորհավորություններ Ձեր գահակալության առաջին տարեդարձին առիթով: Անսասան մնա Էջմիածնի Մայր Աթոռի Հայրապետությունը և Հայ Եկեղեցվո միասնականությունը:

ԱՐԺԱՆՏԻՆԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

---

Ձեր գահակալության առաջին տարեդարձին առիթով մեր որդիական հարգանքները կմատուցանենք:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

---

Երկար օրեր. Երջանկություն կմաղթենք Վեհափառությանդ:

ԴԱՏԵՐՔ ՎԱՐԴԱՆԱՆՑ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

---

Մարտել Պլադայի Հայկական Միությունը կմիանա իր եկեղեցվո հանդիսության և կտոնե Կաթողիկոսի օծման առաջին տարեդարձը:

ՄԱՐՏԵԼ ՊԼԱԴԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

---

Ձերդ Սրբության օծման առաջին տարեդարձին առթիվ հաճեցեք ընդունել իմ շնորհավորությունը:

ԱՐԱՄԱՅԻՍ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԶՈՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱ

---

Սրտագին շնորհավորություն Ձերդ Վեհափառության գահակալության տարեդարձի առթիվ: Տերը անսասան և կենսուրախ պահե Հայրապետն ու Հայրապետությունը:

ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ՍՈՖԻԱ

---

Շնորհավորելով Ձեր գահակալության առաջին տարեդարձը, մաղթում եմ նորանոր բարեբաստիկ տարիներ, խաղաղ. արդյունավետ իշխանություն. ի բարօրություն Ձեր հոգևոր հոտի և ի պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

ՀԱԿՈԲ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՔՍԼԱՄՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆ

---

Որդիական ակնածությամբ շնորհավորում եմ Ձերդ Սրբության օծման առաջին տարեդարձը: Ցանկանում եմ Ձեզ երկարակեցություն՝ ի փառս Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու:

ՆՈՐԱՅՐ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԴՄՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆ

---

Շնորհավորում եմ Ձեր գահակալության առաջին տարեդարձը: Ամբողջ հոգով աղոթում ենք առ Աստված Ձեր երկարակեցության ու բաջառողջության համար՝ ի փառս ժողովրդի, Հայրենիքի և եկեղեցու:

Բաքվի հայոց եկեղեցու ավագերեց՝
ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱՔՈՒ

Շնորհավորում եմ Ձերդ Սրբությանը Ս. Էջմիածնի Կաթողիկոսական Գահին բարձրանալու տարեդարձի առթիվ։ Ցանկանում եմ երկարատևություն և առողջություն, հաջողություն մեզ, ի փառս Եկեղեցու և Հայրենիքի։

ՄԿՐՏԻՉ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՉԱՐՉՈՓՅԱՆ

ԲՈՍՏՈՆ

---

Ձերդ Վեհափառության սուրբ օծման և Լուսավորչի պատմական Աթոռի վրա գահակալության առաջին տարեդարձի առթիվ հղում եմ ջերմագին շնորհավորություններս, մաղթելով առողջություն, երջանկություն և Հայոց Եկեղեցվույն բարգավաճում, Ձեր իմաստուն հովանավորության ներքև։

ՏՐԴԱՏ ՔԱՀԱՆԱ ՏՈՒՎԱՐՃՅԱՆ

ՎԱՌՆԱ

---

Ձերդ Վեհափառության ընտրության և օծման տարեդարձի առթիվ կմատուցանենք մեր սրտագին շնորհավորությունները, կմաղթենք Ձեզ երկարատև, երջանիկ, ազգօգուտ, իմաստուն հովվապետություն։

ՊԵՏՐՈՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ.
ՀԱՅԿ ՆԱԶԱՐՅԱՆ.
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ.

ԿԱԼԿԱԹԱ

---

Լավագույն բարեմաղթություններ Ձեր գահակալության տարեդարձի առթիվ։

ԹՈՄԱՍՅԱՆ.
ՋԱՔԱՐՅԱՆ.
ԳԱԼՃՅԱՆ.

ԲՈՒԽԱՐԵՍՏ

---

Ձերդ Սրբության գահակալության տարեդարձին առթիվ կխնդրենք ընդունել մեր խորին բարեմաղթությունները։

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԱՆՏՈՆՅԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏ

---

Շնորհավորություն Ձեր գահակալության տարեդարձին առթիվ։ Ընդունեցեք, Վեհափառ, մեր ամբողջ ընտանիքի սրտագին շնորհավորությունները ու մաղթանքները։

ՖԼՈՐԻԿԱ և ԱՐՇԱԿ ՄԿՐՏԻՉՅԱՆ

ՅԱՇ

---

Կշնորհավորենք Ձեր գահակալության առաջին տարեդարձը, մաղթելով Սուրբ Օծությանդ խոհուն ջանքերով բարձրացված տեսնել Արարատյան Մայր Աթոռի հմայքը։

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԻՆԱՃՅԱՆ

ՎԱՌՆԱ

---

Սրտագին շնորհավորանքներ Ձեր գահակալության տարեդարձի առթիվ

Դ. ՍԱՂՅԱՆ

ԲԱՔՈՒ

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԻՐ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԻՆ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Պ. ՀՐԱՉՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Խորապես զգացված ենք Մեր գահակալության տարեդարձի առթիվ Ձեր շնորհավորական հեռագրին: Միաժամանակ Մայր Տաճարեն կհղենք Ձեզ և խորհրդի բոլոր անդամներուն մեր սիրո ողջույնն ու հայրապետական օրհնությունը, մաղթելով Ձեզ հաջողություն և նոր եռանդ՝ ի բարօրություն Հայ ժողովրդի և ի ծաղկում մեր Մայր Հայրենիքի:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

Մեր գահակալության տարեդարձի առթիվ Ձեր շնորհավորական հեռագիրը կարդացինք գոհունակությամբ: Մեր սիրո ողջույնը և հայրապետական օրհնությունը Ձեզ և Ձեր հավատացյալ հոտին: Թող Տերը մեր Ս. Եկեղեցին պահե անսասան և սիրո միության ու խաղաղության մեջ:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ԹԵՄԱԿԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ

Ջերմորեն զգացված ենք Ձեր շնորհավորական հեռագրեն, որ ուղարկած եք Մեր գահակալության տարեդարձի առիթով: Կմաղթենք բոլորիդ առողջություն, ուժ և եռանդ՝ վասն պայծառության Եկեղեցվո և բարօրության ժողովրդի:

Սիրո ողջույնիվ և հայրապետական օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Մեր գահակալության տարեդարձի առիթով Ձեր շնորհավորական խոսքը ընդունեցինք ամենայն գոհունակությամբ: Միաժամանակ Մայր Տաճարեն կհղենք Ձեզ Մեր սիրո ողջույնը և հայրապետական օրհնությունը:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻՆ

Հաճեցէք հայտնել Մեր շնորհակալությունը և հայրական օրհնությունը թեմական և եկեղեցական խորհուրդներուն, Քահանայից դասուն, ինչպես նաև առանձին անձերու, որոնք ուղարկեր են շնորհավորանքներ Մեր գահակալության տարեդարձին առթիվ: Կմաղթենք բոլորին քաջառողջություն, նոր ուժ և եռանդ՝ վասն պայծառության եկեղեցվո և բարօրության ժողովրդի:

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ԱՆՀԱՏՆԵՐԻՆ (ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՍՑԵՈՎ)

Հաճեցեք հայտնել բոլոր ազգայիններին Վեհափառի սիրո ողջույնը և հայրապետական օրհնությունը Իր գահակալության տարեդարձի առթիվ ուղարկված հեռագրերի համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՏՈՒՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

# ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԻՎԱՆ ՎԱՍԻԼԵՎԻՉ Պ Ո Լ Յ Ա Ն Ս Կ Ո Ւ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

ՄՈՍԿՎԱ

Վշտով իմացանք Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Իվան Վասիլևիչ Պոլյանսկու վաղաժամ մահվան մասին: Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անունից հայտնում ենք Մեր խորին ցավակցությունը: Աղոթում ենք առ Աստված հոգու հանգստության համար մի մարդու, որը երկար տարիներ անձնվիրաբար ու ձեռնհասորեն գլխավորում էր Կրոնական պաշտամունքների խորհուրդը:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ
14 հոկտեմբերի 1956 թ.

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ Վ Ա Զ Գ Ե Ն Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Կրոնական պաշտամունքների խորհուրդը անկեղծորեն շնորհակալ է Ձեզանից ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Իվան Վասիլևիչ Պոլյանսկու մահվան առթիվ հայտնված ցավակցության համար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Գ Ո Ս Տ Ե Վ.

ՄՈՍԿՎԱ
21 հոկտեմբերի 1956 թ.

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԴԻՎԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

*ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ*

ԷՋՄԻԱԾԻՆ

Միաբանական ընդհանուր ժողովի որոշմամբ, գումարված կանոնավոր կերպով նոյեմբեր 13-ին, Եղիշէ արքեպիսկոպոս ազատ արձակվեցավ Պատրիարքության մէջ ունեցած իր բոլոր պաշտոններէն: Կխնդրենք հաղորդել իրեն: Տիրան արքեպիսկոպոս ընտրվեցավ Տեղապահ: Մինչև իր վերադարձը, Սուրեն եպիսկոպոս կմնա Պատրիարքության գործերու վարիչ: Պաշտոնական հաստատագ նամակը կհաջորդե:

ԴԻՎԱՆ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
Նախագահ՝ ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ.
Ատենապետ՝ ՋԱՎԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ.
Քարտուղար՝ ՎԱԶԳԵՆ ԱԲԵՂԱ

16 նոյեմբեր 1956

# ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

*Հոկտեմբերի 7-ն է, օրը կիրակի։ Արարատյան դաշտի վրա բացվել է աշնանային անուշաբույր և ոսկի առավոտներից մեկը։*

*Վաղ առավոտյան մայրաքաղաքից, շրջաններից, գյուղերից, ուխտավորների և հավատացյալների բազմությունը ավտոմեքենաներով, հետիոտն դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ուղևորվում,*

*Այսօր, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ, Մայր Տաճարում կմատուցվի հանդիսավոր սուրբ պատարագ և կկատարվի Հայրապետական մաղթանք։*

*Մայր Տաճարը, վանքի շրջափակը, ամեն կողմ լցված է մարդկային բազմությամբ, մինչ նորանոր ուխտավորական խմբեր, ալիք առ ալիք հասնում են Էջմիածին։*

*Մայր Տաճարի երկու դասերի մեջ տեղ են գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի մասնավոր հրավիրատոմսերով հրավիրված պաշտոնական անձնավորություններ։*

*Ժամը 11-ն է։ Սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը։ Օրվա պատարագիչն է Տ. Ներսես արքեպիսկոպոս Տերտերյանը։*

*Ժամը 12-ին Վեհարանում կազմվում է մեծաշուք եկեղեցական թափոր։ Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, ավանդական հանդիսությամբ, հայրապետական ամպհովանու ներքև, զանգերի զվարթագին ղողանջների տակ, ժողովրդական խանդավառ ու սրտագին մթնոլորտի մեջ, օրհնություն սփռելով Իր շուրջ, Տրդատյան դռնից հանդիսավոր մուտք է գործում Մայր Տաճար։ Հայրապետական թափորի առաջ քայլում են կարմրազգեստ շաթիրներ, տարվում են գլխից բարձր պահած հայրապետական բողը, գավազանն ու մեծ, գեղեցկահյուս խաչը։*

*Վեհափառ Հայրապետը բարձրանում է Ավագ Սեղանի աջակողմյան դասում Իր Հայրապետական Գահի վրա։ Շարունակվում է սուրբ պատարագը։ Ամեն կողմ վեհություն, խունկ, աղոթք, խորհուրդ։ Տաճարի մեջ ջերմեռանդորեն աղոթում է հայ հավատացյալ ժողովուրդը։ Աղոթքի ու խնկի բույրերի հետ երկինք են բարձրանում հազարավոր հայ սրտերից բխած սրտագին մաղթանքներ Մայր Աթոռի հաստատության և հավերժության և Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքի արևշատության համար։*

*Քարոզի պահն է։ Պատարագիչ սրբազանը դառնում է դեպի ժողովուրդը և խոսում.*

**«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»։**

«Դարերու երգն է այս, փրթած մեր ժողովուրդի հոգիէն և դարերով սրբագործված սե-



ՎԵՀԱՓԱՌԸ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՀԻ ՎՐԱ

րունդէ սերունդ ու հասած մինչև մեր օրերը: Եվ ասիկա անոր համար, որովհետև եկեղեցին, ինչպես երեկ, այնպես ալ այսօր, մեր գոյության տապանն է, մեր պատմության արյունոտ ծփանքներուն դիմաց: Մենք մեր ազգային գոյությունը կպարտինք մեր

Եկեղեցիին։ Ավետարանը մագաղաթ ու գիր ըլլալէ առաջ, հայ սիրտ է հայ կուրծքերու տակ, մեր նահատակներուն և մեր սուրբերուն մարմինները տաղավարող քանդակներ, բխած մեր Երկրի ալքերէն։

Հայ Եկեղեցին հայ ցեղին խղճմտանքն է։ Եվ եթե Հայ Եկեղեցին տիպարացած է այսօր որոշ չափով, պատճառն այն է, որ ան տված է ինքզինքը ամբողջ իր ժողովրդին։ Եվ այդ գոհողության, այդ իմաստության շնորհիվ է, որ մենք եկած, հասած ենք այս օրերուն, և լծած մեր սայլերը, կշարունակենք մեր պատմությունը ուրիշ ժողովուրդներու հետ համընթաց։

Մեր աղնվական ու գոհաբերվող հայրապետներեն մին է Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա մեր սիրելի Հայրապետը, իրեն շառավիղը Լուսավորչին, շառավիղը բոլոր անոնց, որոնք շինեցին մեր Եկեղեցին, որոնք կրցան երգել դարերու երգը՝ «Եկայք, շինեսցուք սուրբ գխորանն լուսոյ»։

Հոս, հանուն մեր Եկեղեցիին, մեր խորունկ գոհունակությունն ու շնորհակալությունը կհայտնենք մեր Հայրենի կառավարության, Սովետական մեր կառավարության, որ մեր փափագին համեմատ և ավելիով փույթն ունեցավ մեր Սրբություն Սրբոցը, մեր ճարտարապետական գեղեցիկ և լավագույն կառույցը, մեր հոգիին տուն տաղավար Էջմիածինը այսպես նկարազարդելու և գեղեցկացնելու Արտասահմանի և Հայրենիքի ամբողջ հայությունը երբեք պիտի չկրնա մոռնալ այս բարիքը, որ միայն պետություն մը կրնար ընել իր միջոցներովը։ Իսկ այսքան սքանչելի կերպով սկզբնավորված գործը գտած է շարունակողը հանձին մեր սիրելի Հայրապետին։ Մենք Իր հետն ենք։ Հայ ժողովուրդը Իր հետն է, և ամենեն ավելին և ամենեն բարձրը՝ Հայրենի կառավարությունն Իր հետն է։

Նորին Վեհափառությունը երբ ինն ամիսներ առաջ արտասահման եկավ, հոն բերելու նախ Լուսավորչի Աթոռին հմայքը, հետո Հայրենիքին կարոտը, և մանավանդ սփռելու համար հոգիներուն մեջ Իր երիտասարդ հոգիին կաղդույրը, սիրվեցավ և հարգվեցավ բոլորեն, բոլորը խանդավառվեցան Իրմով հանուն Հայրենիքի, հանուն Էջմիածնի գաղափարին, գաղափարներ, որոնք պատմության ընթացքին եթե երբեմն իրարմե բաժնված են, սակայն միշտ գերար լրացուցած են սերունդներու և մարդերու հոգիին մեջ։ Եվ այդ գաղափարով Վեհափառ Հայրապետը եղավ ոչ միայն Հայրենիքի, ոչ միայն Էջմիածնի, այլ մեր ամբողջ ժողովրդի դարավոր խորհրդին մարմնացումը։ Նույնիսկ անոնք, որոնք տարբեր չափերով ու տարբեր կշիռներով ուզեցին կշռել Իր առաքելությունը, անոնք անգամ խոնարհեցան Նորին Վեհափառության քաղցր դեմքին, լուսավոր անձնավորության և Իր անձին բխած պարզության առջև։

Վեհափառ Հայրապետի գահակալության և օծման տարեդարձն է այսօր։ Իր պայտոնի սկզբնավորության, երբ Իր տասներկու ամիսները կկազմեն այսպես գեղեցիկ պսակ մը Իր դեմքին շուրջ, ես կմաղթեմ, որ իրարու հաջորդող տարիները ավելի ու ավելի փայլեցնեն Իր դեմքը, տարիները ավելի արդյունավոր ըլլան, ավելի մեծ և գնգեցիկ կերպով գեղեցկացնեն Իր դեմքը և բարգավաճեն Իր գործը, ի փառս Աստուծո և Հայ Եկեղեցիին և ի վայելումն բոլոր անոնց, որոնք իրական և մաքուր ոգիով գիտեն նայիլ մեր Եկեղեցիին և մեր Հայրենիքին վերելքին ու ծաղկման։

Հավարտ սուրբ պատարագի, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ Մայր տաճարում կատարվեց Հայրապետական մաղթանք։

Դեպի Վեհարան Իր վերադարձի ճանապարհի վրա, Նորին Ս. Օծությունը ջերմորեն ու խանդավառությամբ դիմավորվում էր բակի անցքի կողմերում հավաքված խուռն բազմության կողմից։ Մինչ թափորը ուղղվում էր դեպի Վեհարան, ժողովրդից շատերը բացագանչում էին. «Կեցցե՛ Վեհափառ Հայրապետը, փառավո՛ր մնա միշտ Ս. Էջմիածինը»։ Վեհարանի մեծ դուրքասի առաջ կանգնած, Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին, խորապես հուզված այս համաժողովրդական, անկեղծ հարգանքի և սիրո արտահայտություններից։

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԾԱՂԿՅԱ ԴԱՀԼԻՃՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի երջանիկ առիթով, հոկտեմբերի 7-ին, կիրակի օր, ժամը 2-ին, Վեհարանի Ծաղկյա դահլիճում կազմակերպվել էր պաշտոնական ընդունելություն։*

*Հյուրերի թվում էին Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը իր տիկնոջ հետ, խորհրդի հարգելի անդամները, Վարպետ՝ Ավետիք Իսահակյանը իր տիկնոջ հետ, ակադեմիկոս նկարիչ Մարտիրոս Սարյանը, սիրված բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, ճարտարապետ Մազմանյանը, ինժեներներ, մամուլի ներկայացուցիչներ, թղթակիցներ։*

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը պաշտոնապես բազմեց Ծաղկյա դահլիճում Հայրապետական Գահի վրա։*

*Այդ պաշտոնական ու հանդիսավոր ընդունելության ժամանակ խոսք առավ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը և հանուն հայ ժողովրդի և Գերագույն Հոգևոր Խորհրդի ողջունելով Վեհափառ Հայրապետին, ասաց*

*Խնդությամբ կուգանք Ձեզ շնորհավորելու՝ Ձեր գահակալության առաջին տարեդարձի առթիվ։ Տարի մը առաջ խանդավառություն կտիրեր այստեղ. աշխարհի բոլոր կողմերեն եկած հայ ժողովրդի ներկայացուցիչներս ընտրեցինք Հայրապետ մը։ Դուք եղաք ազգընտիր Հայրապետը Ամենայն Հայոց։*

*Մեկ տարի հետո վերստին այցելելով Ս. Էջմիածին, կտեսնենք Ձեր ձգած հմայքը և խանդավառությունը միաբանության և ժողովրդին մեջ։ Արտասահմանի հայությունը խանդավառությամբ կհետևի Ձեր գործունեության և կարոտով կսպասե Ձեր այցելության։ Այն խանդավառությունը և շինարարությունը, որ Դուք կստեղծեք և կկատարեք, մեր սրտերը կլեցնեն անսահման ուրախությամբ։ Կշնորհավորեմ զՁեզ այն աշխատանքին համար, զոր կատարած եք մեկ տարվան մեջ. Կցնծան հայ հոգիները և կըսպասենք, որ Ձեր բարի ծրագրերը՝ Ճեմարանի և Հայ Եկեղեցվո զարգացման ու բարգավաճման համար՝ իրագործվին։ Դուք կբանաք բոլոր եկեղեցիները, վանքերը, վերադարձնելով հայ ժողովրդին իր հավատքի կեդրոնները, որոնք վաղուց ամայացած էին։ Հայ ժողովուրդը իր ակնարկը կուղղե դեպի Էջմիածնի Մայր Աթոռը։*

*Թող Աստուած Ձեզ օրհնէ և պտղաբեր Ձեր գործը և Դուք ըլլաք շինարար Հովվապետ։ Գերագույն Հոգևոր Խորհրդի և մեր ժողովրդի կողմէն կուգանք խոստանալու, որ մենք մեր կարելին պիտի ընենք, որպեսզի պայծառանա Հայ Եկեղեցին։ Մենք կհավատանք, որ Հայ պետությունը չի խնայեր իր կարելին՝ օգնելու համար Ձեզ։ Սփյուռքի հայությունը Հայրենիքի կարոտը իր սրտին, կսպասէ բաղձալի այն օրվան, երբ բոլորը միասին պիտի գան Հայրենի հարկի և Ս. Էջմիածնի հովանիին տակ ապրելու։ Այն*



ՎԱՐՊԵՏԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

*ատեն հայ ժողովուրդը պիտի ըլլա մի հոտ և մի հովիւ, հայոց պայծառ երկնքի տակ։*

*Կշնորհավորենք զՁեզ, շնորհազարդ Հայրապետ, տարեդարձի այս երջանիկ առիթով։*

*Ապա խոսք առավ Վեհափառ Հայրապետը և ասաց.*

«Սիրելի՛ սրբազան եղբայր.

Մեր խորին շնորհակալությունները Ձեր սրտաբուխ խոսքերուն համար, որ Դուք արտահայտեցիք Մեր ընտրության և օծման տարեդարձին առթիվ. Գերագույն Հոգևոր Խորհրդի և հայ հավատացյալ ժողովրդի կողմե: Շնորհակալական խոսք կուղղենք նաև Տ. Եղիշէ սրբազան արքեպիսկոպոսին, ու եկեղեցվո մեջ արտասանած իր ճառով մեր սրտերը լեցուց հավատքով ու սիրով մեր պաշտելի Ս. Եկեղեցիին նկատմամբ:

Շնորհակալություն բոլորին, որոնք ըլլա եկեղեցվո մեջ կամ այստեղ, իրենց ազնիվ զգացումներուն արտահայտությունները բերին իրենց ներկայությամբ և մաղթանքներով: Մեզ համար ոչ միայն հանդիսավորյան մըն է աս, այլ նաև խոկումներու, մտածողություններու և նոր ուխտի պահ մը: Անցյալ տարի ուխտեցինք ծառայել եկեղեցիին, մեր ժողովրդին և մեր վերածնած Հայրենիքին: Այժմ կվերանորոգենք Մեր ուխտը և հույս ունինք, որ Աստված Մեզ պիտի ըլլա զորավիգ, որպեսզի Մեր պարտականությունը կատարենք առավելյալ արդյունքներով ի օգուտ Եկեղեցվո և ժողովրդին:

Մենք մխիթարված ենք, որ Մեր կողքին կգտնվի մեր Նվիրապետական Աթոռներեն Երուսաղեմի Պատրիարքարանի ներկայացուցիչը: Մեր ողջույնը կուղղենք Ձեզ և Ձեր միջոցով Երուսաղեմի ամբողջ միաբանության: Երջանիկ ենք նաև, որ այս պահուս մեր մեջն է նորեշնորհ Շահե վարդապետը, ներ-

կայացուցիչը այն Աթոռին, որ պատմականօրէն ազատ և հեռու է մեզի Մեծի Տանն Կիլիկիոյ անվան տակ: Այդպէս կ'ողջունենք Կիլիկիոյ Կաթողիկոսության բոլոր միաբաններուն անխտիր և համայն հավատացյալ ժողովրդին:

Մեր մէջ չէ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքը՝ ամենապատիվ Շնորհքի սրբազանը, սակայն կխորհինք, թե ան հոգիով մեզ հետ է այս պահուն: Մեր մէջ է ան իր ամբողջ բարեպաշտ ժողովուրդով և մանավանդ մեր հոգիներին: Մենք Մեր սիրո ամենաջերմ ողջույնը կուղղենք նորին Ամենապատվության և Մեր օրհնությունը իր ժողովրդին:

Մեր սիրելի եղբայր Սիոն արքեպիսկոպոսը, որպես Հայրապետական պատվիրակ, առաջնորդ Հարավային Ամերիկայի հայոց և անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի, կխորհինք թե կրնա ներկայացնել այստեղ եպիսկոպոսական և առաջնորդական դասը և արտասահմանի ժողովուրդը, որով կիմանացինք, որ սրբազան հայրը մեր գաղութներուն արտահայտիչը դառնա ի սփյուռս աշխարհի ցրված մեր եկեղեցիներուն, հոգևորականներուն, և բոլորին տանի Մեր ողջույնը ու օրհնությունը Սրբածնունդ Մայր Տաճարէն:

Ոչ լրիվ պիտի ըլլային Մեր սիրո զգացումները և ողջույնի խոսքերը, եթե նույն մտածումներով ու հույզերով չարտահայտեինք Մեր հարգանքը և երախտագիտությունը հայ պետության ներկայացուցիչ պ. Հրաչյա Գրիգորյանին, որ ներկա է մեր մեջ: Հանուն մեր Հայրենի կառավարության, Մեր կողքին է ան ոչ միայն հարգալից ուշադրությամբ, այլև միշտ պատրաստ իր օժանդակությունը բերելու Մեր գործին, որպեսզի կարենանք շարունակել Մեր շինարար աշխատանքները և Մեր առաքելությունը հօգուտ եկեղեցվո և հայ ժողովրդին: Այս հանդիսավոր առթիվ թույլ տվեք խնդրել Ձեզ, որ հաճիք Մեր ողջույնը և օրհնությունները տանել մեր Հայրենի պետության բոլոր ազգանվեր վարիչներուն և Ձեզ անձամբ ու Խորհրդի բոլոր անդամներուն:

Մեր ողջույնի խոսքը կուղենք նաև մեր Հայրենիքի մտավորականության, որուն շարք մը փայլուն ներկայացուցիչներ կտեսնենք այստեղ, համախմբված այս պատմական Վեհարանի Ծաղկյա դահլիճին մեջ: Թույլ տվեք, որ մեր մտավորականության ներկայացուցիչ նկատենք բոլորիս գուրգուրանքին առարկա բանաստեղծ Ավետիք Իսահակյանը: Դո՛ւք, Վարպետ, խորհրդանիշն եք հայ մտքին ու զգայնության և խիղճը մեր ժողովրդին: Ընդունեցե՛ք ողջույնը և օրհնությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսին, մաղթանքով առ Աստված Ձեր արևշատության և հայրենասեր իղձերու իրականացման համար: Մենք հպարտ ենք և մխիթարված Ձեզմով և ամբողջ մտավորականությամբ, հազար-հազար մտքի աշխատավորներով և հոգիներու մշակներով, որոնք երկրորդ ոսկեդար մը կկերտեն անա մեր օրերուն, հայոց պատմության սովետական այս դարաշրջանին: Փա՛ռք հայ հանճարին և վերընձյուղված մեր Մայր Հայրենիքին:

Հայ հավատացյա՛լ ժողովուրդ, ո՛ւր որ ալ գտնվիս, հարազատ Հայրենի հողի վրա կամ օտար երկինքներու տակ, անշարժ կանգնած մեր նախնյաց սուրբ հավատքի վեմին վրա, հավատա՛, մեկտեղե՛ Քու բոլոր կենդանի ուժերը և միության կենարար ոգիով զոտևպնդված, շինե՛, զորացո՛ւր, ծաղկեցո՛ւր Քու Մայր Եկեղեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, հայացքդ սևեռած դեպի մեր Ազգի պայծառ ապագան:

Մեր գործունեության առաջին տարեդարձին Մեր ուխտը վերանորոգելով, կսկսինք աշխատանքի, ոտք դնելով Մեր գահակալության երկրորդ տարեշրջանի սեմին: Կհավատանք, թե Մեր սկսած գործը հաջողությամբ պիտի հառաջ ընթանա և իրենց լրումին և կենսագործման պիտի հասնին Մեր բոլոր եկեղեցաշեն ու հայրենանվեր ծրագրերը, ի փառս Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվույն և Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

«Աստուած երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան: Ամէն»:

*Ընդունելության պաշտոնական մասի ավարտից հետո, հյուրերը հյուրասիրվեցին կոնյակով ու շոկոլադով: Ապա Վեհափառ Հայրապետը ընդունեց բոլորի սրտագին շնորհավորությունները Իր գահակալության տարեդարձի առթիվ:*

# ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Հոկտեմբերի 7-ին՝ կիրակի օր, ժամը 3-ին, Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը, Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ, Վեհարանի սեղանատան մեջ կազմակերպել էր պաշտոնական ընդունելություն, որին ներկա էին գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան բարձրապատիվ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, թեմակալ առաջնորդ սրբազաններն ու առաջնորդական փոխանորդները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը, Վերստուգիչ Հանձնաժողովի անդամները, վանքի պաշտոնեությունը։

Հրավիրյալների թվում էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը իր տիկնոջ և խորհրդի անդամների հետ, Վարպետը՝ Ավետիք Իսահակյանը, ակադեմիկոս նկարիչ Մարտիրոս Սարյանը, սիրված բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, պրոֆ. Ա. Աբրահամյանը, ճարտարապետ Մազմանյանը, քանդակագործ Նիկողոս Նիկողոսյանը և ուրիշ հրավիրյալներ։

Հայրենիքի բարիքներով ճոխորեն զարդարված սեղանների շուրջ, Մայր Աթոռը խանդավառ մթնոլորտի մեջ տոնում էր իր սիրելի Հայրապետի և Հոր գահակալության առաջին երջանիկ տարեդարձը։

Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով բացվեց հանդիսավոր ճաշկերույթը։ Տոնական ուրախ և խանդավառ տրամադրություն էր ստեղծվել սեղանների շուրջ, ուր մի անգամ ևս արտահայտվում էր հայ ժողովրդի սրտառուչ միասնությունը, սերն ու հարգանքը Ս. Էջմիածնի և Նրա արժանընտիր Գահակալի շուրջ։

Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձի առթիվ այս պաշտոնական ընդունելության ներկաներից շատերը շնորհավորության, բարեմաղթության սրտագին խոսքեր ասացին՝ եկեղեցասիրական և հայրենասիրական վառ արտահայտություններով։

Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, խոսելով Ս. Էջմիածնի միաբանության անունից, ասաց.

«Վեհափառ Տե՛ր.

Այսօր Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ տոնում են Ձերդ Ս. Օծության գահակալության առաջին տարեդարձը։

Մի տարվա Ձեր գործունեությունը մեզ համոզեց, որ բնավորությամբ քաղցր, աշխույժ ու կրակոտ եք, աշխատանքի ծարավի, նեղություններից չխուսափող, Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի և Հայրենիքի սիրույն անձնվեր, առաջադիմության նախանձախնդիր, վշտերին կարեկից, խոսքերով հմայիչ։

Ձեր աշխատանքը բազմօգուտ է և բազմատեսակ, ու Դուք, Վեհափառ Տե՛ր, կարող եք խղճի անկեղծ գոհունակությամբ պարծենալ, որ գիտեք Ձեր ժամերը նվիրել այնպիսի աշխատանքների, որոնք մեծամեծ օգուտներ են բերում թե՛ Եկեղեցուն, թե՛ Ազգին և թե՛ Հայրենիքին։

Առատաձեռն ողորմությամբ։ Հայ Ազգը Ձեզ ճանաչեց մեր Եկեղեցու նավը և Դուք, որպես մի քաջ և հմուտ նավավար, տանում եք այն, Լուսավորչի խաչվառ որպես արքայական առաջնորդ ունենալով Ձեզ։

Թույլ տվե՛ք, մեր սիրելի և թանկագին Հայրապե՛տ, Մայր Աթոռի միաբանության կողմից շնորհավորել Ձեր գահակալության առաջին տարեդարձը և մաղթել Ձեզ երկար կյանք և առողջություն։ Թո՛ղ Տերը արժանացնի մեզ երկար տարիներ տեսնել Ձեզ բազմած Հայրապետական Աթոռին և Ձեր իմաստուն ղեկավարությամբ պահել, պահպանել մեզ։ Թո՛ղ Տերը իրականացնի Ձեր բոլոր իղձերը և օրհնությամբ երգենք՝ «Միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեանս»։

Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը ասաց.

«Նորին Վեհափառության օծման և գահակալության տարելիցին առթիվ, բոլոր մտածմունքը կերթան Իր անձին և մեկ տարվան կարճ ժամանակամիջոցի ընթացքին կատարած վերանորոգման և բարեկարգություններուն։ Ինչ որ եղած է ու մանավանդ ինչ որ կծրագրվի ընել, ազդիկ միայն ուրախություն կրնա պատճառել բոլորիս և բոլոր անոնց, որոնք հայու աչքերով կնային Էջմիածնին և անոր վերակենդանության։

Ես, հանուն Սրբոց Հակոբյանց միաբանության, իմ սրտագին շնորհավորությունս կհայտնեմ Ձերդ Վեհափառության, մաղթելով, որ Տերը անսասան պահե Մայր Աթոռը և մեր բոլոր հույսերուն և երազներուն օրրանը եղող մեր սիրելի Հայրենիքը»։

Խմբովին երգված «Սիրտ որ բացվին» հայրենասիրական երգից հետո խոսք առավ բարձրապատիվ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը.

«Վեհափա՛ռ Տեր, սրբազա՛ն հայրեր և հարգելի՛ ունկնդիրներ.

Ներողամիտ եղեք, որ իմ խոսքը ոչ այնքան պաշտոնական խոսքը պիտի ըլլա մեր Աթոռին, որուն պաշտոնական անձի ներկայությունը պիտի ուզեի տեսնել այս պահուս այստեղ. ըսելու համար այն խոսքերը, որոնք մեր սրտերուն մոտիկ են։ Որպես Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան կհամարձակիմ խոսիլ, և իմ խոսքին մեջ տեսեք Կիլիկիո միաբանության խոսքը։

Մեկ տարի առաջ, Ձեր օծման ժամանակ լսելով ձայնասփյուռեն, մենք Էջմիածինը հեռվեն տեսանք և ան երազային էր մեզ համար։ Ձեր այցելությունը և ներկայությունը Անթիլիաս՝ մեր միաբանությունը կապեց Էջմիածնի հետ տարբեր կապերով։ Մեր միաբանության համար Էջմիածին բառը Ձեզմով կենդանացավ. Ձեր անունը եղավ սրտի համբույր սանձված կապ մը մեր և Էջմիածնի միջև։ Մենք չենք կրնար չհիշել, որ Ձեր ներկայությունը ստեղծեց միություն մը, որուն կեդրոնը Ձեր անձը կդառնար և մեր մաղթանքն է, որ ստեղծված միությունը ըլլա անխախտ և մշտական, վերահաստատելու համար խախտված սերն ու համերաշխությունը։ Անթիլիասի դրությունը ողբերգական է։ Մենք կերթանք դեպի բաժանում։ Մարմնի մեկ անդամը դավելով, մարմինը կթուլնա և ցավը է պատճառել այդ հիվանդոտ անդամեն մյուս անդամները առողջ պահելու համար։ Եթե չըլլար Ձեր հովանավորությունը, մեր մարմինը կըլլար ակար։ Ձեզմե կսպասենք սպեղանի ամոքելու մեր ցավը, որպեսզի մեր Եկեղեցին մնա մի և հետևի իր Հայրապետին, շարունակելով իր հայրերուն ավանդությունը։

Կներեք, որ Ձեր ուրախ սեղանին բերի ցավոտ խնդիր մը։ Համոզված ենք, որ Դուք կընեք Ձեր կարելին՝ շուտափույթ կերպով վերացնելու Հայ Եկեղեցիին սպառնացող անջատման ցավոտ խնդիրը, մնալով միշտ Հայաստանյայց Եկեղեցվո միության խորհրդանիշն ու առաջնորդը»։

Ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ խոսք առավ Վարդգեսը.

«Ես ճառախոս չեմ, բայց ես էլ պիտի փորձեմ մի քանի խոսք ասել։

Ես ինձ շատ երջանիկ եմ զգում այս պահին, որ գտնվում եմ Սիմեոն կաթողիկոսի շինած այս հին դահլիճում։ Այսօր այստեղ հավաքվել ենք կատարելու մեր շատ սիրելի Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Վազգեն Ա-ի գահակալության տարեդարձը։ Ես մոտիկից հետևում էի Վեհափառի կյանքին և գործունեությանը։ Նա անկեղծ մարդ է իր հավատի և հայրենասիրության մեջ։ Նա մեր ժամանակի լավ մարդկանցից մեկն է։

Հայ ժողովուրդը սիրում է Էջմիածինը։ Եթե նրա մաշկը քերես, Էջմիածինը դուրս կգա։ Հայ ժողովուրդը իր պետականությունը կորցնելով, Հայ Եկեղեցու մեջ գտավ իր ազգային զգացմունքների հանրագումարը։ Միտքս է գալիս մեր սիրելի բանաստեղծ Վահան Թեքեյանը, որը Հայկական Եկեղեցին լավ է պատկերել իր «Եկեղեցին Հայկական» բանաստեղծության մեջ։ Էջմիածինը չանթարգել է եղած հայ ժողովրդի համար։

Եթե հայ ժողովուրդը հասել է մեր օրերը, այդ շնորհիվ Էջմիածնին է։ Հայ ժողովուրդը երկու զորավիգ է ունեցել՝ մեկը Էջմիածինն է, մյուսը՝ ժողովրդական ազատագրական իդեալը։

Վեհափա՛ռ, ցանկանում եմ Ձեզ երջանկություն, առողջություն և երկար կյանք»։

Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից Վեհափառ Հայրապետին ողջունեց Խորհրդի անդամ պ. Ա. Տիրացյանը.

«Վեհափառ Տե՛ր.

Գերագույն Հոգևոր Խորհրդի աշխարհական անդամների կողմից ողջունում եմ Ձեր գահակալության տարեդարձը։ Մեզ համար ուրախություն և պատիվ է Ձեզ հետ միասին աշխատել Հայ Եկեղեցու կազմակերպության համար։ Ձեր նվիրվածությունը Հայ Ազգի հանդեպ ես ճանաչում եմ վաղուց, մեր ուսուցչական աշխատանքների տարիներից։ Մի տարի ոգևորությամբ հետևեցինք Ձեր գործունեության։ Ձեր երդման խոսքը դրոշմված է մեր սրտերում և Դուք իսկապես ծառայում եք Հայ Եկեղեցուն և ժողովրդին։

Վեհափառ Տե՛ր, Էջմիածնի նյութական, բարոյական, մտավոր զարգացումը Ձեր ուշադրության կենտրոնումն է և Դուք յավագույն առաջնորդն եք այդ հարցերում։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը ցանկանում է երկար կյանք Ձերդ Վեհափառությանը և մենք պատրաստ ենք Ձեր կողքին կանգնելու։ Էջմիածնի տերն ու տիրակալը Դուք եք, մենք Ձեր խորհրդականներն ենք։

Խմում եմ Ձերդ Վեհափառության կենացը»։

Մայր Աթոռի երեց և երիտասարդ միաբանները, որոնք պաշտոնավարում են մեր ներքին թեմերում, հանուն իրենց թեմերի կազմակերպությունների և ժողովրդի, ողջունեցին Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձը։

Գերաշնորհ Տ. Վարդան Եպիսկոպոսը՝ հանուն Վրահայոց թեմի և թեմական-եկեղեցական կազմակերպությունների ու ժողովրդի, և բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը՝ հանուն Շիրակի թեմի,



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ Է ԱՍՈՒՄ

սրտագին խոսքերով ողջունեցին Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձը։

Հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը, հանուն Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմի, ասաց.

«Վեհափառ Տե՛ր.

Այսօր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, համայն հայ հավատացյալ ժողովուրդը, սրտի անհուն ցնծությամբ ու հրճվանքով, նշանավորում են թանկագին Վեհափառությանդ ընտրության և սուրբ օծման առաջին տարեդարձը։

Հայ ժողովուրդը առիթ ունեցավ մեկ սարվա մեջ համոզվելու իր արժանավորագույն նրա ընտրության մեջ։ Վեհափառ Տե՛ր, Դուք կարողացաք նվաճել հազարավոր ու

հազարավոր հայ սրտեր, որոնցից այժմ վա- րար գետի նման երախտագիտական, շնոր- հավորական և լավագույն բարեմաղթություն- ների անհեղձ և ջերմաշունչ խոսքեր են հո- սում դեպի Ձեզ։

Հարգարժան հյուրերը այստեղ գեղեցիկ ճառերով ծանրացան Ձեր մեկ տարվա ար- գյունաշատ գործունեության վրա։ Երախտա- գիտական և շնորհավորական ջերմ խոսքեր ասենք այսօր նաև մենք՝ Ձեր շուրջ համա- խմբված երիտասարդ միաբաններս։ Մեր հոգիների ու սրտերի մեջ սփռելով Ձեր ան- ձից ճառագայթված լույսն ու ջերմությունը, կա- րողացաք մեզ խանդավառել ու ոգեշնչել Ձեր անձնական օրինակով։

Այս մեկ տարվա կարևորագույն իրագոր- ծումներից պետք է համարել Ձեր հով- վապետական այցելությունը Սփյուռքում։

Ձեր նախագահությամբ Կահիրեում կայա- ցած եպիսկոպոսական ժողովի չափազանց կարևոր պատմական որոշումները նոր ուրա- խության ու հավատքի զգացմունքներով լցրին բոլոր հայ հավատացյալների սրտերը։ Թույլ տվեք ինձ, հանուն Աթոռի երիտասարդ միա- բանների, շնորհակալություն հայտնել եպիս- կոպոսական ժողովին մասնակցող բոլոր եպիսկոպոսներին, որոնք աննկուն զինակից- ների նման համախմբվելով Ձերդ Վեհափա- ռության շուրջը, ցուցաբերեցին լիակատար համախոհություն՝ ի շահ Հայ Եկեղեցու և ի փառս հայ ժողովրդի։

Վեհափառ Տե՛ր, մեծագույն պատասխա- նատվությամբ և երկյուղածությամբ ստանձ- նելով Լուսավորչի հովվապետական սուրբ գավազանը, աշխատում եք աչքի լույսի պես պահել ու պահպանել այն ամենը, ինչ լավա- գույն ժառանգություն է մնացել մեր փառա- վոր անցյալից, մեր սուրբ և խնկելի նախ- նիքներից։ Ի ծագս աշխարհի սփռված Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի բեկորները հոգե- պես միշտ ամբողջ ու միասիրտ պահելը եղել և մնում է Ձեր միակ իղձն ու մտածումը։

Այսօր ոմանք ճգնում են ճեղքել Հայ Եկե- ղեցու միասնության պարիսպը, սեպ խրել հազարավոր թելերով շաղկապված բնաշ- խարհի և Սփյուռքի հայության սերտ միու- թյան միջև։

Սակայն առաջին անգամը չէ, որ մեր Եկե- ղեցին դիմագրավում է նման փորձություն- ներ։ Դարերի ալիքները զարկվել են մեր Եկեղեցու ադամանդյա ապառաժին ու միշտ փշրվել։

Վեհափառ Հա՛յր, թույլ տվեք Նոր-Նախի- ջևանի և Հյուսիսային Կովկասի հայոց միաց- յալ հոգևոր թեմի առաջնորդ բարձրապատիվ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետի, թե- մական խորհրդի, քահանաների և ավելի քան 70.000 հայ հավատացյալ ժողովրդի անունից սրտագինս շնորհավորել Ձեր գահակալու- թյան փառավոր տարեդարձը և հայցել Ամե- նակարողյալից քաջառողջություն, արևշա- տություն և պտղավետ գործունեություն՝ ի փառս Հայ Եկեղեցու և հավատացյալ հայ ժողովրդի»։

Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մար- տիկյանը, հանուն Ադրբեջանի և Թուրքես- տանի թեմի, ասաց.

«Սիրելի Հայրապե՛տ,

Որպես միաբանության կրտսերագույն անդամը, որպես Ձեր որդիների մեջ Բենիա- մինը, թեև ոչ այնքան սիրելի ինչքան հենց ինքը՝ Բենիամինը, գալիս եմ նավթաշխար- հից՝ Բաքվից, իմ ժողովրդի անունից, նրա հույզերի և զգացմունքների թարգմանը լի- նելու այս հանդիսավոր օրվա առթիվ։

Ակամայից հիշում եմ մի պատկեր Քրիս- տոսի և Նրա առաքյալների կյանքից, որը նման է մեր կյանքին։ Փոթորիկի պահն է դա։ Քրիստոսի սիրելի առաքյալներից Պետ- րոսը, ալիքների և փոթորիկի մեջ, սաստիկ վտանգի պահին, հուսահատված դրության մեջ, կարիք էր զգում մի ուժեղ ձայնի, և նա կանչում էր. «Տե՛ր, փրկի՛ր մեզ»։ Եղավ ժա- մանակ, որ մենք էլ առաքյալների նման հու- սահատվեցինք, մենք էլ կարիքն էինք զգում մի հզոր, ուժեղ ձայնի։ Դուք եկաք, սիրելի Վեհափա՛ռ, այդ ձայնը մեզ համար։ Մենք մեր տագնապների մեջ լսեցինք Ձեր քաջա- լերող ձայնը, և Դուք ասացիք. «Քաջալերվե- ցե՛ք, ես Ձեր Հայրապետն եմ, մի՛ վհատվեք»։

Մենք գիտակցում ենք մեր պարտականու- թյան լրջությունը, ծանրությունը։ Այս օրերին հայ հոգևորականից պահանջվում է հոգե- կան, բարոյական, իմացական պատրաստու- թյուն, զոհաբերության և նվիրման ոգի։ Խոստանում ենք քառապատկել մեր ուժերը՝ լավագույն գործի համար։

Սիրեցյալ Հայրապե՛տ, ցանկանում ենք Ձեզ անսպառ եռանդ, որպեսզի իրականու- թյուն դառնան Ձեր բարի ծրագրերը և խոր- հուրդները, ի շահ Հայ Եկեղեցու, մեր Հայ- րենիքի և մեր ժողովրդի»։

Մայր Աթոռի պաշտոնեության անունից խոսք առավ տնտեսա-ֆինանսական կառա- վարչության պետ պ. Հ. Սնդղարյանը.

«Վեհափառ Տե՛ր.

Ինձ առաջարկվեց Մայր Աթոռի աշխար- հական աշխատակիցների անունից բարե- մաղթության խոսք ասել Ձեր գահակալու- թյան առաջին տարեդարձի առթիվ։

Հազիվ ենք բոլորել այն մի տարին, երբ մեր երիտասարդ Ընտրյալը Ազգի կամքով Իր ձեռքը վերցրեց հայրապետական սուրբ գա- վազանը։ Մի տարին արդյո՞ք մի հեք չէ

պատմության դարավոր ընթացքի մեջ։ Սակայն մի տարին բավական եղավ, որպեսզի մեր Հովվապետը տիրի մեր մտքերին, իշխի մեր հոգիներին, կառավարի մեր սրտերը։

Մենք սիրեցինք Վեհին և անվերապահ նվիրվեցինք Նրան, որովհետև Նա Իր ողջ էությամբ նվիրված է Իր հավատացյալ ժողովրդին, Իր Հայրենիքին։

Մենք փարվեցինք Վեհին, որովհետև Նա ջերմորեն սիրում է քարքարոտ Հայաստանը, որի ամեն մի քարը Նրա սրտին կպչի, որի ամեն մի քարից Նրա սիրտը հուզումներ կքաղի վսեմ ու լուսացայտ։

Մենք սիրեցինք Վեհին և Նրա ուխտյալ հետևորդները դարձանք, որովհետև զգացինք և համոզվեցինք, որ Նրա համար ամենաարժեքավոր մարդը, ամենապատվավոր քաղաքացին աշխատանքի, քրտինքի մարդն է։

Մենք սիրեցինք Վեհին և երգումով համախմբվեցինք Նրա շուրջը, որովհետև Նրա լուսապայծառ աչքերից խաղաղությունն էր ճառագայթում և Նրա ազնիվ հոգին ու միտքը նվիրված են ժողովուրդների եղբայրության և խաղաղության սրբազան գործին։

Բոլորս էլ տեսնում ենք շինարարական այն աշխատանքները, որոնք սկսվեցին Վեհի նախաձեռնությամբ և ես համոզված եմ, առաջ են գնալու հարաճուն թափով։ Չի անցնի երկար ժամանակ և կվերակենդանանան մեր հրաշալի տաճարները, մեր հոյակապ եկեղեցիները, հայու կենսասեր մտքի. անմար փառքի հոյակապ կոթողներն իրենց անկրկնելի գեղեցկությամբ, հայկական ճարտարապետական արվեստի հմայիչ գույներով։ Նրանցում նորից լսվելու են մեր սքանչելի երաժշտության հոգեպարար մեղեդիները։

Մեր իրական Հովվապետը դեռ Հովվապետի վեհ կոչումը չստացած եկավ Հայաստան, տեսավ ուժերի զարթոնք, որ բուռն և հաղթականորեն կծավալվի, նոր թափ ու թռիչք տալով իր զավակների մտքին ու բազկին։ Նա տեսավ հիմնականը, տեսականը, հարազատը, տեսավ ու ըմբռնեց. «Արտասահմանի հայերը միանգամ ընդմիշտ պետք է լավ գիտենան, թե միայն Սովետական իշխանությունն ու միայն ռուս ժողովուրդն են գերագույն գրավականները մեր Ազգի կենդանության, մեր Հայրենիքի վերաշինության և խաղաղ առաջդիմության, հայ ժողովրդի ազգային իղձերի իրականացման»։ Եվ ապա՝ «Կա մեկ հայ ժողովուրդ, կա մեկ հայ Հայրենիք, կա մեկ կամեցողություն և պայքարի մեկ դրոշ։ Մեր բոլոր ճանապարհները դեպի Երևան կտանեն, դեպի մեր Սովետական Մայր Հայաստանի ծաղիկ մայրաքաղաքը»։ Ավելի զարգացնելով այս միտքը, մեծ Հովվապետը շարունակում է. «Կա մեկ սիրտ, կա մեկ հոգի, մեկ ժողովուրդ, մեկ աշխատանքի ճակատ, պայքարի մեկ դրոշ. հանուն հայ Հայրենիքի վերաշինության, հանուն Սովետական մեծ Հայրենիքի կառուցման ու զորացման, հանուն համայն աշխարհի վերջնական խաղաղության ու ժողովուրդների եղբայրության»։ Եվ այս դրոշը բարձր պահած Իր ամուր ձեռքերում, առաջ է ընթանում մեր աննման Կաթողիկոսը։

Բառերի աննշան փոփոխությամբ Ձեր մասին պետք է ասել այն, ինչ Դուք գրել եք երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի մասին. «Հայ ժողովուրդը ճանաչում է իր հարազատ Հովվապետին, որը կանգնած է այսօր մեր Ազգի ամենաթանկագին իղձերի կենսագործման ճանապարհի վրա։ Այդ ճանապարհն է հայ Հայրենիքի վերաշինության, Հայ Եկեղեցու միասնականության. հայոց ազգային արդար իղձերի իրականացման, հայրենադարձի, ինչպես և համայն աշխարհի խաղաղության։ Մեր հայրենանվեր Վեհափառ Հայրապետը աննկուն կերպով կանգնած է հայ ժողովրդի կողքին, Հայրենի պետության կողքին»։

Մենք ընդմիշտ փակել ենք մեր տառապալից անցյալի ողբերգական պատմությունը, որը գրված է մեր հանճարեղ պատմիչների սրտի արյունով։ Մենք սկսել ենք մեր նոր ոսկեդարի նոր պատմությունը և համոզված ենք, որ այդ լուսաշողուն պատմության կենսաշունչ էջերի մեջ շողշողալու է Ձեր անունը, զի համոզված ենք, որ Ձեր գահակալության ժամանակաշրջանը լինելու է մեր ազգային իղձերի, դարավոր երազանքների լիակատար իրականացման ժամանակաշրջան։

Այս համոզմունքով, թույլ տվեք մեր փոքրիկ կոլեկտիվի անունից բացագանչել.

Թո՛ղ երկար ապրի, թո՛ղ հավերժ ապրի մեր երիտասարդ, մեր իմաստուն, մեր պայծառ Հովվապետը։ Թո՛ղ Նրա երջանկության աղբյուրը լինի մեր մշտազվարթ, մեր արևավառ, մեր ծաղկուն Հայաստանը, Սովետների հզոր Միության իրավահավասար անդամը։

Պրոֆ. Ա. Աբրահամյանը ևս, շնորհավորելով Վեհափառ Հայրապետին, ասաց.

Այստեղ հանդես եկան տարբեր բնագավառների և մասնագիտությունների մարդիկ և Վեհափառին գովաբանեցին ամեն մեկն իր տեսանկյունով. մեկը նշեց Վեհափառի շինարարությունը, մյուսը՝ միաբանության մեջ ստեղծած կարգ ու կանոնը, մի երրորդը՝ Անմերում կատարած կազմակերպչական աշխատանքը և այլն։ Ես մասնագիտությամբ պատմաբան եմ և ուզում եմ Վեհափառի

գործունեությանը գնահատել պատմարանի տեսանկյունով։

Իմ կարծիքով, երբ մենք ուզում ենք գնահատել մեր Վեհափառի միամյա գործունեությունը, պետք չափանիշ ընդունենք ո՛չ թե նրա այս կամ այն սկսած ձեռնարկը, այլ մեր ազգային-եկեղեցական հիմնական բարեմասնությունները. ո՛րքանով է մեր Վեհափառն օժտված մեր մեծագործ և ազգային-եկեղեցական պատմության մեջ այնքան առանձնացող հայրապետների առաքինություններով։

Վեհափառի միամյա գործունեությունը, ինչպես և մեր նրա հետ ունեցած ծանոթությունը, մեզ բերել է հաստատ այն համոզման, որ նա զարդարված է մեր խոշորագույն հայրապետների երեք մեծագույն առաքինություններով. այդ հայրենասիրությունն է, ժողովրդասիրությունը և եկեղեցասիրությունը։

Այդ առաքինությունների առաջին ցայտուն արտահայտությունն այն եղավ, որ նա երբ Ազգային-եկեղեցական ժողովի կողմից ընտրվեց Գահակալ, եկավ Մայր Աթոռ և ստանձնեց այս վերին առաքելական ծանր և պատասխանատու պաշտոնը։

Հավատարիմ մեր ականավոր հայրապետների, մասնավորապես հանգուցյալ Գևորգ Զ Կաթողիկոսի որդեգրած հայրենասիրական ուղղության, մեր Վեհափառը սիրո փոխհարաբերություն ստեղծեց Հայրենի կառավարության հետ։ Եվ, վերջապես, նա իր գահակալության կարճ ժամանակամիջոցում ցուցաբերեց հայրական հոգատար վերաբերմունք արտասահմանի մեր տարագիր հայության նկատմամբ և անձամբ մեկնեց արտասահման՝ ծանոթանալու իր համայնքների դրության հետ։

Ահա այս երեք առաքինությունների մեջ ենք մենք տեսնում Վեհափառի մեծությունը։ Այդ առաքինությունները նկատի ունենալով ես կարծում եմ, որ այսօր Վեհի տոնախմբության պատիվ են բերել ներկա գտնվելու մեր Հայրենի կառավարության ներկայացուցիչը՝ հանձինս Հ. Գրիգորյանի, մեր սիրելի Վարպետը և արտասահմանի մեր հյուրերը՝ հանձինս գերաշնորհ Ռուբեն արքեպիսկոպոսի, գերաշնորհ Սիոն արքեպիսկոպոսի և հոգեշնորհ Շահե վարդապետի։

Եվ այս երեք առաքինություններն են, որ մեզ հույս են ներշնչում, որ Վեհափառը կկարողանա մեծագույն վարպետությամբ մեր եկեղեցական նավը առաջնորդել փոթորկոտ ծովի մեջ։

Թող ներվի ինձ, որ ես իմ բաժակաճառը չպիտի վերջացնեմ ուրիշների նման Վեհափառին երկար կյանք ցանկանալու ավանդական բարեմաղթությամբ. Վեհափառը երիտասարդ է և դա ինքնին հասկանալի է։ Վեհափառը վերջերս ձեռնարկել է մի շարք օգտակար գործեր. ես խոշորագույն հաջողություններ եմ ցանկանում նրան՝ իր սկսած մեծածավալ աշխատանքներում։

Ակադեմիկոս նկարիչ Մ. Սարյանը իր ողջույնի խոսքում ասաց.

—Ես մրցել չեմ կարող ճառասաց ընկերների հետ, բայց ես էլ ուզում եմ անպայման խոսել և իմ զգացմունքները արտահայտել այս հանդիսավոր առթիվ։

Վեհափառը մեր կառուցող հայրապետներից է։ Հայաստանում ահագին քանակությամբ հին կոթողներ կան, էջմիածնից սկսած մինչև ուշ դարերի կոթողներ։ Ինչպես հայ ժողովրդի գլխից, այնպես էլ մեր պատմական այդ կառույցվածքների վրայով անցել է ժամանակի ավերիչ ձեռքը. շատ բան փչացել է։ Պետք է վերանորոգել, պետք է վերականգնել Հռիփսիմեն, Գայանեն, Շողակաթը։ Ես ցանկանում եմ, որ այդ կոթողները վերականգնվեին այնպես, ինչպես կան, առանց նրանց մեջ մտցնելու էժանագին ճաշակ, այլ վերականգնվեն կլասիկ, հայկական իսկական ոճով և երանգներով։

Ես եղել եմ Իտալիա, Եգիպտոս և այլուր, տեսել եմ ուշադիր վերաբերմունք հնությունների նկատմամբ։ Ես կցանկանայի, որ Դուք, Վեհափա՛ռ, Ձեր հնարավոր միջոցներով սկսեիք և աներիք այն, ինչ Ձեզանից կախված է այդ կոթողների վերականգնման համար։

Ցանկանում եմ Ձեզ առողջություն, որ Դուք մեր օրերում դառնաք կառուցող, որ օտարները տեսնեին ասեն. «Ի՜նչ մեծ ժողովուրդ է եղել հայ ժողովուրդը»։

Ճարտարապետ Մազմանյանը իր ողջույնի խոսքում ծանրացավ հայ ժողովրդի շինարարական ստեղծագործական կարողությունների վրա և ասաց.

—Հայ ժողովուրդը շինարար ժողովուրդ է։ Նույնիսկ մեր ժողովրդական բանահյուսությունը տոգորված է այդ շինարարության ոգով։ Վերցնենք, օրինակ, ժողովրդական «Անտունի»-ն։ Մեր տարագիր ժողովուրդը իր վշտերն է արտահայտում շինարարական պատկերներով. «Կոտրել են գերաններ, խախտեր են սներ, բույն պիտի դնեն մեջ վայրի հավքեր»։ Հանրածանոթ «Ծիծեռնակ» բանաստեղծության մեջ ես տեսնում եմ նույն պատկերը։ Սիամանթոյի, Վարուժանի, Իսահակյանի, Չարենցի գործերում կան շինարարական պատկերներով հագեցված բանաստեղծություններ։ Էլ չեմ խոսում մեր հոյակապ ճարտարապետության մասին։ Շինարարական այդ ոգով վարակված են նաև մեր կաթողիկոսները՝ Գրիգոր Լուսավորիչը, որը կանգնեցրեց Էջմիածնի տաճա-

կան Տաճարը, Կամիտաս Կաթողիկոսը՝ մեր ճարտարապետության գեղեցիկ նվաճումներից Հռիփսիմեն, ներսես Գ Շինողը, որը կառուցեց Զվարթնոցը, որն իր նմանը չունի համայն աշխարհի ճարտարապետության մեջ։

Ես պետք է ասեմ, որ կարճ ժամանակաշրջանում մեր Վեհափառ Հայրապետը Հռիփսիմե, Շողակաթ, Գայանե և մյուս վանքերի վերակառուցման գործում մեր ճարտարապետների մեջ ստեղծեց խորունկ հետաքրքրություն և ջերմ սեր դեպի այդ ճարտարապետական կոթողները և մենք հաճույքով կատարում ենք վերակառուցման աշխատանքները։

Վեհափառ Հայրապետը մտնում է արգասիք մեր շինարար կաթողիկոսների շարքը։ Ինչ եռանդով նա սկսել է, նույն եռանդով էլ թող ավարտի իր շինարարական գործունեությունը, և նա պատմության մեջ կթողնի լուսավոր ու անմոռանալի հիշատակ։

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի և ընթերցողների անունից Վեհափառ Հայրապետին ողջունեց պ. Ա. Հատիտյանը, երկար կյանք և արդյունաշատ գործունեություն մաղթելով Վեհափառ Հայրապետին։

Վերստուգիչ Հանձնաժողովի անունից խոսք առավ պ. Դ. Ծեքմեզյանը և ասաց.

«Վեհափառ Հայրապե՛տ.

Ձեր օծման առաջին տարեդարձի այս երջանիկ առիթով, Ձեր թանկագին կյանքի համար բաժակ բարձրացնելը մեծ երջանկություն և պատիվ է նաև Վերստուգիչ Հանձնաժողովի համար, որն ամեն ջանք կգործադրի, որպեսզի անթերի ընթանան Մայր Աթոռի տնտեսական-ելեմտական գործերը։

Լուսավորչակերտ Ս. Էջմիածինը հայ հոգու խորանն է, հայ հավատի վեմը, որի վրա անշեջ վառվում է հայու սիրտը՝ Լուսավորչի կանթեղը։

Դուք, Վեհափառ Հայրապե՛տ, մեծ Լուսարարապետն եք այդ լույսի։

Թո՛ղ այդ լույսը ճառագե հավիտյան հրաշափառ։ Թո՛ղ այդ լույսը ջերմացնի հայ ժողովուրդն աշխարհասփյուռ։ Թո՛ղ նրա շողերը հասնեն նաև նրանց, որոնք գիտակցաբար, թե անգիտակցաբար, արտասահմանի հայ ժողովրդի մի մասը տանում են դեպի անավոր ազետ։

Շա՜տ են շողացել սրերը, շա՜տ են որոտացել մրրիկները մեր երկրում, բայց մեր գլուխները միշտ բարձր ենք պահել, քանի որ մեր հայացքները միշտ հառել ենք մեր հոգու Տաճարին՝ Ս. Էջմիածնին։ Այժմ նույնպես, կանցնեն բոլոր տեսակի քամիները, իսկ Էջմիածինը կմնա, ինչպես մեր հավիտենական Արարատը»։

Պաշտոնական այս հաչկերույթին սիրված բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը խորունկ ապրումով և ներշնչումով արտասանեց իր բանաստեղծություններից «Խոսք իմ որդուն»-ը և Արարատին նվիրված մի գեղեցիկ քերթված, արժանանալով բոլոր ներկաների ջերմ ու սրտագին շնորհավորության։

Բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետը իր քաղցր ձայնով երգեց մի շարք երգեր, Դավիթ բեկի արիան՝ «Ո՜հ, իմ չքնաղ, սիրուն Հայրենիք»-ը արժանացավ ջերմ ընդունելության, ստեղծելով հայրենասիրական խանդավառ մթնոլորտ սեղանի շուրջը։ Իսկ Տ. Մեսրոպ վարդապետ Աշրաֆյանը (Փայլակ Միածան) կարդաց իր «Էջմիածին» խորագրով գեղեցիկ քերթվածը։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի դահակալության առաջին տարեդարձի առթիվ տրված ընդունելություն-ճաշկերույթը անցավ վերին աստիճանի խանդավառ, ուրախ և ջերմ մթնոլորտի մեջ։

Վերջում, ծափահարությունների տակ, խոսք առավ Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնեց իր դահակալության առաջին տարեդարձի առթիվ հայտնված համազգային անկեղծ ու ջերմագին զգացմունքների ու բարեմաղթությունների համար, օրհնեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Հայրենի պետությունը և բովանդակ Ազգն Հայոց։

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով վերջացավ ընդունելությունը։

# ՀԱՆԴԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

*Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ, Հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության անունից, ճեմարանի հանդիսությանց մեծ դահլիճում, հոկտեմբերի 7-ի երեկոյան ժամը 7.30-ին կազմակերպվել էր հարգանքի երեկո։*

*Այդ երջանիկ առիթով, Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը իրենց որդիական հարգանքի և երախտագիտության սրտագին տուրքն էին միացնում համազգային ուրախության այդ տոնակատարության կապակցությամբ արտահայտված ողջույններին և բարեմաղթություններին։*

*Ժամը 7.30-ին Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվեց ճեմարան։ Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Տ. Եղիշե, Տ. Սիոն, Տ. Սահակ արքեպիսկոպոսները, Տ. Վարդան, Տ. Եզնիկ սրբազանները, Տ. Շահե, Տ. Կոմիտաս, Տ. Պարգև, Տ. Վահան, Տ. Եղիշե, Տ. Հայրիկ, Տ. Մուշեղ, Տ. Տիրայր, Տ. Մեսրոպ, Տ. Խորեն, Տ. Նահապետ վարդապետները, Մայր Աթոռի միաբանությունը, Վարչապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի պաշտոնեությունը և մասնավոր հրավիրյալներ։*

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի ժամանումը ողջունվեց որոտագին ծափահարություններով։ Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց հանդիսությանց սրահը, ուր գրավեց նախագահի Աթոռը։ Նախագահության սեղանի շուրջը տեղ գրավեցին Տ. Եղիշե, Տ. Սիոն արքեպիսկոպոսները, Վարչապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի բոլոր անդամները և բարձրապատիվ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը։*

*Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձին նվիրված հանդիսությունը բացվեց Հայկական ՍՍՌ Պետական հիմնով, որը կատարեց ճեմարանի նվագախումբը։ Ապա սրահում թնդաց Մայր Աթոռի հիմնը՝ «Էջ Միածինն ի Հորէ», երգված ճեմարանի ուսանողներից կազմված երգչախմբի կողմից։*

*Հանդեսում բացման խոսքն ասաց ճեմարանի դասախոս պ.* **Արթուն Հատիտյանը**։ *Նա հանգամանորեն խոսեց մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի ընտրության, օծման և գահակալության պատմական նշանակության մասին, ընդհանրապես և ի մասնավորի ծանրացավ Վեհափառ Հայրապետի մեկ տարվա հոգևոր, վանական, մշակութային, շինարարական, կազմակերպ-*

յական, տնտեսական, վերանորոգչական գործունեության, արտասահման կատարած ուղևորության, Կաhիրեի Եպիսկոպոսական ժողովի պատմական նշանակության և այս Վեհափառ Հայրապետի հետագա տարիների խանդավառ և հուսադրիչ հեռանկարների և ծրագրերի վրա։

Ճեմարանի երգչախումբը հաջողությամբ երգեց «Ո՜վ մեծասքանչ»-ը։ Ուսանող Ի. Սեյրանյանը արտասանեց Վ. Թեքեյանի «Եկեղեցին Հայկական» քերթվածը։ Ապա հոգևորական Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը, հանուն Ճեմարանի տեսչության, կարդաց հետևյալ բովանդակալից ուղերձը։

«Վեհափառ Հայրապետ, գերաշնորհ սրբազան հայրե՛ր, թանկագին հյուրե՛ր, հոգեշնորհ հայրե՛ր և սիրելի ուսանողնե՛ր.

Պարզ ճշմարտություն է, որ ժամանակը իմաստավորվում է միայն մարդու կողմից ու մարդու համար, և այդ իսկ է պատճառը, որ երբեմն ժամանակի մեկ որևէ միավոր շատ ավելի արժեքներ ու հիշատակներ է թողնում, քան նույնօրինակ բազմաթիվ միավորներ։ Ձերդ Ս. Օծության գահակալության տարեդարձի օրը ես շատ ավելի արժեքներ ու հիշատակներ բերած ժամանակի մեկ փոքր միավոր է, որը սակայն առնվազն հարգանք և սեր է թելադրում։ Տարի է անցել և այդ տարվա բոլոր օրերը եղել են երկունքի պահեր, որոնք տվել են իրենց լիարժեք ծնունդը, կրոնական, եկեղեցաշեն և ազգային կյանքի տարբեր մարզերում։ Այդ բոլորի մասին դժվար է՝ եզրակացություն ու գնահատական տալ այսօրվա այսքան սեղմ կարճության մեջ, թեկուզ նրանք դեռևս կամ սկիզբ են, կամ էլ հազիվ ընթացքի մեջ մտած։ Ես միայն կասեմ, որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի և Նրա ուսանողության հանդեպ Ձերդ Սրբության հետևողական հոգածությունն ու սերը կենդանի վկաներն են Ձեր այն մեծ ճիգին, որով իղձն ունեք բուժելու բազմիցս մարտիրոսացած Հայաստանյայց Եկեղեցու բոլոր վերքերը, Նրա շինության և պայծառության համար։ Քիչ անգամներ չի նահատակվել այդ Եկեղեցին իր գոյության երկարատև դարերի ընթացքում, և Նրա բուժման կարելիություններից մեկն է եղած այն կենդանի օժանդակությունը, որը բերվել է մեր կրոնական դպրոցների ամթում կորածս խուցերից։ Մեր Եկեղեցու վերակենդանացման գործում իրենց որոշիչ մասնակցությունը բերելով հանդերձ, նրանք իրենց կամարների տակ ստեղծեցին շատ ու շատ արժեքներ մեր ժողովրդի մշակույթն ու հոգին կազմակերպելու, հարստացնելու և բացատրելու տեսակետից։ Եղել են նրանք ոչ միայն միտք ու մշակույթ թրծող ջերմացին հնոցներ, այլև մանավանդ հոգի մշակող այն դարբնոցները, որոնք հայրենանվեր և եկեղեցաշեն դարբինների հանճարի և բազուկների քրտնաջան աշխատանքի շնորհիվ մինչև այսօր մեր ճակատի վրա փառաբող լույսն են սփռել։ Անցյալը այդօրինակ դպրոցների՝ կարող է մեզ պարտադրել միմիայն չնահանջող երախտագիտություն ու պաշտամունք։ Ահավոր կերպով տառապած մեր ժողովրդի դպրությունը, զգալու իր սեփականը, նկարագիրը անաղարտ պահելու հերոսական ճիգը խթանելու համար նրանք միշտ էլ վճռականությունն ու կարողությունն ունեցել են։

Մեր բոլոր իմաստուն հայրապետների, մեր բոլոր բազմերախտ հոգևոր հայրերի միտքն ու խիղճը մշտապես առնչված են եղել այն վսեմ տեսիլների հետ, որոնք կյանքի էին կոչվում նմանօրինակ դպրոցների մեջ մեր ստեղծագործ ժողովրդի կյանքը, հոգին, մշակույթը ծանրակշիռ արժեքներով բեղմնավորելու համար։

Դուք, Վեհափառ Տե՛ր, խոհեմ ու երջանիկ ժառանգորդն եք այն բոլոր լավագույն ավանդների, խոհերի ու հույզերի, որոնք Լուսավորչի կանթեղից կաթիլ առ կաթիլ թափվող լույսի և արցունքի ձևի տակ պայծառացրել են Ձեր միտքը, մեծացրել են Ձեր հոգին և լայնացրել են Ձեր սիրտը։ Այսօր, մեկ տարվա չափազանց կարճ ժամանակի ընթացքում շատ արժեքավոր հիշատակներ արձանագրելով Ձեր կյանքի և Հայաստանյայց Եկեղեցու պատմության էջերին, հպարտությունն ունենք ասելու, որ Ձերդ Սրբության շինարար ծրագրերի շարքին իր տիրական տեղն ունի Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը։

Մինչ այսօր Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի կատարածը շնորհակալ գործ էլ, նա արդեն ունեցել է իր օրերի տոնը և իր համեստ հունձը շատ ու շատ հոգիների սնունդ է տվել և մանավանդ պատրաստ է տալու առավել խոհեմությամբ ու նվիրվածությամբ։ Երջանկահիշատակ Գևորգ Զ Հայրապետի երախտիքն է այդ, և վստահ ենք, որ Նրա հոգին մեզ հետ է այժմ այս հարկի տակ, մեր ուրախության և մեր լավատես տրամադրությունների բաժնեկից։

Սակայն նկատի ունենալով հաջողություններից շլանալու Ձեր մշտական թելադրությունը Ձեր շրջապատին, գիտենք հաստատ, որ Ձեր պահանջը Հոգևոր Ճեմարանից շատ ավելին է։ Գիտենք միաժամանակ, որ պատահարար չէ, որ իր նախորդների պարտականությանց ու դերի մեջ եք ցանկանում տեսնել նրան. չէ՞ որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը իր առաքելությունը չի ավարտած.

չէ՞ որ նա այսօր էլ կարող է իր բաժինը բերել հայ մշակույթի ճոխացնելու գործին, չէ՞ որ մանավանդ այսօր ես ողբերգորեն գանգատում են մարթել Հայաստանեայց Եկեղեցին իր իսկ կարծեցյալ ժխտողներից ոմանք... Այսօր անհամար փաստեր ցավագրությամբ ստորսկել է Նրա խնկավետ կամարների տակ և անզուսպ հանդգնությամբ տրամագիր է կործանել նրա շողակաթ գմբեթը։

Դուք, Վեհափառ Հայրապե՛տ, իմաստունորեն կանխատեսելով խորությունը սպառնացող Դատապար ողբերգության, առանց երբեք կորցնելու Ձեր շինարար լավատեսությունը, փափագ ու որոշում ունեք աստվածահաճույց Մայր Աթոռի շուրջ ստեղծելու որքան վիճակից, նույնչափ և Հայաստանեայց Նվիրական Եկեղեցու բոլոր ավանդներին ու սրբությանց նախանձախնդիր հոգևորականների մի սերունդ։ Գիտենք, որ այդ Դուք պահանջում եք առավելապես Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանից։

Սիրելի Վեհափառ Տե՛ր, Ձեր գահակալության տարեդարձի այս հանդիսավոր և արտասովոր պահին, թույլ տվեք հավաստիացնել Ձեզ, որ մեր Հոգևոր Ճեմարանը Ձերդ Սրբության հայրական հոգածության շնորհիվ արդեն իսկ ի վիճակի է խոստանալ Ձեզ, որ նույն մոտիկ ապագայում կտա Ձեզ այդ սերնդից արժանավոր ներկայացուցիչներ։ Այսօր, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը կարող է հայտարարել բոլորին, որ ինքը շուտով Հայաստանեայց Եկեղեցուն կընծայաբերի այնպիսի հոգևոր սպասավորներ, որոնք ամեն օր և ամեն ժամ պատրաստ կլինեն իրենք իրենց պատարագել Լուսավորչի, Մեսրոպի և Թաթևացու Ս. Խորանի վրա, եթե ապագան այդպես պահանջի։ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը խոստանում է և ուխտում, որ երբեք Ձեզ հուսախաբ չի անելու, Լուսավորչի ամիշտ սլացիկ կանթեղի շողքը այնտեղ անպակաս է լինելու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Նրա Նախանձախնդիր Հայրապետությանը անձնվեր ծառան է լինելու։

Թույլ տվեք երկնի ամենապարգև Աստծուն խնդրել, որ Ձեզ բեղմնավոր և երջանիկ երկար տարիներ պարգևի։ Թո՛ղ Նրա աջը միշտ ոսկեզօծի Ձեր օծյալ գագաթը։

Թո՛ղ շեն, պայծառ և անսասան մնան մեր սուրբ ու սիրելի և Նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Հայոց Հայրապետությունը, նրանց հանդեպ փորձված բոլոր ոտնձգությունները թո՛ղ Աստված խափանի։

Երջանիկ կյանք և պտղավետ գործունեություն Ձեզ, Վեհափառ Հայրապե՛տ։

Ապա Հ. Թեմուրյանը երգեց «Լուսավորչի կանթեղը» (խոսք՝ Հովհ. Թումանյանի, երաժշտություն՝ Հ. Դեպոյյանի)։ Հետո Ճեմարանի և լսարանի ուսանող բարեշնորհ Հովհաննես սարկավագ Դանիելյանը, հանուն իր սարկավագ եղբայրների, կարդաց հետևյալ ուղերձը.

«Վեհափառ Տե՛ր.

Հոգևոր Ճեմարանի սարկավագների և բարձր դասարանի ուսանողների անունից, լավագույն ու սրտագին պարտականությունն ունեմ Ս. Լուսավորչի Աթոռի վրա Ձերդ Վեհափառության գահակալության առաջին ու երջանիկ տարեդարձի առթիվ, որդիական ակնածանքով ներկայացնելու Ճեմարանի ամբողջ ուսանողների սերն ու նվիրումը, երախտագիտությունն ու սրտագին շնորհավորանքը։

Մեկ տարի է անցել այն օրվանից, երբ Ձերդ Վեհափառություն արժանավոր ընտրությամբ վերացվեց այն սև բորբ լռաշրջանից և բազմերախտ Ս. Գրիգոր Լուսավորչի Գահից։

Հայ Եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը ցնծության մեջ էին, որովհետև հայ հավատի օրրան և Սրբության Սրբոց Ս. Էջմիածինը ունեցավ իր արժանավոր Գահակալը։

Ս. Էջմիածինը անցյալում բազմաչարչար հայ ժողովրդի դարավոր կյանքի ալեկոծ և խռովահույզ ծովում եղել է անխորտակելի լույս փարոս։ Եվ հայը, որ իր ֆիզիկական գոյությունը պահպանել է և հասել մեր այս երջանիկ օրերին, իր գոյատևման, իր կյանքի և իր բախտավորության համար շատ բանով պարտական է Լուսավորչի այս պատմական Աթոռին և Նրա լուսարձակ հայրապետներին։

Այժմ, Վեհափառ Տե՛ր, Աստուծո կամքով և Ազգի ընտրությամբ, Դուք եք Լուսավորչի կանթեղի արթուն լուսարարապետը, կանթեղ, որը դարեր շարունակ լույս տված Քրիստոսից, լուսավորել է մեր Եկեղեցու և ժողովրդի ուղին դեպի փրկություն։ Մեր հայրապետների ձեռքով վառված հայ հավատի, հայ դպրության, հայ մշակույթի այդ անշեջ հուրը միշտ վառ է եղել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի հին և նոր ուսանողների սրտում։

Մեր ճեմարանները հանդիսացել են այդ սրբազան լույսի վառարանները, որտեղ ստեղծվել, զարգացել ու այդ լույսի պես պահվել, պահպանվել են մեր հոգեկան մշակութային անկրկնելի արժեքները։

5-րդ դարից սկսյալ մինչև այսօր, մեր հոգևոր կրթարանների ուսանողությունը կոչված է եղել վառ պահելու Ս. Լուսավոր-

ւէ, Ս. Սահակի, Ս. Մեսրոպի, Ներսէս Շնորհալու, Հայրիկի, Կոմիտասի, Գէորգ Զ-ի անուններով սրբագործված հայ ժողովրդի դպրության, հույսի և հավատի սրբավայրը։

Մենք՝ երիտասարդ սարկավագներս, տոգորված մեր երանելի հայրապետների եկեղեցասիրությամբ, հայրենասիրությամբ, և Վեհափառ Հայրապետիդ կենդանի օրինակով ներշնչված, այժմ այս հանդիսավորության առիթով, ծնրադիր, համբուրում ենք Ձերդ Ս. Օծության Ս. Աջը և շնորհավորում Ձեր գահակալության առաջին տարեդարձը։ Աղոթքներ ենք առաքում առ Աստված Ձերդ Վեհափառության քաջառողջության և արևշատության համար։

«Երկարեսցէ Տէր զաւուրս Ձեր, ի փառս և յերջանկութիւն Ս. Եկեղեցւոյ և Ազգիս Հայոց»։

Այս տարվա նոր ընդունված ճեմարանականների զգացմունքների և խոհերի թարգմանը եղավ Միհրան Այվազյանը, որն իր գրավոր ուղերձի մեջ ասաց.

«Վեհափառ Հա՛յր.

Թույլ տվեք ինձ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի նոր ընդունված սաների անունից շնորհավորել Ձեզ Ձեր գահակալության առաջին տարեդարձի առթիվ։

Այս հանդիսավոր պահին մենք՝ Հոգևոր Ճեմարանի ուսանողներս, մեր երախտագիտության խոսքն ենք հայտնում Ձերդ Վեհափառությանը այն ջերմ հայրական հոգատարության համար, որով շրջապատված ենք այս սուրբ հարկի տակ։

Շնորհակալ ենք Ձեզ այն հոգևոր կրթության և բարոյական դաստիարակության համար, որն ստանում ենք այստեղ, Ձեր հայրական անմիջական հսկողությամբ և ցուցմունքով, Հոգևոր Ճեմարանի ուսուցչական և տեսչական կազմի ջանքերով։ Հոգևոր Ճեմարանի նպատակն ու ոգին Ձեր շնչով և Ձեր ղեկավարությամբ հոգեպես ոգևորում են մեզ և առաջ մղում։

Անցյալում Ս. Էջմիածինն էր, որ գլխավորում էր հայ ժողովրդի հոգևոր և մշակութային գործունեությունը։ Հայ հոգևորականները մի ձեռքում սուրբ խաչը, մյուսում սուրը բռնած մեր սուրբ հավատի և Հայրենիքի պաշտպանության դիրքերում են կանգնած միշտ։

Այսօր մենք հպարտությամբ և երախտագիտությամբ հիշում ենք Սահակ Պարթևին, Մեսրոպ Մաշտոցին, Ղևոնդ Երեցին, ոսկեգրիչ Եղիշեին և մյուս բազմաթիվ հայրենասեր և հավատավոր եկեղեցականների անունները, որոնք իրենց լուսավոր կերպարներով զարդարում են մեր ժողովրդի պատմությունը, հոգին, մշակույթը։

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը եղել է այն հոգևոր ու լուսավորական կենտրոնը, որտեղ դաստիարակվել են մեր հանճարեղ վարդապետներն ու մատենագիրները, որոնք իրենց կյանքն ու տաղանդը, կարողություններն ու շնորհները ի սպաս են դրել հայ ժողովրդի հոգևոր և իմացական մշակույթի զարգացմանը։

Այսօր դարձյալ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, հավատարիմ մնալով իր դարավոր ավանդությանը, Ձեր ջանքերի շնորհիվ և Ձեր գահակալության տարիներին կդառնա հայ հոգևոր մշակույթի կենտրոններից մեկը։ Գիտակցելով մեր վրա դրված պարտականությունները, այս հանդիսավոր պահին խանդավառությամբ խոսք ենք տալիս Ձեզ, Վեհափառ Հայր, սովորել և իրագործել Ձեր հույսերը՝ հետագայում դառնալու լավ հոգևորականներ և մեր ժողովրդի հոգևոր սպասավորներ։ Ս. Էջմիածնի՝ Լուսավորչի Մեծ Տան ուխտին հավատարիմ մնալով, մենք անշահախնդիր կերպով կուխտենք հայ ժողովրդին, Եկեղեցուն և մեր բազմադարյան մշակույթին ծառայել։

Արտահայտելով մեր սրտաբուխ երախտագիտական խոսքը, մաղթում ենք Ձերդ Ս. Օծությանը արևշատություն, անսպառ ուժ և կորով, որպեսզի բարգավաճի հայ ժողովրդի հոգևոր կյանքը, ծաղկի նրա հոգևոր գործունեությունը։

Թող ամենակարող Տերը բազմապատկի Ձեր կյանքի տարիները ի փառս մեր Ս. Եկեղեցու պայծառափայլության և ուրախություն մեր հավատացյալ ժողովրդին»։

Ճեմարանականներ Հակոբ Ծննեցյանը և Աբրահամ Մարգարյանը խորունկ ապրումով արտասանեցին առաջինը Հովհաննես Հովհաննիսյանի «Էջմիածին» բանաստեղծությունը, իսկ երկրորդը՝ «Սայլս չինար Էջմիածին» գեղեցիկ տաղը։

Ապա խոսք տրվեց գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանին, որ ասաց.

«Նորին Ս. Օծության բարեհաճությամբ և հրավերով կուզեմ քանի մը խոսք ընել ուսանողության։

Ձեզի համար հաճելի է անշուշտ, որ Վեհափառ Հայրապետէն, ուսուցիչներէն հեռու խոսին մարդեր, որոնք կապրին հեռո՜ւ հեռո՜ւ մեր երկրի սահմաններէն, բայց հոգիով մոտ են Ձեզ և կծառայեն Եկեղեցիին։

Դուք, շնորհիվ Նորին Ս. Օծության իմաստուն առաջնորդության և ձեր ուսուցիչներու ջանքին, Ս. Էջմիածնի այս վեհաժայրին մեջ ձեզի հետ ունիք Տեր դարերը և բանակները այն հոգիներուն, որոնք Էջմիածնի պատերուն անցին անտեսանելիորեն կհսկեն հարստացնելով ձեր հոգին։ Ով որ Էջմիածնին

կեանքի, կեանքի մեր պատմութեան, մեր անցեալին և մեր Եկեղեցւոյ դարաւոր խորհրդին, որ Էջմիածին քարեղէն շէնք չէ միայն, այլ ոգեղէն իրականութիւն և աղբիւր փրկութեան մեր ժողովրդին։

Այս հանդիսաւոր առիթով խօսք առաւ նաև բարձրաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկեան.

«Սիրելի ուսանողնե՛ր, այսօր մեր խորհուրդները կեդրոնացուցինք Վեհափառ Հայրապետի անձին ու գործին շուրջ։ Վստահ եմ, որ ուսանողներու սրտաբուխ և անկեղծ ձայները շատ աւելի հրճուանք պատճառեցին Վեհին, քան թէ նախորդներուս ճառերը։

Ամէն մի գաղափար պէտք ունի դրօշի, սրտի։ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր դերը կատարելու համար պէտք ունի իր զօրքին, ինչ Հայ Եկեղեցին՝ նոր առաքյալներու։ Տեսնելով վեղարաւորները, մեր սիրտը կը հրճուի։ Հիսուս առաքյալներով սկսաւ իր առաքելութիւնը։ Դուք բախտաւոր պէտք է զգաք, որովհետև Վեհափառն է Ձեր ուսուցիչը։ Քիչ հայրապետներ եղեր են, այդ իր հոգին կը հրճուի ձեզ տեսնելով. «Ահա Ես և մանկունք իմ»։ Այսպէս ըսելու իրաւունք ունի Ան։

Երջանկայիշատակ Գէորգ Զ Կաթողիկոսի գործը իր պսակը առած է։ Ներկայ Հայրապետը կշարունակէ Անոր գործը։

Արտասահմանի համար պէտք ունինք հոգեւորականներու։ Մենք ևս կհրճվինք, տեսնելով ձեզ շուտով վեղարներու տակ, ստանձնելու համար սուրբ գործը։ Մենք պէտք ունինք նոր առաքյալներու։ Մեր եկեղեցւոյ շուրջ կրթական ժառանգաւորաց վարժարանները անբավարար են, ժողովուրդը ծարաւի է Աւետարանին, հայրենասիրութեան։ Հայրապետը ուրախ է դնելով ձեր վրա Իր հոյսը։ Արտասահմանի հայութիւնը հոյս ունի, որ Էջմիածինը ձեզմով նոր հոյս և համար կներշնչէ։ Դուք պէտք չէ հուսահատիք, որովհետև Աստված ձեզի հետ է։ Դուք եք մեր ժառանգաւորները և աւանդապահները Հայ Եկեղեցիին և Լուսավորչի կանթեղին, որն առանց պարանի կախ է ընկած երկնքից և կլուսավորէ Հայոց Աշխարհը։

Դուք երջանիկ սերունդ եք, ոչ միայն անոր համար, որ Հայրենիքը կծաղկի ձեր շուրջը, այլ նաև՝ որովհետև Նորին Ս. Օծութեան ղեկավարութեամբ կծաղկէ Հայ Եկեղեցին Հայրենի Երկրին մէջ։ Հետևեցէք Անոր, որպեսզի ըլլաք Հայ Եկեղեցւոյ առաքյալները։

Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետի փափագով խօսք առաւ նաև Անթիլիասի միաբան բարձրապատիւ Տ. Շահէ վարդապետ Աճէմեան.

«Սիրելի՛ սաներ, Վեհափառ Հայրապետի փափագն է իմ համեստ խօսքը ըսել ձեզ, այդ համար իմ ալ զգացումը։ Ես ալ ունեցայ զգացում, որ ձեզի հանդէպ քիչ մը խղճահարութիւն է։ Դուք բաղդաւոր պատանիներ ունիք ուրախանալու։ Անհատական հոգեւորականի ուրախութիւնը ուրիշ է. մենք մեր ուրախութիւնը կ՚ունենանք մեր առաքելութեան հաջողութիւններուն մէջ։ Ձեր առաջ կայ ապագայ լայն դաշտ մը։ Դուք պիտի երթաք աւետարանելու նոր բազմաց եկեղեցիներու մէջ։ Դուք Աւետարանի լոյսը պիտի տանիք թող հոգիներուն հերա, դուք պիտի տանիք համբաւը, որ կայանի ներկայ սերունդին մէջ։ Անշուշտ, ձեր մեծագոյն ուրախութիւնը պիտի ըլլայ այն, որ դուք ձեր գործունէութեամբ օգտակար բան մը բրած եք և այդ պիտի ըլլայ վարձատրութիւնը ձեր առաքելութեան։

Կ՚մաղթեմ ձեր առաքելութեան մեծ հաջողութիւն։ Դուք հանձին Նորին Ս. Օծութեան ունիք առաքյալ մը որպէս ուղեցոյց։ Դուք ևս պատրաստվեցէք հոգեպէս, անխարդախ զգացումով աշխատելու ձեր հօտին մէջ։ Ճշմարիտ եպիսկոպոսը, որ շուտով դալու է, իմ ալ ուսուցիչն է եղած։ Ան ջանացած է իմ մէջ սերմանել բարին, սեր դէպի Հայրենիքը և Եկեղեցին։ Հանձին անոր, դուք պիտի գտնէք հայր մը ձեր հոգիին ծաղկումին համար։ Պիտի մաղթեմ, որ կարենաք ժառանգել իր բարոր հոգին, որ հոգեւորականի իրական և անխարդախ նկարագրով նուիրված է Հայաստանեայց Եկեղեցիին։ Պիտի տեսնէք, թէ ան ալ հոգեւորական մըն է, որ իր ուրախութիւնը գտած է լաւ առաքյալ մը ըլլալու հոգեկան գոհացումին մէջ»։

Պաշտոնական այս սրտագին խօսքերից հետո, երգչախումբը հանդիսութեամբ և հաջողութեամբ երգեց «Ամէն Հայի սրտից բխած» Հայրապետական մաղթերգը, որն ունկնդրվեց հոտնկայս, խորունկ ակնածանքով և պատկառանքով։

Այս ընդհանուր խանդավառութեան մթնոլորտում և ծափերի տեղատարափի տակ խօսք առավ Վեհափառ Հայրապետը.

«Երբ մեր Հայրերը կուղղվէին դէպի Հոգեվոր Ճեմարան, պէտք է խոստովանինք, թէ հոգնած վիճակի մէջ էինք, այսօրվան հանդիսավոր արարողութիւններէն և ընդունելութիւններէն հետո: Սակայն ձեր մէջ գալով Մեր հոգնութիւնը փարատեցաւ: Ոգևորութիւն մը իջավ մեր սրտերուն մէջ, երբ լսեցինք ձեր երգը, ձեր արտասանութիւնները և ձեր խօսքը, ծրագրով մը, որ ճաշօք է կազմված: Մենք Մեր գոհունակութիւնը կհայտնենք հանդեսը կազմակերպող ուսուցիչներուն և ուսանողներուն:

Սիրելի՛ ուսանողներ. Քիչ առաջ լսեցիք ոգեշնչված, իմաստուն խոսքերը մեր սրբազաններուն և վարդապետներուն: Անոնց խոսքերուն մեջ գտանք մարգարիտ մտածումներ, կմաղթենք, որ պահեք և յուրացնեք զանոնք: Անոնք խոսեցան ճշմարտության և անձնավորության մասին և մաղթեցին, որ Դուք դառնաք ճշմարտությունները յուրացուցած անձնավորություններ: Մեզ համար շատ թանկագին բան է այս պատգամը: Մեր Հոգևոր Ճեմարանի մեծ նպատակը պիտի ըլլա ձեր նկարագիրները կերտել և ձեզ հասցնել անձնավորության կատարին:

Սիոն սրբազանը «օջախ» բառը հիշեց, որ մեզ հիշեցուց երանաշնորհ Գարեգին Կաթողիկոսը: Ի Տեր հանգուցյալ Հայրապետը, որ այստեղ էր մեծցած և աճած, երբ պաշտոնի բերմամբ կմեկներ արտասահման 1934 թվականին, այստեղ կար ոչ լավ կացություն մը միաբանության կյանքի համար: Մեկնելու պահուն, այդ կացության իբրև հետևանք, այստեղ մնացողները կխորհեին վերջ տալ միաբանական ճաշարանին և ամեն մեկը իր միջոցներով սնունդը պատրաստել իր խուցին մեջ: Գարեգին Կաթողիկոսը ճամբա ելլելե առաջ խորհուրդ էր ավեր, արցունքը աչքերուն, որ պահպանվի միաբանական սեղանը և «վանքի օջախը չմարի»: Ավա՜ղ, իր պատվերը հնարավոր չեղավ կատարել, մարեցավ վանքի օջախը և փակված մնացին Ճեմարանի դռները: Անցան օրեր, եկան նոր ժամանակներ, բացվեցան նոր հորիզոններ: Ս. Էջմիածնի լույսերը վառեցան: Միաբանական օջախը վառ է այսօր և ծուխը կբարձրանա ազատ և առավոտեն մինչև երեկո:

Տասը տարիներ առաջ Գևորգ Զ Հայրապետը բացավ Հոգևոր Ճեմարանի դռները: Անցյալ տարի մեր ուսանողներուն թիվը 20 էր, այժմ 30-ի կմոտենա, իսկ մի քանի տարի հետո պիտի հասնի 100-ի:

Այսօր Էջմիածնի մեջ նոր կյանք կծաղկի: Հոգևոր Ճեմարանը կեդրոնական տեղ մը կգրավե այդ կյանքին մեջ: Մեր բոլոր մտածումները կուղղվին անոր, և մեր նյութական միջոցները պիտի չխնայենք, որպեսզի Հոգևոր Ճեմարանը իր դասարաններով, ճաշարանով, իր հանրակացարանով հետզհետե ավելի բարեկարգվի: Մեր հնարավորությունները շատ են և անսահման, և մենք պիտի հասնինք մեր բոլոր հնարավորություններու օգտագործման, դնելով Ճեմարանը իր պատմական բարձրության վրա:

Մեր աղոթքն է առ Աստված. Մեր գործունեության առաջին տարեդարձին, որ Տերը ուժ և կարողություն պարգևե և հառաջ ընթանանք դեպի նոր նվաճումներ, դեպի նոր բարձունքներ, ի փառս Աստուծո, Ս. Էջմիածնի և հայ ժողովրդի: Թող օրհնյալ ըլլա Հոգևոր Ճեմարանը, ուսուցչական կազմը և ուսանողությունը: Ամեն»:

*Վեհափառ Հայրապետի հայրական խոսքերն ու պատգամը խորապես տպավորվեցին բոլոր ներկաների մտքերում և հոգիներում, և մանավանդ Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության երախտագետ սրտերում։*

*Երգչախումբը երգեց «Հայր մեր»-ը, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով վերջացավ այս գեղեցիկ գրական երեկոն։*

*Հոգևոր Ճեմարանի պատմության էջերի վրա այդ օրը մի գեղեցիկ և անմոռանալի էջ ևս ավելացավ։*

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
(Պատրիարք Հայոց Թուրքիոյ)

# ՈՍԿԵՂԵՆ ՄԵԾ ՈՒՌԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

«Տո՛ւր Կոմիտասին, Սուրբ Էջմիածին», կ'ըն-չէ՝ հեռուէն մեղանոյշ նուագը Կաթողիկէ զանգակատան։ Կարծացանք ան մեր ականջներուն, հիւսուած ու պաշնաւորուած՝ անդադրում թրթռումներովը դարերու և դեռ օդին մէջ ժուռ եկող ծիծղաձայն այլիներովը հեղհեղուն մարմրող դիլ կոչերուն՝ երբեմնի երկաթյա կամ փայտեղէն ժամահարին.— «Օրհնյա՜լ է Աստված...»— պատասխաններ է սրտառուչ մրմունջը շրթներուն հայ հավատավորին՝ երկնահայաց խաչակնքումովը կուրծքին։ Հայ շրթները՝ շարժած հայ հոգիէն, որ կցոլանա պրիսմակին մէջէն իր բյուրեղյա հավատքին։ Ինքն ալ շունչն է Աստուծո, կենդանի բոցովը Սիրո Հուրին՝ հոգացված, ներունդի սերունդ, ջերմիկ եռանդովը ավանդական բարեպաշտության։ Աստվածաշունչ և աստվածատուր է ան։

Հա՛ տեսիլը, վերանորոգված,—տարին տարի՛,— ո՛չ, այլ ժամանակի աներկհատ և անկշռելի բայլերուն հետ— «յուսակիրպ», բարձր և անեղ ՄԱՐԻ»-ուն, «Ոսկեղեն Մեծ Ուռը իր ձեռքին մէջ։ Եվ իր վայրէջքը— ողջացեալ, խոյացեալ, բստ նմանութեան արագաթև արծուոյ— «Եւ լոյս հոսեալ վերուստ ի վայր մինչև յերկիր հասանէր, և ընդ լուսոյն՝ զօրք անչափ և երկթևեանք՝ ի նմանի մարդկան, և թեք իբրև զհուրս»։

ooo

Այս Տեսիլը մյուս մարդուն, «Ի պարզեալ ճառեալ— հոգոց— և արքուն»: Տգիտության խավարի խոր վիհապին մէջ նետված և այսդորս եկած անկէ՝ աստվածգիտության լույսով ջահավոր «Լուսավորիչ Մարդը», որ կտեսնէ, պայծառ ու հստակ, հոգվո աչքերով, «Ճանապարհորդութեան ճանաչողութեամբ Աստվածու-րյան զորության անճեին ամանչելիմնե-րուն», «երկնային այցելությունն մեզ՝ Նորա-ստենի հայուն։

ԱՐԱԹԻ ՏԵՍԻԼՆԵՐ— հարուն ընդմամբ Արարիչ»-ին՝ ՄԻԱԾԻՆԻ և արենանուն արտաածին՝ Պարենածին՝ ՏԻՐԱԿՈՐԻ—, աստվածային և մարդկային, իրերախառնված և յաղագ հյուսված, համետ անբաժանելի միությամբ։

Եվ փառք, Սանդարամետ անդունդներուն, թե Սպանդարամետ հնարույթ արքության և իմաստության։ Խավարը ողիտության կամ սովերը «անգիտության» երկրպագու «Անծանոթ Աստուծոյն»: Կեւն-հարված Ոսկեղենին՝ յաղթատարած թանձր գետնին։ Կենչէ «մեծ ու անչափ դղրդյուն-որոտական շողության» ոգին կամ Աստուծմե հիմարեցուցված «աշխարհի իմաստության» ոգին։ Եվ ո՞վ պիտի կարողանար դիմանալ այդ բանդող, բայց նույն ատեն հրաշակերտող ուժեղ «բախման»-ին՝ Ոսկեղեն Ուռին ընդ։ Չէ՞ որ Միածնի աստվածային զորությունն է այն, այդ Ուռը որանչելագործ. Զորություն «Հրաշափառ և միշտ բարեխնամող Աստուծոյն, որ՝ հառավիտությամբ հայոց փրկություն կսկզբնավորէր, պարենական մեղապարտ այլէն լուսավորիչ ներհնյով մեզի» (Ճառական)։

Կասարի հիմեն մեհյանը հին աստվածներուն, Լույսին և Հուրին՝ տղոտ ողեղինացումով մը միայն, և կկանգնի Տաճարը՝ նոր. բայց ավելի քան հին աստվածները՝ «հիմնավորը Աստուծոյն, որոնց մէջ պայծառօրեն ոգեղինացած և խորհրդապաշտօրեն ծիսականացած ու կենսագործված են անոնք— այդ Ոսկին, այդ Լույսը և այդ Հուրը.— և որ հոգվով և ճշմարտությամբ «երկրպագութեան» միակ առարկան է դարձած և հայուն

Անոր, որ Արարիչն է տիեզերքին իր բոլոր գեղեցկություններով: Անոր, որ Կյանքն իսկ է, իր թաքուն և հայտնի, ժամանակավոր ու հավիտենական աքանչելիքներով: Անոր, որ [illegible] — Թանկագին անձ և սքանչելի իր վերջին հայտնությամբն ալ, որով ԱՆՍԱՀՄԱՆԸ կծանոթանար աշխարհին՝ իր պատկերովն լման:

Միչև հարվածը Ակնեստին ու մշուշներով, — սուտն ու կեղծիքը, մոլորանքն ու տարտամությունը, չփոթն ու տարակույսը, և կհայտնվի Լույսը՝ իր ամբողջական ճառագայթումովը,— ճշմարիտն ու իրականը, ուղիղն ու պայծառությունը, վստահն ու հաստատը, իրենց տեսլային խորհրդավորությամբը:

Երկնքի Լուսաճաշեն Նաւի-ին տակ կբարձրանա, «Սուրբ Նավասար դաշտաձև նաւակած» երկրի վրա, «ԼՈՒՅՍԻ ԽՈՐԱՆԸ» լուսավորչակերտ Արարատյան դաշտի սրտին վրա կառուցված՝ տաճարաձև: Սիրտը հայ-քրիստոնյա հավատացյալին, Հայ Տաճարը տեսլաղեն և խորհրդազգած: Ինք իսկ «Տաճար Աստուծոյ կենդանւոյ»:

✿✿✿

ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ — Անոր «Սյունն խարիսխը ոսկի է, սյունը՝ հրեղեն, թակաղակը՝ ամպեղեն և սնոտ փայլի խաչը՝ լուսեղեն»: Վասնզի այդ խարիսխը՝ ՎԵՄՆ է հաստատուն և անշարժ, սյունը՝ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ, որ իր թևերուն տակ կհավաքե հավատքի միաբանությամբ՝ լրությունը ժողովրդին, թակաղակը՝ հանգստարանը հավիտենական բոլոր արդարներուն համար:

Այսպես է Տեսիլը մեր Լուսավորչին: Այսպես է, այսպես պարտի ըլլալ հավետ Հայ Եկեղեցվո լուսավորչածին բոլոր հարազատ զավակներուն:

✿✿✿

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ,— քար առ քար չափված ու շինված է Ճարտարապետներու իսկ ակնածանք ներշնչած՝ նյութեղենը, և սիրտ առ սիրտ ընդելուզված և հորինված է ամենուն պատկառանք ազդած հոգեղենը: Սիրտեր՝ ատելության ժահրեն պարպված և սիրով առլցված, Մոլորանքի խավարին խավերեն թոթափված և լույսի ճաճանչներով ողողված: Որով և հավիտենական Տեսիլը հայուն, աներծ սիրով և անպղտոր լույսով ծիածանված և հավատքի հուրով բոցավառված:

Կա՛ միշտ ՈՍԿԵՈՒՌԸ, մեծ, տարածուն, անսահման, կտակված Հայ հավատացյալին, —քանդելու համար ձեռակերտ և անշունչ կուռքերը բոլոր հին աստվածներուն, և քանդակելու, խոր ու բարձր, անեղծ պատկերը նոր ու հինավուրց Աստուծո ՄԻԱԾԻՆ Որդվույն: Քանդակելու խոսուն քարերով,— «Կենդանի վեմեր»-ովը հայուն գիտակից ու անսասան հավատքին:

Եվ ահա՛ տիպար խորհրդապատկերը այդ պարզ, չքնաղ, վե՛հ ու պատկառելի քանդակվածին,— ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ ԿԱԹՈՂԻԿԵ: Ան կա ու կմնա, նյութեղեն կառուցվածքին հետ ոգեղենը: Անաղարտ, անձեռնմխելի ՄԻԿ ՈՒ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ:

Վասնզի Միածնի ձեռակերտն է ան՝ իր Ոսկեուռով, իր անպարտելի զորությամբ: Եվ իր մարմինն իսկ է ան՝ անխոցելի, անհերձելի, աներկփեղկելի: Որ և է ապիրատ մատի անմերձենալի և անհպելի: Մի՛ մոռնաք, որ ԼՈՒՅՍԻ Խորանն է ան:

Ավելի քան ՏԱՍՆԵՎՎԵՑ ԴԱՐԵՐԵ ի վեր կանգուն է ան, կուրծք տված բազմապիսի փոթորիկներու, մրրիկներու և ամեն կողմե կատաղորեն խուժող ու խորտակվող հորձանածիգ ալիքներու: Տեղափոխված երբեմն, բայց ոչ հիմնախիլ եղած: Հոն է մնացեր միշտ ԼՈՒՍԱԹԵՎԻՆԸ՝ Տեսիլին բովանդակ ճշմարտությամբն ու թովչությամբը: Չի հադին է իր զորությունը, որ պահպանած է նաև իր մարմինը: Ոչ սովորական մարմինի պես միս և ոսկոր, ջիղ և արյուն ենթակա փտության և քայքայման, այլ նման Հարության Միածնի «փառավոր մարմին»-ին, անտարրալուծելի և անապական: Իբրահաչորդ սերունդներ, որչափ ալ «Այն օր մ'երբեմ նոր նովիվ նոր նուա Պաշտամունքի նոր ձևով գան Ենդ մոտ (ՕՇԱԿԱՆԻ), ու իրենց համար նոր Աստված մ'ուզենա,— «Գիրի երազեն արթննալու հրավիրված Օշականի «Հսկա»-յեն առաջ արթուն մնացող առաջին հսկային հսկումին տակ, այդ սերունդները, կըսենք, կպահեն զայն ՄՇՏԱՆՈՐՈԳ՝ նույն հոգիով, նույն բովանդակությամբ և հավերժության վավերական դրոշմով:

ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ,— Ան է և կմնա անշրջելի և անպակաս բովանդակությունը Հայաստանյայց Եկեղեցվո:

Եվ այս Եկեղեցին ավելի քան ԱՌԱՔԵԼԱԿԱՆ է, Ս. Էջմիածնով գլխավորված բացարձակապես, վասնզի ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ է, Միածնի տեսլային մարմնովը ոգեղինացած ու լուսակերպված: Եվ այս, այնքան իրական, որքան մարմինը Հարուցյալին անհավատ առաքյալեն շոշափված ու հավատացված: Եվ հայը եղած է միշտ հավատարիմ իր անփշրելի ՎԵՄ-ՀԱՎԱՏՔԻՆ և իր հավատքի ՄՇՏԱՎԱՌ-ԼՈՒՍԱԽՈՐԱՆԻՆ, իր «ՍՐԲՈՒԹԵԱՆՑ ՍՐԲՈՒԹԵԱՆ»-ին:

Բարձրասլաց վերաբարձումով Կաթողիկեն է ան մեր, անսասան երկրի վրա, բայց մանավանդ անքանդելին՝ մեր մեջ։ Խորահիմն և ամրակուռ յուրաքանչյուր հայ հավատացյալի հոգվույն մեջ։

Հայրապետներ, հայ հավատացյալներու ուխտով և բազմաբեղուն ձայնով ընտրված, Ս. Գրիգոր Լուսավորչեն մինչև Ս. Սահակ Պարթև, Ս. Հովսեփ Հողոցմեցիեն մինչև Ս. Ներսես Շնորհալի և Գրիգոր Մուսաբեկյան, Կիրակոս Վիրապեցիեն մինչև Գևորգ Զ,— թե իսկ մերթ տատանդական և պանդուխտ,— անբաժան պահեցին անսային մարմինն անոր, կամարակապված միշտ Հրեղեն սյունին հետ, նախախնամությամբ բարձրացած «ԱՆՇԱՐԺ ՎԵՄ»-ին վրա՝ Ս. Էջմիածնի հարատևական կառուցումով. խոյակնիք գագաթով Կաթողիկեն Ս. Էջմիածնի։

Եվ սոսր հրավառ ձեռնադրումն էր, որ պատգոց 130-րդ Հայրապետը՝ Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, ուր որ այցելեց։ Իզուր է Անոր վերագրել հանձնարարված այլ առաքելություն, քան զոր Սրբալույս Մեռոնի օծումը և Հայրապետական պիտակափառ թողը կխելագրեին Իրեն։ Ս. Հոգին էր Իրեն առաջնորդ և ոչ հոգին՝ այս աշխարհի-ին։ Զենծել այդ սրբությունը, չթողուլ, որ հայհոյվի անեկ բերող բարին, և արծարծել սիրո հուրը հանդեպ հայրենի հոգևոր մոր, հավատքի Միածնակերտ վառարանին՝ Ս. Էջմիածնի— ահա Իր իսկական առաքելությունը։

Հայը գիտցած է, գիտե և պիտի գիտնա հավետ ՏԱԼ ԿԱՅՍՐԻՆ՝ ԻՆՉ ՈՐ ԿԱՅՍՐԻՆՆ Է ԵՎ ՏԱԼ ԱՍՏԾՈՒՆ՝ ԻՆՉ ՈՐ ԱՍՏԾՈՒՆՆ Է։ Այս՝ իր դարավոր և անխախտ հավատքն ու դավանանքը, իր կրոնական վարքագիծը։ Ո՞վ կարող է բաժնել մեզ այս հավատքեն կամ շեղեցնել մեզ այս շիտակ գծեն, և այս հավատքի ժայռին վրա հիմնված հանուր Ս. Էջմիածնեն։ Ունինք մեր հայրերու հաստատ վկայությունը,— «Զայսմ հաւատոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել. ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն ինչ և են դառն հարուածք»։ Եվ «Սրլ սովին հաւատովք բազում,— կգոչեն անոնք հավերժորեն,— ոչ յերկրի այլ տէր փոխանակեմք ընդ քեզ և ոչ յերկինս այլ Աստուած փոխանակեմք ընդ Յիսուսի Քրիստոսի»։

Հին և հինցած չէ այս վկայությունը՝ իր կատարյալ լրջության շեշտով. հանդեպ բոլոր անոնց՝ որոնք կփորձեն Աստվածը սպանել և նոր աստված մը տալ մեզի։ Կարթնցնենք ՀՈՎԿՈՂԸ՝ իր Տեսիլեն և Ալեքսանի ՀՈՎԻԱՆ՝ «Դիրի Նրագնեն...»։

Ոչ մեկ հավակնություն, ոչ մեկ ամբարտավանություն, ոչ մեկ կեղծպարիշտ նախանձախնդրություն, ոչ մեկ սոփեստություն, և մանավանդ ոչ մեկ կողմնակի նկատում ու հետին միտք, որ օտար եղած ըլլա Հայ Եկեղեցվո կոչումին և ոգվույն,— կարող են բաժնել հայ հավատացյալը անոր ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ— Ընդհանրականության—վրա բենոված անքակտելի միութենեն, անոր արբանյակներուն տալով հավասարազորություն, անջատողականության և բացարձակ անկախության խրոխտ կեցվածքը։

Ժամանակի պահանջներեն թելադրված, փոխանցման շրջանի որոշ կարգադրություն ապահովելու համար երբեմնի ջատագովություններ բարբառնք և կըկցուն պատասխանելով՝ արդարացնել նկրտիլ վերահիշյալ մտամոլորանքները,— անվայել բարեմտություն չէ։ Հրամայական պահանջներու առջև ողջամտությամբ և ոգին չդրժելու նախանձախնդրությամբ եղած ակամա և ժամանակավոր նահանջներն ու զիջումները՝ չեն փոխեր կամ փոխանցեր հիմնականը։

Ո՞վ պիտի կամենար կամ կարենար ուրանալ, թե Ս. ԷՋՄԻԱԾԻՆՆ Է ՄԱՅՐ ԱԹՈՌ ԱՄԵՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ, թե իսկ Աթոռակալը, պայմաններու անդիմադրելի հարկադրանքին տակ, տեղ փոխած ըլլա ժամանակավոր։ Այսպիսի տեղափոխություններ եղեր են դարերու ընթացքին, առանց անավագության սատրպաստիճանին իջեցնելու Աթոռը իր սեփական վայրին և գաղափարին մեջ։ Դվինեն մինչև Աղթամար, մինչև Անի և Սև լեռ, մինչև Հռոմկլա և Սիս,— հիշած ըլլալու համար գլխավորները,— Հայ Եկեղեցվո պետերը ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐ էին։ Եվ 1441 թվականեն սկսած մինչև այսօր շարունակեցին մնալ այնպես՝ Միածնաէջ Սրբավայրին մեջ։

Մուսաբեկյանի պարագան թող չմոլորեցնե ոչ անպատմախույզ խորհուրդներե առաջնորդված հոգիները։ Նա Ամենայն Հայոց Կաթողիկոս էր մինչև 1441. անկից անդին ուղիղ գիծը կշարունակվի օրինավորապես Վիրապեցիով. համաձայնությամբ նույնինքն Մուսաբեկյանի։ Եվ Վիրապեցիին այժմու հաջորդն է Տ. Տ. Վազգեն Ա. Ոչ Աղթամար, որ դադրած է հիմակ, ոչ ալ Սիս, որուն Աթոռը փոխադրված է Անթիլիաս, չեն կարող երբեք զուգահավասարել Ս. Էջմիածնի և անարդարանալի հավակնություններ սնուցանել։

Գիտենք և կգնահատենք ներկայիս ստեղծված կացությունը Անթիլիասի մեջ նստող Հայրապետին, երբ նկատի ունենանք մանավանդ կարկառուն դեմքերը հավերժահիշատակ ՍԱՀԱԿ—ԲԱԲԳԵՆ—ԳԱՐԵԳԻՆԻ, բայց

ներելի չենք գտներ բնավ, որ նա փորձէ սեղլյուր ամէնը գլուխ հանդիսանալու՝ իր հարազատ գլուխն ունեցող ՄԻԱԿ ՄԱՐՄԻՆ-ին, որ ՄԱՅՐ ԱԹՈՌՆ է Ամենայն Հայոց Հայրապետութեան։

Ոչ ոք այս համեստ գրիչին կարող է վերագրել դիմափոխութիւն, հակասութիւն, ուրացում, և տակավին ուրիշ շատ չքնաղ ստեղծաբանութիւններով մոլորանքներ։ Անտարակոյս որ անսխալականութեան մենաշնորհեալներէն չենք։ Բայց մենք տէր ենք մեր երեկի և այսօրվա տեսութիւններուն և տեսակէտներուն, զորս պարզած ենք մեր իսկ թե ծածկանուն ստորագրութիւններով։ Ասոնք— անգամ մըն ալ կկրկնենք— արգիւնքն են եղած ժամանակի պայմաններուն և պահանջներուն նկատառման։ Ո՞ր պատասխանատու անձ այլապես շարժած է երբեք և կարող է շարժիլ, առանց անխուսափելի վտանգներու և կորուստներու ենթարկվելու։ Վկա՝ մոտավոր անցյալը։

Այլ է դիմափոխութիւն, և այլ է պատշաճեցում ժամանակի հրամայական պահանջներուն, և այս, ձևականօրէն և առանց Լութեան կամ ոգին փոխելու։

Թող կարդան, ուշադրութեամբ, անկողմնակալութեամբ և որևէ նախապաշարումէ զերծ «Էջմիածին»-ին ալ «ՎԷՄ» հանդեսի 1937 ապրիլ—Յունիս թիվին մէջ հրատարակված «Ի՞նչպես կարելի է պահել Հայ Եկեղեցու միասնականութիւնը» յօդվածը։ Եվ պիտի գտնեն հոն հետևողականութիւնը նույն տեսութեան և մտահոգութեան,— ժամանակավոր պատշաճեցում անցողակի պահանջներուն։ Ասիկա չհասկնալ՝ ոչ թէ ոգիտութեան կամ անգիտութեան, այլ ոչ բարեմտութեան, չըսելու համար փոխ առնված բառով մը «Մինախնդրութեան» վերագրելի է միայն։ Իմաստութիւնը թող տա իր վճիռը։

Եվ երբ այսօր տարբեր կտեսնենք մենք պարագաները, շրջված, որոշ չափով, դեպի լավն ու բաղձալին,— ի՞նչ խղճով— եթե ավելորդ չէ վերջինը փնտրել— «դիմափոխութիւն» կարելի է որակել մեր այժմու կեցվածքը, երբ դեպի Մայր Աթոռ վարձած է մեր դեմքը, մեր հավատքի ԼՈՒՍԱԿԵՏ-ին ուղղված է մեր նայվածքը կարոտալի։

Եվ ասիկա պատճառ մը չէ, որ այլ Աթոռներ— հայրապետական, պատրիարքական թէ առաջնորդական— չպահեն, իրենց իրավասութեանց որոշ ծիրին մէջ, իրենց անկախութիւնը՝ վերաբերմամբ վարչական-մատակարարական գործերու կամ գործառնութեանց— խօսք է խաղալ բառերով— Հայ Եկեղեցվո ոգվույն և ներքին պայմաններուն համաձայն խմբագրված ուրույն կանոնագրութիւններով։

Կանիրեի մէջ գումարված Ազգային-կրօնական ժողովի որոշումները և խմբագրոյ առաջադրված ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈ ՄԱՀՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, հաստատ հիմերու վրա դնելու համար ԵԿԵՂԵՑՎՈ ՀՈԳԵՎՈՐ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ կամ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ուրիշ կերպ թարգմանել և խեղաթիւրել՝ գործ չէ ոչ ողջմտութեան, ոչ բարեխղճութեան։ «Կուսակցական խնդիր է այս, ինչո՞ւ չծ պաշտպաներ Չարեն սրբավանը»։ Նախակազմի մը խոսքերն են ասոնք, ինչպես կշշնչեն հեռվեն մեր ականջին։ Ճշմա՞ կամ անշշուն՞, այս է դժբախտաբար մերկ իրականութիւնը։

Դարձյալ, մենք ոչ թե մեր Եկեղեցվո ժողովրդապետական-միավորական ոգին, այլ վայն եղծող կուսակցապետական-անջատողական ոգին է, որ կուզենք արմատախիլ ընել։ Եկեղեցին ժողովրդինն է, և ժողովրդին համար է և ժողովրդով։ Ինքն իսկ ժողովուրդն է ոգեղինացած՝ իր կենդանի հավատքով, իր հարազատ հիսառնեութեամբ, ասոր խորհուրդներու դավանութեամբ և կիրառութեամբ, բայց ոչ երբեք կողմ մը կամ կուսակցութեան մըն է ան, և մանավանդ հաղահական բնույթ ունեցող և հավասարէ դատարկացած։ «Ի՞նչ միաբանութիւն կ Քրիստոսի ընդ Բելիարայ, կամ դի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին»։

Առաքյալի այս խիստ դատաստանեն դուրս չի մնար որևէ տնասավածյան հոգի։ Այլ է Կեսարը, այլ է Աստված,— յուրաքանչյուրին իր արժան տուրքը։ Եվ Եկեղեցին՝ ՏՈՒՆՆ Է ԱՍՏՈՒԾՈ. Եկեղեցին՝ ՄԱՐՄԻՆՆ Է ՔՐԻՍՏՈՍԻ։

Ինչ վայրի մէջ և ինչպիսի կառավարական վարչաձևի տակ իր գոյութիւնը պահպանելու հարկին մէջ կգտնվի Եկեղեցին,— ոչինչ, պիտի զատէ իր ժառանգութիւններեն և ավանդութիւններեն, որոնք կապ ունին զուտ կրոնական համոզումներուն հետ և ոչնչով կարգիլեն և կհրամայեն իսկ կատարելու ամենայն հավատարմութեամբ քաղաքացիական բոլոր պարտականութիւնները։ Անկրոն կամ ապակրոն եղած ըլլա երկրի մը վարչաձևը, բավական է որ չըլլա կրոնական հալածանք և ցույց արվի հանդուրժող ոգի, ժողովուրդը, որպես նույն երկրին քաղաքացին, պիտի չթերանա իր պարտականութեանց մէջ։ Բայց պիտի չլքէ իր կրոնական համոզումները և պիտի չդադրի պաշտպանելու և պահելու զանոնք ամեն գնով։ Պատմութիւնը վկա։ Վկա նաև հոգին, որուն զորու-

թյամբը— Սովետ Միությունը— խաղաղասիրական է իր հավատքը։

Աշխատենք այստեղ դարձյալ պատշաճեցումը ժամանակի պահանջներին:

Նրանք ասում՝ անխզորուն և անխախտ, ատոմից ծառ ռումբներու: Իսկ Միա[illegible] խրճըրօպա՞ն— այդ չափ [illegible] է մեծին. Այդ կանգդրազանա [illegible] վրա միայն. որոնք [illegible] գործ մեր մեջ։ Անկեղծ վկայությունը [illegible], որ [illegible] է բոլոր [illegible] և [illegible]։ Կա նաև վկայությունը մեր բոլոր [illegible] կային թե [illegible]։ Նույնիսկ շատերուն անձնզոհ, որոնք այսօր [illegible] խղճմտանքը այս [illegible] բնկյա մեջը։

Ժամանակը կփարձատրի և կպատժի իր պաշտոնյաները՝ համաձայն իրենց գործերուն և ոչ թե իրենց խոսքերուն։ Բաց է Հրապարակը ամենուն առջև. ամենք կկրնեն հոն մեծա[illegible] ագնություններով և [illegible] [illegible] [illegible] և [illegible] համար, [illegible] [illegible] գործեն [illegible] [illegible] [illegible]։

Պատասխանը, ի վերջո, արդարադատ Աստվածն է. Նրան մենք անխոս, որով խոսքերին, խաչին կախված աղոթքը միայն [illegible] համար:

(Նյու-Յորք, «ՀԱՅ ԱՇԽԱՐՀ» շաբաթաթերթ, 1956 թ., № № 36, 37 և 38):



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ միաբանական ընդհանուր սեղանատանը բարեհաճեց ճաշել Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ իր սրբազանների՝ գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի, գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի և բարձրապատիվ Տ. Շահե վարդապետ Աճեմյանի. Միաբանական սեղանին մասնակցում էին Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և վանքի պաշտոնեությունը. Սեղանը օրհնեց Վեհափառը. Ճաշին մատուցվեց հայկական ավանդական «Հերիսա»-ն.

* * *

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12—17 ՕՐԵՐԻՆ, գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, ընկերակցությամբ Տ. Շահե վարդապետ Աճեմյանի և Մայր Աթոռի դիվանապետ պ. Հ. Աստղիկյանի, այցելեց Թբիլիսի, Սանահին, Ալավերդի և Սևան. Սրբազանը լավագույն տպավորություններով վերադարձավ Մայր Աթոռ հոկտեմբերի 17-ին.

* * *

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Տօն Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց և յիշատակ գիւտի նշանագրացն Հայոց և Թարգմանութեան Ս. Գրոց». Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանը, «Որք զարզարեցին տնօրինարար զիմաստս անեղին» բնաբանով. Քարոզիչ հայրը վեր հանեց Թարգմանիչ վարդապետների կատարած հայրենանվեր, մշակութային գործը և շեշտեց նրանց դերը հայ գրականության ստեղծման և զարգացման գործում. Նա սրտագին կոչ արեց միշտ վառ պահել Թարգմանիչ վարդապետների խնկելի հիշատակը և հետագա սերնդին ավանդել նրանցից մեզ ժառանգ մնացած հայրենասիրության և հավատի շունչը.

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը.

Թարգմանչաց ազգային-եկեղեցական տոնի օրը փակ էր Հոգևոր Ճեմարանը.

* * *

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, սուրբ պատարագ մատուցվեց Մայր Տաճարում. Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Էլչուգյանը. «Հայր մեր»-ի ժամանակ հայր սուրբը խոսեց «Այրի կնոջ երկու լումա»-յի մասին, բացատրելով սրտից բխած նվերների մեծ արժեքը և դատապարտելով ի ցույց մարդկան եղած նվերներն ու ողորմությունները. Հայր սուրբը վերջում մաղթեց, որ Հայ Եկեղեցուն և Ս. Էջմիածնի ծաղկման համար տրված նվերները, այրի կնոջ լումաների նման, ընդունելի լինեն Երկնավոր Հոր առաջ.

Սուրբ պատարագին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը.

* * *

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ. Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը. Պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը և հյուրաբար Մայր Աթոռ ժամանած գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, ինչպես նաև բարձրապատիվ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը. Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը «Հայր մեր»-ի ժամանակ խոսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նախկին անդամ, հանգուցյալ Ստեփան Կամսարականի մահվան առաջին տարելիցի առթիվ, նրա կյանքի և գործունեության մասին. Հետո բարձրապատիվ Տ. Շահե վարդապետը հավատացյալ ժողովրդին հաղորդեց Երուսաղեմի միաբան գերաշնորհ Տ. Գարեգի

եպիսկոպոս Վրթանիսյանի անակնկալ մահվան գույժը: Ապա նա խոսեց հանգուցյալ Պարգև արքեպիսկոպոսի կյանքի և գործունեության մասին ու հանգիստ մաղթեց նրա հոգուն:

Սուրբ պատարագից հետո նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգիստ, գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոսի և Սամսոն նահատակների հիշատակին նվիրված:

* * *

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, սուրբ պատարագ մատուցվեց Մայր Տաճարում հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ: Պատարագեց Անթիլիասի միաբան Տ. Շահե վարդապետը: Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի գահակալության հանդիսությունների մասնակցելուց և շուրջ մեկ ամիս Մայր Աթոռում հյուր մնալուց հետո իր թեմը մեկնեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հարավային Ամերիկայի հայոց կաթողիկոսական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը: Սիոն սրբազանը հրաժեշտ տվավ Վեհափառ Հայրապետից, և Մայր Աթոռից բաժանվեց խանդավառ տպավորություններով: Սրբազանին ճանապարհեցին հոգեշնորհ Տ. Մուշեղ, Տ. Խորեն վարդապետները և Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառավարության պետ պ. Հ. Սեդրակյանը:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՌԻՖՈՐՄԱԴի Կոնստիտուցիոն Հանձնաժողովի նախագահ և Հոգևոր հովիվ Հ. Հայլեր, իր երկու դուստրերի հետ, այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Հարգելի հյուրերը եղան Մայր Տաճարում, ապա եկեղեցա-հնագիտական թանգարանում: Հոգևոր հովիվ Հ. Հայլեր ցանկացավ ծանոթանալ Հոգևոր Ճեմարանի կյանքին և ուսումնական ծրագրերին: Նա այցելեց Ճեմարանի դասարանները, ներկա եղավ դասերին: Հարգելի հյուրը այցելեց նաև միաբանական խուցերը: Ապա Վեհափառ Հայրապետը ընդունեց Հ. Հայլերին և նրա հետ զրույց ունեցավ: Վեհափառ Հայրապետը իր զրույցի ժամանակ խոսեց ընդհանրապես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և մասնավորապես Ս. Էջմիածնի հայ ժողովրդի պատմության մեջ կատարած դերի մասին: Վերապատվելի Հայլեր հետաքրքրվեց Հայ Եկեղեցու այժմյան կյանքով, ծանոթացավ Վեհափառ Հայրապետի վանական-վարչական, մշակութային և կազմակերպչական աշխատանքներին և ծրագրերին: Զրույցի վերջում Հ. Հայլեր շնորհակալություն հայտնեց սրտագին ընդունելության համար և մաղթեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին բարգավաճում և կենսունակություն՝ ի փառս քրիստոնեական աշխարհին և հայ ժողովրդին:

Վերապատվելի Հայլեր անմոռանալի հուշերով և տպավորություններով բաժանվեց Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից:

* * *

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց Չինաստանի կինեմատոգրաֆիայի աշխատողների պատվիրակությունը, Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Կուլտուրայի մինիստրության Կինեմատոգրաֆիայի կենտրոնական վարչության պետի տեղակալ պ. Ցաո Դենի ղեկավարությամբ: Այցելուների խմբի մեջ էին Կենտրոնական վարչության բաժնի պետ Լի Խուեր, դերասաններ, դերասանուհիներ, ռեժիսորներ և արվեստի աշխատողներ: Հյուրերը եղան Հոգևոր Ճեմարանում, այցելեցին դասասենյակները, հետաքրքրվեցին ավանդվող առարկաներով: Նրանք եղան Մայր Տաճարում, Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանում: Այցելուները լավագույն տպավորություններով վերադարձան Երևան:

* * *

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց Հարավսլավիայի գրողների պատվիրակությունը: Հյուրերը եղան Մայր Տաճարում, եկեղեցա-հնագիտական թանգարանում, ծանոթացան վանքին, Ճեմարանին և միաբանական կյանքին: Նրանք հրաժեշտ առին Մայր Աթոռից իրենց հետ տանելով անմոռանալի տպավորություններ:

* * *

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց Վյետնամի Դեմոկրատական Ռեսպուբլիկայի նկարիչների պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին հայտնի նկարիչներ Տրան Վան Կանը, Նգուեն Վան Տինը և Խունեն Վան Տուեները: Հյուրերը մեծապես հետաքրքրվեցին Մայր Տաճարի ժանրանկարչության արվեստով և ճարտարապետական շինվածքի առանձնա-

հատկությամբ։ Նրանք շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության համար Թանգարանի վարիչներին և մեկնեցին գոհունակությամբ։

❁❁❁

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց Բիրմայի կուլտուրայի գործիչների պատվիրակությունը։ Հյուրերը այցելեցին Հոգևոր Ճեմարանը, եղան Մայր Տաճարում, եկեղեցա-հնագիտական թանգարանում։ Պատվիրակությանը գլխավորում էր Բիրմայի Լուսավորության և կուլտուրայի մինիստր պ. Ու Տուն Տինը։ Պատվիրակությանն ընկերակցում էր ՍՍՌՄ-ում Բիրմայի Միության արտակարգ ու լիազոր դեսպան պ. Ու Ցինը։ Պատվիրակությունը լավագույն տպավորություններով վերադարձավ Երևան։

❁❁❁

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ հայազգի Հովսեփ Օրբելին։ Մեծանուն գիտնականին ուղեկցում էին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գիտնականներ։ Ակադեմիկոս Օրբելին եղավ Մայր Տաճարում և եկեղեցա-հնագիտական թանգարանի բոլոր բաժիններում ու գանձարանում։ Ճարտարապետ Ա. Սահինյանը մեծանուն հյուրին բացատրություններ տվեց Մայր Տաճարում կատարած պեղումների արդյունքների մասին։ Այնա Վեհարանում Նորին Ս. Օծությունն Վեհափառ Հայրապետը ընդունեց Հովսեփ Օրբելուն։ Վեհափառ Հայրապետի և ակադեմիկոս Օրբելու միջև տեղի ունեցավ մտերմական զրույց։ Ակադեմիկոսը հետաքրքրվեց Ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի կյանքով ու գործունեությամբ, ծանոթացավ Վեհափառ Հայրապետի ազգային և եկեղեցական ծառայություններին։ Այս առթիվ Վեհափառ Հայրապետը ակադեմիկոս Հ. Օրբելուն նվիրեց Դերենիկ Եպիսկոպոս Փոլատյանի հրատարակած «Հայաստան, բնաշխարհիկ այրամ» և «Հայաստան, Անի այրամ» նկարազարդ գրքերը։ Տեսակցության վերջում ակադեմիկոսը շնորհակալություն հայտնեց սիրալիր ընդունելության համար և հրաժեշտ առավ Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից։

❁❁❁

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց Հայաստանում արխեոլոգների խորհրդակցության մասնակցած 150 հոգուց բաղկացած արխեոլոգների մի խումբ։ Գիտնականները եղան Մայր Տաճարում և թանգարանում, ծանոթացան Մայր Տաճարի ներքում տարվող պեղումների արդյունքներին։ Հյուրերը Մայր Աթոռից մեկնեցին լավագույն տպավորություններով։

## ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

*Հոկտեմբերի 12-ին, ուրբաթ օր, Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը հովվական այցելությամբ եկավ Շիրակի թեմը, ընկերակցությամբ Հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի։*

*Հոկտեմբերի 13-ին, շաբաթ օրը, Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Կոմիտաս վարդապետի և թեմի քահանայական դասի առաջնորդությամբ սրբազանը ուղղվեց Լենինականի Ս. Աստվածածին առաջնորդանիստ հոյակապ եկեղեցին, Տաճարի նախագավթում զգեստավորված, սրբազանը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի, ուր հավաքվել էր հավատացյալների մեծ բազմություն։ Տաճարում, Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետը, հանուն թեմի հավատացյալների և եկեղեցական դասի, բարի գալուստի և ողջույնի սրտագին ու ջերմ խոսք ասաց։ Սիոն սրբազանը իր ուխտը կատարելուց հետո շնորհակալություն հայտնեց այս ջերմ ընդունելության համար։ Երեկոյան սրբազանը նախագահեց կիրակամտի ժամասացությանը։*

*Հոկտեմբերի 14-ին, կիրակի օրը, Ս. Աստվածածին եկեղեցում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսը։ Եկեղեցին լցվել էր հավատացյալների խուռն բազմությամբ։ Բարեպաշտ հասարակությունը շտապել էր եկեղեցի՝ ներկա գտնվելու սրբազան հոր պատարագին և ստանալու նրա օրհնությունները։ Այդ օրը Լենինականի եկեղեցու երգչախումբը, որ կազմված է թեմի առաջնորդական տեղապահ բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետի անձնվեր ջիգերով, բացառիկ հաջողությամբ կատարեց քառաձայն պատարագի երգեցողությունը, հոգեզմայլ ապրումներ պարգևելով հավատացյալներին։*

*Պատարագիչ սրբազանը քարոզեց Սրբոց Թարգմանչաց տոնի մասին, «Երբ զարգարեցին անօրինաբար զիմաստս անեղին, հաստատելով յերկրի զգիր կենդանի» Թարգմանչաց շարականից վերցված բնաբանով։ Անդրադառնալով 5-րդ դարի գրերի գյուտին և հայ դպրության սկզբնավորման, սրբազանն ասաց, որ Հայ Եկեղեցու նշանավոր գործիչները, հանձինս Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի, գտան այն ոսկեղեն բանալին, որով բացեցին հայ հոգու և մտքի դռները Աստուծո կենդանի խոսքին։ Հայերը սեփական գիր և գրականություն չունենալու պատճառով Ավետարանը եկեղեցիներում կարդացվում էր հունարեն կամ ասորերեն լեզուներով, որոնցից հավատացյալ ժողովուրդը ոչինչ չէր հասկանում, և հետևաբար հոգեկան սնունդ չէր ստանում։ Անհրաժեշտ էր ստեղծել մի այնպիսի միջոց, որով հնարավոր լիներ ժողովրդին մոտեցնել «Աննեղի բանին»։ Ահա այդ պատվավոր գործը ստանձնեց Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթև կաթողիկոսի և Վռամշապուհ թագավորի օժանդակությամբ։ Մեր պատմության մեջ,— ասաց սրբազանը,— Թարգմանչաց տոնը նշանավոր է նրանով, որ գրերի գյուտով և Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ հայ մարդը մոտենում է Աստուծո և իր լեզվով խոսում նրա հետ։*

Ապա քարոզիչ սրբազանը հանգամանորեն ծանրացավ մեր մյուս թարգմանիչ վարդապետների՝ Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու գրական ստեղծագործությունների վրա և գեղեցկորեն նշեց նրանց կատարած շնորհակալ գործը մեր ինքնուրույն մշակույթի ստեղծման և զարգացման աշխատանքներում։

Սիոն սրբազանը իր գեղեցկահյուս քարոզի վերջում կոչ արեց ներկա հավատացյալներին, շիրակացիների հատուկ ավանդական բարեպաշտությամբ և հայրենասիրությամբ, սիրել հայոց լեզուն, հայ գիրն ու գրականությունը և նրանց զանձարանը հանդիսացող Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ու գուրգուրալ նրանց վրա։

Սիոն սրբազանի քարոզը ունկնդրվեց հոգեկան մեծ բավականությամբ և հայրենասիրական զգացմունքներով։

Նույն օրը, սուրբ պատարագից հետո, Տ. Սիոն արքեպիսկոպոսը, Տ. Կոմիտաս վարդապետի և Տ. Արամ քահանայի ընկերակցությամբ, այցելեց Վահրամա բերդը և Մարմաշենի հինավուրց տաճարը։

Երկուշաբթի կեսօրին Սիոն սրբազանը հրաժեշտ առավ Շիրակի թեմից լավագույն տպավորություններով, անմոռանալի հիշատակներ թողնելով շիրակացիների հոգում։

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԹՂԹԱԿԻՑ

# ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

*Հոկտեմբերի 18-ին, հինգշաբթի օր, երեկոյան ժամը 6-ին, Հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, ճեմարանի ուսանողության կողմից կազմակերպվեց գրական-գեղարվեստական երեկույթ՝ նվիրված մեր սուրբ թարգմանիչ վարդապետների՝* Ս. Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու *խնկելի հիշատակին։*

*Որոշյալ ժամին Հոգևոր ճեմարան ժամանեց Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Տ. Եղիշե և Տ. Սահակ արքեպիսկոպոսների, Մայր Աթոռի ամբողջ միաբանության և պաշտոնեության։*

*Ճեմարանի բակում Վեհափառ Հայրապետը դասախոսների և ուսանողության կողմից դիմավորվեց ծափահարություններով և առաջնորդվեց դահլիճ։*

*Թարգմանչաց սուրբ հիշատակին նվիրված գրական-գեղարվեստական երեկույթը բացվեց ճեմարանի նվագախմբի կողմից նվագված Հայկական ՍՍՌ Պետական հիմնով և երգչախմբի կողմից երգված սուրբ Թարգմանչաց հատուկ «Որք զարդարեցին» [illegible] շարականով։*

*Ապա ճեմարանի դասախոս պ.* Ռուբեն Հատիտյանը *հանդես եկավ Թարգմանիչ վարդապետների հիշատակին նվիրված բացման խոսքով.*

*Մեր ազգային-եկեղեցական տոների շարքում առանձնահատուկ հանդիսությամբ և կարևորությամբ է տոնվել միշտ մեր եռամեծ թարգմանիչ վարդապետների խնկելի հիշատակը։ Թարգմանիչ վարդապետների երախտիքը շատ մեծ է մեր գրականության և մշակույթի ստեղծման, զարգացման և պահպանման բնագավառում։*

*Մեր ժողովուրդը, որպես աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը, անցել է մշակույթի երկար ճանապարհ։ Այդ ճանապարհի վրա մեր մեծ թարգմանիչ վարդապետները մի հոգևոր անկրկնելի գանձ ժառանգություն են թողել հայ ժողովրդին. Թարգմանիչները անհուն սիրով սիրել են մեր Ս. Եկեղեցին, մեր Հայրենիքը, ժողովուրդը, և իրենց գրական ստեղծագործություններում արտացոլել են հայ ժողովրդի հավատի և հոգու մեծությունը, նրա հերոսական պայքարը, նրա բաղձանքներն ու երազները լավագույն ապագայի նկատմամբ։*

*Թարգմանիչ վարդապետների գրական, պատմական, կրոնաշունչ և հայրենաշունչ երկերը դարերով ոգեորել ու դաստիարակել են հայ սերունդներին։ Նրանք՝ թարգմանիչ վարդապետները, երգ ու երազ, լույս ու ճանապարհ են ցույց տվել հայ ժողովրդին՝ նրա պատմության ծանր և անարև օրերին։ Նրանք հերոսական շունչ են դրել հայության սրտի և հոգու մեջ և դարձրել նրան անպարտելի, տոկուն և արի՝ գալիք բոլոր ջրհեղեղների ու փոթորիկների դեմ։*

*Թարգմանիչ վարդապետների ստեղծագործած գրականությունը մի կազմակերպող, ոգեշնչող ուժ է հանդիսացել հայ ժո-*

ղովրդի կյանքում, որը նանում մեր նվիրական հավատի և նրա սրբավայրերի, հասուն Հայրենիքի և մեր հոգևոր արժեքների, մեկ է հայ ժողովրդի գոյի պաշտպանության արտահայտությունը:

Գրի ու դպրության, լուսավորության և մշակույթի պատմության մեջ բաց է եղել հայ ժողովրդի ազատատենչ ու լուսաթափառ ոգին, հայաքաղաքացիների ընթացքում: Ահա թե ինչու մեր ժողովրդի զգացմունքների և գիտակցության մեջ, սրբերի շարքում են դասվել նաև հայ ժողովրդի լուսավորության գործին նվիրված գրչի մշակները ու մտքի վաստակավորները:

Հայ գիրն ու գրականությունը միշտ հանդիսացել են հայ ժողովրդի ազգային գոյության պահպանման հզոր ազդակներից մեկը:

Դարեր շարունակ հայոց մեծասքանչ լեզուն, մեր հարուստ ու բազմաժանր գրականությունը, քաղաքականապես անջատ և օտար միջավայրերում ապրող հայ ժողովրդի պանդուխտ բեկորների համար հանդիսացել են համազգային միության, ընդհանրության ամենամեծ գործոններ:

Անցել գնացել են մեր սուրբ թարգմանիչ վարդապետները: Նրանք պատվով և սրբությամբ են կատարել իրենց պարտքը հայ ժողովրդի, Եկեղեցու և Հայրենիքի հանդեպ: Նրանք գնացել են, բայց մնացել է նրանց անմահ գործը:

Սուրբ թարգմանիչ վարդապետների գործը շարունակելու են կոչված մեր ճեմարանների ուսանողները, թարգմանչաց ոգով, շնչով, օրինակով և ուղիով:

Թարգմանչաց խնկելի հիշատակը լավագույնս հարգելու և պահելու միջոցն է՝ սիրել հայ գիրն ու գրականությունը այնպես, ինչպես նրանք սիրեցին, ծառայել Հայ Եկեղեցուն, հայ ժողովրդին և Հայրենիքին այնպես, ինչպես սուրբ թարգմանիչները իմացան ծառայել:

Թո՛ղ միշտ վառ ու պայծառ մնա նրանց անթառամ հիշատակը հայ սերունդների երախտագետ սրտում:

Ճեմարանի առաջին դասարանի ուսանող Նուպար Գայլյանը և երրորդ դասարանի ուսանող Վարուժան Առաքելյանը խորունկ հուզումով և ապրումով արտասանեցին, առաջինը Սողոմոն Տարոնցու «Մաշտոցի գերեզմանի մոտ» բանաստեղծությունը, իսկ երկրորդը՝ Վահան Թեքեյանի «Տաղ գրաբարին» քերթվածը: Ապա Ճեմարանի երգչախումբը հաջողությամբ երգեց քառաձայն «Ո՛վ մեծասքանչս»-ը: Ճեմարանի ուսանողության անունից թարգմանիչ վարդապետների հիշատակին նվիրված գրավոր ուղերձի ընթերցումով հանդես եկավ առաջին լսարանի ուսանող բարեշնորհ Կարապետ սարկավագ Գնելյանը.

«Այսօր Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո, մի անգամ ևս է պանծացնում մեր մեծ թարգմանիչ վարդապետների՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու պայծառ հիշատակը: Մեծ և անգնահատելի է եղել սուրբ թարգմանիչ վարդապետների երախտիքը հայկական մշակույթի ստեղծման և զարգացման բնագավառում:

Ս. Սահակ և Ս. Մեսրոպ, 5-րդ դարի առաջին քառորդին, իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում են հայ գիր ու գրականություն ստեղծելու և զարգացնելու մեծ գործի վրա: Օրեցօր թուլանում էր Հայաստանի քաղաքական և տնտեսական կյանքը: Հայ ժողովուրդը թողնվել էր բախտի քմահաճույքին: Ժամանակի մեծ հայրենասեր մարդկանց համար օրվա հրատապ խնդիրն էր դարձել փրկել հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը ձուլման ահավոր վտանգից:

Ս. Մեսրոպի անդուլ ջանքերով ստեղծվում է հայ գիրը, և, ինչպես ասում է Ս. Մեսրոպի վարքագիր Կորյունը՝ «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհն Հայոց անպայման սքանչելի լինէր»:

Ունենալով հայ գիր և գրականություն ունենալուց հետո, զարթնեց հայ ժողովրդի հոգում ազգային ինքնագիտակցությունը: Սկսվեց մշակութային, գրական բուռն գործունեություն: Ս. Սահակ Պարթև Հայրապետը, նստած Վաղարշապատում և շրջապատված մի խումբ հայրենասեր ու հավատավոր թարգմանիչ վարդապետներով, թարգմանեց Աստվածաշունչը, որը մինչ այդ Հայոց Եկեղեցում կարդացվում էր հունարեն և ասորերեն լեզուներով: Իսկ Ս. Մեսրոպ մի խումբ աշակերտների հետ շրջում էր ամբողջ երկիրը, Հայաստանի զանազան գավառներում բաց էր անում դպրոցներ և մեր երկրի չորս անկյուններից ուսումնատենչ պատանիներ էին հավաքվում այդ դպրոցներում:

Որո՞նք էին մեր մյուս թարգմանիչ վարդապետները:

Ահա Եղիշեն՝ մեծ հայրենասերը և զգայուն բանաստեղծը, մասնակիցն ու ականատեսը Ավարայրի դաշտում, 451 թվականի առաջին ազատագրական պայքարին, երբ հայ ժողովուրդը, հանուն Հայաստանյայց Եկեղեցու գոյության, հանուն հայ հավատի, հանուն Հայրենիքի ազատության վեհ գաղափարների, ելել էր կռվի դաշտ՝ պարսիկների դեմ մարտնչելու:

Վարդանանց պատերազմը եղել է ու կմնա ընդմիշտ պանծալի էջը հայոց պատմության։

5-րդ դարու վերջերին ապրում և ստեղծագործում է մեր հայոց պատմահայրը՝ Մովսես Խորենացին, որի գրած «Հայոց պատմությունը» հայ ժողովրդի համար եղել է երկրորդ Աստվածաշունչ։

Դավիթ Անհաղթ փիլիսոփան, իր բազմակողմանի կրթությամբ և խորունկ գիտությամբ գերազանցելով ժամանակի բոլոր փիլիսոփաներին, արժանացել է «եռամեծ», «անհաղթ» կոչմանը։

10-րդ դարում հայ հողի վրա ծլում է մի նոր ծառ. նոր հանճար, որը մի գլուխ բարձրացնում է հայ բանաստեղծությունը։ Դա հռչակավոր կոչված Հրաշք Գրիգոր Նարեկացին էր։ Նրա «Մատյան ողբերգության»-ը համաշխարհային գրականության փառքերից մեկն է, իսկ տաղերը հայ քնարերգության լավագույն նմուշներն են համարվում։

Ահա և Ներսես Շնորհալին, մեծ հայրենասերը և ազգափառության ջերմ պաշտպանը, մեր Եկեղեցու քաղցրաձայն սոխակը։ Նա թողել է շատ հարուստ և բազմաժանր գրական վաստակ, որի ամեն մի տողի խորքում իր շունչն ու ոգին կան անթեղված։

Մեր մեծ Թարգմանիչ վարդապետները կատարեցին իրենց պարտքը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և նրա ժողովրդի հանդեպ։

Դարեր շարունակ և մինչև այժմ էլ հայոց լեզուն ու գրականությունը, աշխարհով մեկ ցիր ու ցան եղած հայ ժողովրդի համար, եղել են ազգապահպանման կարևոր գործոններից։ Հայ ժողովուրդը զանազան խուժդուժների հանդիպեց, կոտորակվեց, հալածվեց, այնուամենայնիվ նա աչքի լույսի նման պահեց, պահպանեց, աճեցրեց, զարգացրեց ու մինչև մեր օրերը հասցրեց իր «մեծասքանչ» լեզուն և գիրն ու գրականությունը։

Մեր Ս. Եկեղեցու կամարների տակ և սուրբ Թարգմանիչ վարդապետների երախտագետ աշակերտներիս սրտում միշտ վառ ու պայծառ կմնա նրանց նվիրական հիշատակը։

Երկրորդ դասարանի ուսանող Տիգրան Սիրունյանը հաջողությամբ արտասանեց Ն. Զարյանի «Հայոց լեզուն», որից հետո դաշնամուրի վրա երրորդ դասարանի ուսանող Գրիգոր Ներսիսյանը մեծ հաջողությամբ նվագեց Շոպենի էտյուդը, արժանանալով ունկնդիրների գնահատանքին և ջերմ ծափահարության։

Ապա խոսք առավ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տէրտէրյանը.

«Մեր Թարգմանիչ վարդապետները ազատագրեցին հայ միտքը հույն և ասորի մտքի լուծեն, թարգմանեցին Ս. Գիրքը, ստեղծեցին հայ գրականությունն ու ծեսը, ձևակերպեցին մեր հոգիին միությունը։ Երկու կրակներ կային վառված անոնց հոգիին մեջ՝ սեր դեպի կրոնը և սեր դեպի ազգը։ Երկու ներքին ուժեր անդուլ կարծարծեին այդ կրակները՝ ցեղին հանճարը և սուրբ նվիրումը գերագույն ճշմարտություններու նկատմամբ։

Սուրբ Թարգմանչաց տոնը [illegible] մեզ կմիացնե ո՛չ միայն հավատքը, միտքն ու սիրտը հայ ժողովրդին, այլ նաև առաջադրում է գրականության այն արդյունքները, որոնցմով պիտի կառուցվեր հայ մտածումին շենքը իր գլխավոր սյուներով և արտաքին երեսներով։

Մեսրոպի գերեզմանին մոտն ենք։ Այդ գերեզմանը, խոնարհ կամ փարթամ, սակայն է մեր մշակույթի և հուշարձանը մեր մտքի և հոգու բարիքներուն։ Եթե կուզենք հարգել սրբազան այդ շիրիմը, հավատարիմ մնանք իր ժառանգության։

Վա՜յ այն ժողովրդին, որ երկրորդ անգամ կմեռցնե իր մեռելները»։

Ժ. Սեֆերյանը իր քաղցր ու թովիչ ձայնով մեներգեց «Երկներն անուշ են» և «Կանձրև, տղա՛ս» (նվագակցությամբ՝ Հրանտ Գևորգյանի), որից հետո երրորդ դասարանի ուսանող Պողոս Բաբելյանը գեղեցկորեն երգեց «Հայաստան, երկիր դրախտավայր» երգը։

Հանդեսի վերջում, բուռն ծափահարությունների տակ, Թարգմանչաց հիշատակին նվիրված այս գրական-գեղարվեստական երեկույթի փակման խոսքն ասաց Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը.

«Դարերէ ի վեր հայոց բոլոր կաթողիկոսներ իրենց օրհնությունը բերած են Ս. Մեսրոպի հիշատակին: Այժմ հերթը մերն է. Մենք երջանիկ ենք այսօր մեր ամենաջերմ օրհնությունը բերելու այս բեմեն մեծ վարդապետին:

Օրհնությու՜ն և փա՜ռք անոր, որ լույսի ճանապարհը բացավ մեր ժողովրդին և կյանքի անսպառ աղբյուր հանդիսացավ մինչև մեր օրերը, ճակատելով բազում դժվարություններու: Եվ մեր ժողովուրդը մնաց կենդանի: Մեր օրհնությունը կբերենք հայ գրին ու մագաղաթին և բոլոր սուրբ թարգմանիչներուն: Օրհնությու՜ն հայ հին և նոր մատենագրության բոլոր մշակներուն, բոլոր անոնց, որոնք մեր օրերում ալ կստեղծագործեն ու կծաղկեցնեն հայ գրականու-

բյունը Հայրենիքէն ներս և Հայրենիքէն դուրս: Օրհնությո՜ւն մանավանդ հայ դպրության և կրթական մշակներուն, նաև անոնց, որոնք իրենց ուսուցիչներուն շուրջը հավաքված կսորվին «հերոսական լեզուների հերոս եղբայր հայոց լեզուն»: Այդ մեծասքանչ հերոս լեզուն այսօր կանի և կծաղկի մեր Հայրենիքին մեջ ու արտասահմանյան կեդրոններուն մեջ, ուր հայ դպրոցներ կմանկացնեն հայոց ալևոր լեզուն հայ մանուկներու շրթներուն վրա:

Կարևոր տեղ կգրավեն արդի հայ դպրության մեջ մեր չորս հոգևոր վարժարանները՝ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը, Անթիլիասի Դպրեվանքը և Կոստանդնուպոլսո Դպրեվանքը: Այս չորս լույսի փարոսանները կմիանան մեր բոլոր դպրոցներուն և կկազմեն կենդանի ամբողջ մը, ուր կզարգնըվի հայ լեզուն և հայ գիտակցությունը՝ ի փառս Մեսրոպի և հայ ժողովրդին: Վստահ ենք, որ Ճեմարանը իր պատվավոր տեղը պիտի գրավե հայ լեզվի ուսուցման և ծաղկման ճանապարհին վրա: Կօրհնենք մեր Ճեմարանի ուսուցչական կազմը և ուսանողները և կմաղթենք, որ անոնք արժանի ժառանգորդները ըլլան Ս. Մեսրոպի ոգիին: Ամէն:

*Ապա Ճեմարանի երգչախումբը հանդիսավորությամբ երգեց Եկմալյանի «Հայր մեր»-ը:*

*Հանդեսը վերջացավ Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և «Պահպանիչ»-ով:*





# ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՆ ԱՅՍՕՐ

Այս տարի Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը 1956–1957 ուսումնական տարին դիմավորեց ավելի կազմակերպված և նախապատրաստված, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի ցուցմունքներով և անմիջական հսկողության և ղեկավարության տակ։

Եվ դա պատահականություն չէր, որովհետև Վեհափառ Հայրապետը Իր գահակալության առաջին իսկ օրերից Հոգևոր Ճեմարանը շրջապատեց հայրական գուրգուրանքով ու ջերմությամբ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վերականգնման, զորացման աշխատանքներում մեծ հույսեր կապելով Հոգևոր Ճեմարանի գոյության և նպատակներին։

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը Վեհափառ Հայրապետի սրտի մոտ և հարազատ հաստատությունն է, ոչ միայն որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի, որի ուսերին է ծանրանում այդ կարևոր հաստատության ղեկավարության ամբողջ ծանրությունը, այլ մանավանդ որպես վաստակավոր ուսուցչի ու սիրված մանկավարժի, որը երկար տարիների դաստիարակչական-մանկավարժական փորձ ունի հայ կյանքում նոր սերնդի դաստիարակության գործում, և որ խորապես հասկանում և ճանաչում է ուսանողի հոգին, կարդում նրա սիրտն ու միտքը։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը 1955 թվականի հոկտեմբերի 7-ին Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովի չորրորդ և վերջին նիստում Իր փակման խոսքի մեջ չմոռացավ նաև Հոգևոր Ճեմարանը և ի լուր ժողովի հայտնեց, որ Իր հայրապետական ցանկությունն է «Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը դնել ավելի լուրջ հիմքերու վրա, պատրաստելու համար իր կոչումին ավելի գիտակից հոգևորականություն։ Ուրախ ենք նշելու, որ Ճեմարանը արդեն իսկ կարևոր հաստատություն մը դարձած է, ունի մասնագետ դասավանդողներ։ Մեր նպատակն է դարձնել լավը՝ լավագույնը»։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը Իր անդրանիկ կոնդակում էլ անդրադարձավ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին վիճակված մեծ ու պատասխանատու դերին։ Ամենայն Հայոց Հայրապետի և մանկավարժի հատուկ ջերմությամբ և սիրով Նա գրում է. «Հայրական հոգածությամբ պիտի հետևինք Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի մակարդակի բարձրացման, որպեսզի այն առավելագույն չափով արդարացնե իր գոյությունը, և այսօրվան մեր համեստ ու երկչոտ պատանիները, տարիներ հետո՝ մարմնով աճած ու հոգիով զինված, համեստով և շնորհներով լի, նվիրյալ մշակներ դառնան Տիրոջ այգիին մեջ»։

Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի ցուցմունքներով այս տարի առաջ տարվեցին Հոգևոր Ճեմարանի վերաբացման աշխատանքները։ Ճեմարանն ապահովվեց դասախոսական որակյալ կազմով, ընդունվեցին նոր ուսանողներ Մայր Հայրենիքից և Սփյուռքից, հոգացվեցին դասարանական և ընդհանուր անհրաժեշտ բոլոր պիտույքները, ննջարանային, առողջապահական հարմարությունները, ուսանողությունը ապահովվեց հագուստով, սննդով և սեպտեմբերի 16-ին հնչեց Ճեմարանի դասավանդության առաջին զանգը և Ճեմարանը իր դռները բաց արեց հին ու նոր ուսանողների առաջ։

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գոյություն է ունեցել 5-րդ դարից, աշակերտների մեծ խմբով, որոնք եկել էին Ճեմարան, ըստ Կորյունի վկայության «ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհի հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեան Աստուծոյ, քանզի յԱյրարատեան գաւառին բղխեցին հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ»։

Մեծ է եղել մեր մշակույթի պատմության մեջ Հոգևոր Ճեմարանների, ընծայարանների, դպրեվանքների դերը։ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը միշտ ունեցել է իր Հոգևոր Ճեմարանը, և մեր լուսամիտ ու հոգեսեր Հայրապետները իրենց ուշադրությունն ու դուրգուրանքը կենտրոնացրել են կրթության այս սուրբ տաճարի վրա։

Խոսելով այստեղ միայն Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի պատմության վերջին ժամանակների մասին, պետք է նշել, որ Գևորգ Դ կաթողիկոսի (1866—1885 թ. թ.) ջանքերով Մայր Աթոռում բացվեց 1874 թվականի սեպտեմբերի 30-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանը 60 նոր աշակերտներով։

Գևորգ Զ Կաթողիկոսի (1945—1954 թ. թ.) գահակալության առաջին տարին, 1945 թվականի նոյեմբերի 1-ին տեղի ունեցավ Հոգևոր Ճեմարանի պաշտոնական վերաբացումը հանդիսավոր և խանդավառ իրադրության մեջ։

Այժմ Հոգևոր Ճեմարանը թևակոխել է իր գոյության 12-րդ տարին։ Նա տվել է իր երախայրիքը, կուսակրոն եկեղեցականների առաջին խումբը։

Նորընտիր Հայրապետը Հոգևոր Ճեմարանի առաջ, սակայն, նոր խնդիրներ է դրել, որոնց կատարումը պահանջում է սիստեմատիկ և լարված աշխատանք, ավելի մեծ զոհողություններ, եռանդ ու նվիրում։ Երկնապատկվում է ուսանողների թիվը, և Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի ցանկությունն է հաջորդ երկու տարիների ընթացքում Ճեմարանի ուսանողության թիվը հասցնել 100 հոգու, բաժանված հաջորդական վեց դասարանների վրա, երեք լսարանական և երեք դասարանական բաժիններով։

Հոգևոր Ճեմարանը դրամական խոշոր գումարներ պահանջող հաստատություն է։ Ամեն մի ճեմարանական ուսանողի համար տարեկան միջին հաշվով ծախսվում է ավելի քան 500 դոլար։

Հայ ժողովուրդն իր այրի կնոջ լումաներով կանգուն և պայծառ է պահել մեր հոգևոր մշակույթի կենտրոններն ու վանքերը։

Այստեղ ուրախությամբ ենք արձանագրում, որ Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալությունից հետո, մեր թեմերն ու անհատ բարեպաշտ հավատացյալներ և Մայր Աթոռի բարերարներ, իրենց սրտին մոտ հաստատություն նկատելով Հոգևոր Ճեմարանը, ի նպաստ Ճեմարանին կատարել են և կատարում են նորանոր նվիրատվություններ։

Հոգևոր Ճեմարանի գոյության, հարատևության հարցը հայ հավատացյալ ժողովրդի և մեր բոլոր թեմերի խղճի, հավատի և պատվի հարցն է։

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հարգելի ընթերցողներին այժմ ցանկանում ենք ներկայացնել Հոգևոր Ճեմարանի կյանքն ու գործունեությունը, գոհացնելով նրանց հետաքրքրությունը։

## ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՌՕՐՅԱՆ

Կյանքը Հոգևոր Ճեմարանում սկսվում է վաղ առավոտյան, ժամը 7-ից, և շարունակվում է հանդրվան առ հանդրվան, մինչև գիշերվա ժամը 10-ը։

Հոգևոր Ճեմարանի օրվա ռեժիմը կազմված է այսպես.

Ժամեր

| | |
|---|---|
| 7.00 | զարթնում |
| 7.00— 7.15 | մարմնակրթանք |
| 7.15— 8.30 | առավոտյան ժամերգություն |
| 8.30— 9.00 | նախաճաշ |
| 9.30—10.15 | 1-ին դասաժամ |
| 10.20—11.05 | 2-րդ |
| 11.10—11.55 | 3-րդ |
| 12.00—12.45 | 4-րդ |
| 12.55— 1.40 | 5-րդ |
| 1.45— 2.30 | 6-րդ |
| 2.30— 3.00 | ճաշ |
| 3.00— 4.00 | հանգիստ |
| 4.00— 5.00 | մարմնակրթանք, խաղեր |
| 5.00— 5.30 | երեկոյան ժամերգություն |
| 6.00— 7.30 | սերտողություն |
| 7.30— 8.00 | ընթրիք |
| 8.00—10.00 | սերտողություն |

Ճեմարանը ապրում է վանական համայնական կյանքով։ Ուսանողությունը մեծ սիրով և անխափան մասնակցում է առավոտյան, երեկոյան ժամերգություններին և կիրակի ու տոն օրերի պատարագներին։ Ճեմարանականները, դասերի բաժանված, կատարում են փոխասացություններն ու սաղմոսերգությունները, պատարագի երգեցողությունները։

Առավոտյան ժամը 9.30-ին հնչում է դասավանդության զանգը։ Ճեմարանականները շտապում են իրենց դասարանները։ Դասացուցակով, ըստ ուսումնական ծրագրի, նշանակված է օրական 6 ժամ դաս, յուրաքանչյուրը 45 րոպե տևողությամբ և 5—10 րոպե ընդմիջումներով։

Ճեմարանականները ճաշում են վանքի միաբանական ընդհանուր սեղանատանը։ Ճաշարանում տիրում է ընդհանուր կարգ ու կանոն, մաքրություն և լռություն։ Ճաշի ամբողջ տևողության, ըստ վանական ընդունված կարգի, ամբիոնի վրայից բարձրաձայն կատարվում է օգտակար և ազդեցիկ ընթերցանություն Աստվածաշնչից կամ այլ գրքերից։ Ճաշարանում հերթափոխում են երկու ուսանողներ, ճեմարանում պահվում են շաբաթական և ամսական պահքերը և Մեծ պահքի առաջին և վերջին շաբաթները։

Առավոտյան թեյի ժամանակ ըստ հարմարության և օրվա ուտեստի, ուսանողության տրվում է թեյ, պանիր, կարագ, կաթ, մեղր, ձու և քաղցրեղեն։

Ճաշին, ուտիք օրերին, տրվում է երկու տեսակ կերակուր, ապա միրգ կամ կոմպոտ, իսկ պահք օրերին՝ պասուց կերակուրներ։

Ընթրիքին, ըստ եղանակի հարմարության, տրվում է բանջարեղենի կամ ասպի ապուր, թեյ, շաքար, պանիր, կաթնապուր, միրգ, մածուն։ Շաբաթը մի անգամ ուսանողությանը տրվում է պատմական «Հերիսա»-ն։

Ճաշը սկսվում և վերջանում է աղոթքով։ Սեղանի վրա կարգով աղոթում են ուսանողները։

Ճաշից հետո հայտարարվում է մեկուկես ժամ։ Ճեմարանականները կա՛մ հանգստանում են ննջարաններում և կա՛մ զբաղվում ընթերցանությամբ։

Ժամը 4-ին մարզանքի, խաղերի պահն է։ Խաղն ունի բարոյա-դաստիարակչական խոշոր նշանակություն։ Խաղի միջոցով ուսանողը պատրաստվում է կյանքի։ Մարզիչ ուսուցչի ղեկավարությամբ, ճեմարանականները իջնում են մարզադաշտ, ֆիզիկապես կոփելու իրենց մարմինն ու մկանները։ Ճեմարանականների սիրած խաղերն են ֆուտբոլը, բասկետբոլը, վոլեյբոլը, պինգ-պոնգը։ Ճեմարանը ապահովված է մարմնակրթանքի հարմարություններով և առարկաներով։

Խաղի մեջ ու խաղի միջոցով ուսանողության մեջ մշակվում և ամրապնդվում է նաև ճարպկություն, հնազանդություն, շարքայնություն, կարգապահության ոգի, զարգանում է հավաքականության ոգին, զգացմունքները զսպելու և սրանց հաղթահարելու կամք, համեստություն և այլ գեղեցիկ հատկություններ։

Ազատության ժամերին ճեմարանականները հավաքվում են մեծ դահլիճը և իրենց շնորհալի գլուխները թաղած գրքերի և տետրակների մեջ, ժրաջան մեղուների նման նոր ու խոր գիտելիքներ, հավատ ու կրակ, լույս ու գիտություն են շտեմարանում իրենց մտքի, սրտի փեթակներում, մի օր դրանք առատորեն սփռելու համար հոգու ու մտքի լույսի, հավատի կարոտ հայ նոր սերունդների հոգիներին։

Սերտողության սրահի կենտրոնական պատից, հայրական քաղցր ժպիտով, նայում և նայում է իր սաների վրա նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը և օրհնում իր հոգևոր որդիների ստեղծագործ, իմացական աշխատանքները։ Այսպես պատերից նայում և օրհնում են նաև Հոգևոր Ճեմարանի կյանքի և ուսման հետ սերտորեն կապված երջանկահիշատակ Տ. Գևորգ Դ, Խրիմյան Հայրիկ և Գևորգ Զ կաթողիկոսների հոգիները. ցնծում են, որովհետև վառ է դարձյալ հայ հավատի և մտքի օջախը այս նվիրական հաստատության մեջ։

Ճեմարանում ուսանողության դաստիարակության և կրթության ամբողջ ընթացքը դիտվում է որպես մանկավարժական միջոցների միասնական մի սիստեմ։ Մայր Տաճարը, եկեղեցական արարողություններն ու հանդիսությունները, ճեմարանը, դասերը, ուսանողների համայնական-ընտանեկան կյանքը, խաղը լրացնում են և օգնում միմյանց՝ հոգևոր դաստիարակության ընդհանուր նպատակներին հասնելու համար։ Ճեմարանականը ապրում և սովորում է առանձնահատուկ ռեժիմով, նույն ընտանեկան հարկի, հոգևոր նույն ավանդականության մեջ, նույն հույսերով ու նպատակներով խանդավառված։

Ճեմարանի ուսանողության ամբողջ կյանքը, առավոտվանից մինչև ուշ գիշեր, ենթակա է կազմակերպված և գիտակից ռեժիմի, հատկապես ժամանակի նպատակահարմար օգտագործման տեսակետից, և դա հոգևոր դաստիարակության ամենաճիշտ և արդյունավետ ուղին է։

Ժամը 10-ին սերտողության սրահում կատարված ամփոփ խաղաղական ժամերգությունից հետո ճեմարանականները գնում են ննջարանները հանգստանալու և բարով կազդուրվելու։

## ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ ԵՎ ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է վեց դասարաններով, երեքը դասարանական, երեքը լսարանական։ Հոգևոր Ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու զավակ, 18—25 տարեկան թերի և լրիվ միջնակարգ կրթություն ունեցող ուսանողներ, որոնք զերծ են ֆիզիկական թերություններից և հիվանդություններից և ժառանգ սեր ու կոչում ունեն հոգևոր ասպարեզում ծառայելու։*

*Հոգևոր Ճեմարանի ուսանողները ընդունվում են և՛ Մայր Հայրենիքի ներքին թեմերից, և՛ արտասահմանի մեր թեմերից։*

*Ճեմարան ընդունվող ուսանողներին տրամադրվում են ձրիաբար հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրենական պիտույքներ։*

*Ճեմարանի ուսանողության ընդհանուր թիվը այս տարի 47 է։ Միայն այս տարի նոր ընդունված ուսանողների թիվը հասնում է 28-ի։*

*Այստեղ ուրախությամբ ենք արձանագրում այն հանգամանքը, որ Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և հրահանգներով, այս տարի ուսանողներ ընդունվեցին նաև Սփյուռքից՝ Սիրիայից և Լիբանանից ու դեմոկրատական երկրներից։*

Այսօր, ավելի քան մի այլ ժամանակ, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ունի բոլոր հնարավորությունները դառնալու հայության իսկապես համազգային հոգևոր կենտրոնը, Ամենայն Հայոց Հայրապետության իր գերագահ Աթոռով, իր Հոգևոր Ճեմարանով, մամուլով, հավատացյալ ժողովրդով, Հայրենի Երկրի ազատ պայմաններում։

*Այս տարի բացվել է արդեն Ճեմարանի առաջին լսարանը, որտեղ սովորում են 5 սարկավագներ և 2 ուսանողներ, որոնք շուտով ընդգրկվելու են հոգևոր ասպարեզում։*

*Ճեմարանի երրորդ դասարանը բաղկացած է 17 հոգուց։ Երկրորդ դասարանում սովորում են 13 հոգի և առաջին դասարանում՝ 10 հոգի։*

*Ամեն դասարան ունի իր դասարանային հարմարությունները, կահավորված է պարզ ու պատշաճ ձևով, պատերը զարդարված են սուրբգրական պատկերներով և պաշտոնական անձնավորությունների նկարներով, աշխարհագրական քարտեզներով։ Դասարանները լուսավոր են, օդասուն և արևոտ։*

## ՃԵՄԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

*Հոգևոր Ճեմարանը ունեցել է միշտ հոգևորական և աշխարհական որակյալ դասախոսական կազմ։ Ճեմարանում դասավանդել են իրենց առարկաների մասնագետ լավագույն ուսուցիչներ։*

*Վեհափառ Հայրապետի ցանկությամբ այս տարի էլ Ճեմարանը ապահովվեց դասախոսական որակյալ կազմով։* Ճեմարանի դասախոսական կազմի գլուխն է գտնվում անձամբ Ինքը՝ Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, *որն Իր այնքան բազմազբաղ ժամերից հաճույքով անգնահատելի բաժին է հատկացնում Ճեմարանին՝ առաջին լսարանի և երրորդ դասարանի ուսանողության դասախոսելով հոգեբանություն, այսպիսով քաջալերական օրինակ հանդիսանալով դասախոսական կազմին և ուսանողության։*

*Հոգևոր Ճեմարանի ուսումնական ծրագիրը մեր կրոնական բարձրագույն ընծայարանների ծրագիրն է, որտեղ լայն բաժին է հատկացված կրոնական, եկեղեցագիտական, աստվածաբանական, կանոնագիտական, սուրբգրական առարկաների և որոնք, ըստ Վեհափառ Հայրապետի հրահանգի, դասավանդելու են հիմնականում հոգևորականներ։ Բացի կրոնագիտական, եկեղեցագիտական մասնագիտական առարկաներից, որոնք բնորոշում են Ճեմարանի հոգևոր նկարագիրը և ուղղությունը, ուսումնական ծրագրում լայն տեղ է հատկացված հանրակրթական առարկաների՝ լեզուների (հայերեն՝ գրաբար և աշխարհաբար, ռուսերեն, ֆրանսերեն), նաև հայագիտական առարկաների, հայկական արվեստագիտության, հնագիտության, հայոց պատմագիտության, հայկական տոմարին։*

*Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, օգոստոս ամսի վերջերին, Գերագույն Հոգևոր Խորհուրդը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո վավերացրեց 1956—1957 ուսումնական տարվա ծրագիրը։*

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի ցանկությամբ, այս տարի Ճեմարանի վերատեսուչ է հրավիրված Կալիֆորնիայի թեմի առաջնորդ* գերապատիվ Տ. Շնորհք Եպիսկոպոս Գալստյանը, *որն արդեն Երուսաղեմում է և շուտով կժամանի ի գլուխ իր պաշտոնի։ Ճեմարանի վերատեսուչ սրբազանը դասավանդելու է բարձր դասարաններում վարդապետական աստվածաբանություն, քրիստոնեական վարդապետություն և հայրաբանություն, առաքելական թղթոց մեկնություն։*

Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տէր-Հովհաննիսյանը դասախոսում է առաջին լսարանում և երրորդ դասարանում Հայ եկեղեցական տոմարագիտություն։

Հոգեշնորհ Տ. Սերոբ վարդապետ Անբարյանը, փոխ-տեսուչ ճեմարանի, դասավանդում է Ընդհանուր եկեղեցու պատմություն, Հայ եկեղեցու պատմություն լսարանում և բարձր դասարաններում, և ընդհանուր գրականության պատմություն լսարանում։

Արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարտոյանը, ճեմարանի վերակացուն, դասավանդում է ցածր դասարաններում Հին և Նոր Ուխտի սրբազան պատմություն, Հայոց լեզու, ընդհանուր ազգաց պատմություն։

Տ. Կոմիտաս քահանա Շիրինյանը դասավանդում է եկեղեցական երաժշտություն բոլոր դասարաններում։

Տ. Սուրեն քահանա Մարտիրոսյանը՝ Հայոց պատմություն առաջին, երկրորդ և երրորդ դասարաններում, պատմական Հայաստանի աշխարհագրություն և վայելչագրություն առաջին և երկրորդ դասարաններում։

Պ. Արամ Հատիտյանը՝ գրաբար բոլոր դասարաններում, Հին և Նոր Կտակարանների մեկնություն լսարանում և վերին դասարաններում, եկեղեցական մատենագրություն լսարանում և քրիստոնեական բարոյագրություն առաջին դասարանում։

Պ. Հրանտ Գևորգյանը՝ եվրոպական երաժշտություն և ձայնագրություն բոլոր դասարաններում։

Պ. Գարեգին Ճանրազյանը՝ Հայոց լեզու և Հայ գրականություն, Հայոց լեզվի տեսություն՝ լսարանում և երկրորդ ու երրորդ դասարաններում։

Տիկին Մարիա Խոխասախյանը՝ ռուսաց լեզու բոլոր դասարաններում։

Պ. Փեյամ Շահինյանը՝ ֆրանսերեն լեզու բոլոր դասարաններում։

Պ. Վահե Իփշեմենյանը՝ մարմնամարզ և խաղեր։

Ահա Հոգևոր ճեմարանի շաբաթական դասացուցակը ըստ դասարանների.

## Ա ԴԱՍԱՐԱՆ

| | | |
|---|---|---|
| Հին և Նոր Կտակարանի պատմություն | 4 | ժամ |
| Քրիստոնեական բարոյագիտություն | 2 | » |
| Հայ ժողովրդի պատմություն | 3 | » |
| Հին Հայաստանի պատմական աշխարհագրություն | 2 | » |
| Հայոց լեզու | 6 | » |
| Գրաբար | 3 | » |
| Ռուսաց լեզու | 3 | » |
| Ֆրանսերեն | 3 | ժամ |
| Հայ եկեղեցական երաժշտություն | 2 | » |
| Եվրոպական երաժշտություն և ձայնագրություն | 2 | » |
| Վայելչագրություն | 1 | » |
| Ընդամենը՝ | 31 | » |

## Բ ԴԱՍԱՐԱՆ

| | | |
|---|---|---|
| Ներածություն Հին Կտակարանի | 4 | ժամ |
| Քրիստոնեական վարդապետություն | 2 | » |
| Հայ Եկեղեցու պատմություն | 3 | » |
| Հայ ժողովրդի պատմություն | 2 | » |
| Ընդհանուր ազգաց պատմություն | 2 | » |
| Հայոց լեզու | 4 | » |
| Գրաբար | 3 | » |
| Հայ գրականություն | 2 | » |
| Ռուսաց լեզու | 3 | » |
| Ֆրանսերեն | 3 | » |
| Հայ եկեղեցական երաժշտություն | 2 | » |
| Եվրոպական երաժշտություն և ձայնագրություն | 2 | » |
| Վայելչագրություն | 1 | » |
| Ընդամենը՝ | 33 | » |

## Գ ԴԱՍԱՐԱՆ

| | | |
|---|---|---|
| Հոգեբանություն | 2 | ժամ |
| Ներածություն Նոր Կտակարանի | 4 | » |
| Վարդապետական աստվածաբանություն | 2 | » |
| Քրիստոնեական վարդապետություն | 2 | » |
| Հայ եկեղեցական տոմարագիտություն | 1 | » |
| Հայ Եկեղեցու պատմություն | 2 | » |
| Հայ ժողովրդի պատմություն | 2 | » |
| Ընդհանուր ազգաց պատմություն | 2 | » |
| Հայոց լեզու | 4 | » |
| Գրաբար | 2 | » |
| Հայ գրականություն | 2 | » |
| Ռուսաց լեզու և գրականություն | 3 | » |
| Ֆրանսերեն | 3 | » |
| Եվրոպական երաժշտություն և ձայնագրություն | 2 | » |
| Ընդամենը | 33 | » |

## Ա ԼՍԱՐԱՆ

| | | |
|---|---|---|
| Հոգեբանություն | 2 | ժամ |
| Գործք Առաքելոցի և Թղթոց մեկնություն | 3 | » |
| Վարդապետական աստվածաբանություն | 3 | » |
| Հայրաբանություն | 2 | » |
| Հայ եկեղեցական տոմարագիտություն | 1 | » |
| Հայ Եկեղեցու մատենագրություն | 2 | » |

| | | |
|---|---|---|
| Ընդհանուր եկեղեցու պատմություն | 2 | ժամ |
| Հայ եկեղեցու պատմություն | 2 | » |
| Հայոց լեզու և գրականություն | 3 | » |
| Հայոց լեզվի տեսություն | 2 | » |
| Գրաբար | 2 | » |
| Ռուսաց լեզու և գրականություն | 2 | » |
| Ֆրանսերեն | 3 | » |
| Ընդհանուր գրականության պատմություն | 2 | » |
| Հայ եկեղեցական երաժշտություն | 2 | » |
| Եվրոպական երաժշտություն և ձայնագրություն | 2 | » |
| Ընդամենը՝ | 35 | » |

Կազմված է նաև լսարանի Երկրորդ և երրորդ տարիների համար համապատասխան ուսումնական ծրագիր և պլան։

Հոգևոր Ճեմարանը ունի իր ներքին կանոնագրությունը, որի հիման վրա Ճեմարանի կյանքը ընթանում է կազմակերպված և կանոնավոր՝ լարված մեքենայի նման։

Դասարաններն ու ննջարանները ունեն իրենց ավագները, որոնք պատասխանատու են մաքրության, կարգապահության, հասարակաց գույքի անկորուստ և անվնաս պահպանման։

Ճեմարանի ընդհանուր կարգն ու կանոնը խախտող ուսանողների նկատմամբ կիրառվում են համապատասխան կարգապահական միջոցառումներ։

Ճեմարանում զգալի տեղ է հատկացված նաև ուսանողության գեղագիտական դաստիարակության գործին, գրական-գեղարվեստական, երաժշտական և այլ հանդեսների կազմակերպմամբ, թատերական և կինոդիտումների և էքսկուրսիաների միջոցով։ Գեղագիտական դաստիարակությունը վանական հոգևոր դաստիարակության բաղկացուցիչ մասն է, և այն անհրաժեշտ է հոգևորականի բազմակողմանի զարգացման համար, որովհետև սերտորեն կապված է հոգևորականի մտավորական-բարոյական և հոգեկան դաստիարակության հետ։

Ճեմարանում ամիսը գեթ մի անգամ կազմակերպվում են հանդես-երեկույթներ ուսանողության համեստ ուժերով, որտեղ նրանք հանդես են գալիս իրենց սեփական ստեղծագործություններով, իրենց երգով ու նվագով, արտասանություններով ու շարադրություններով, իրենց գրչով ու ձիրքերով։

Ճեմարանում անհրաժեշտ բարձրության վրա է գտնվում նաև ուսանողության առողջապահական հարցը։ Տարին մի քանի անգամ բժշկական քննությունից են անցնում ուսանողները։

Ճեմարանի ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերից և ավարտվում է «Տոն Կաթուղիկե Ս. Էջմիածնի» օրը, երբ ուսանողությունը, մասնակցելուց հետո տարեվերջի քննություններին ու ամավերջի հանդիսություններին, հրաժեշտ է տալիս իր սիրելի հաստատության և վերադառնում է տուն ծնողների մոտ՝ հանգստանալու և ամառային արձակուրդները անց կացնելու և կազդուրվելու։

Անցնում են աննկատ, սրաթև տարիները, թավալվում է ժամանակը իր հավիտենության մեջ։ Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի պատկերավոր և գեղեցիկ բացատրությամբ ասած, «Այսօրվա մեր համեստ և երկչոտ պատանիները տարիներ հետո մարմնով աճած ու հոգիով զինված, հավատքով ու շնորհներով լի նվիրյալ մշակները կդառնան Տիրոջ այգիին մեջ»։

Ա. Հ.



# ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎՐԹԱՆԵՍՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մենք և Սրբոց Հակոբյանց ամբողջ միաբանությունը խորունկ վշտով կհաղորդենք սրտի արատի պատճառով Պարգև Եպիսկոպոս Վրթանեսյանի հանկարծամահ ըլլալը, որ հանգավ ի Տէր երեկ գիշեր:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՄՀԱՃՅԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄ
19 Նոյեմբեր 1956

---

## ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄ, ՀՈՐԴԱՆԱՆ

Դառն վշտով տեղեկացանք հանկարծակի մահվան մասին Պարգև Եպիսկոպոս Վրթանեսյանի: Մենք և Մայր Աթոռը խոր ցավով կմասնակցենք Սրբոց Հակոբյանց միաբանության սուգին և կաղոթենք առ մարդասեր Աստված, որ խաղաղությամբ ընդունի հանգուցյալի հոգին, որ հավատարիմ իր ուխտին անձնվիրաբար ծառայեց մեր Ս. Եկեղեցիին և Ս. Աթոռին: Թող Տերը լուսավորե հոգին և արժանի ընե դասին փառաց անթառամ պսակին:

Կիրակի, հետ սպասարաքի, Մայր Տաճարին մեջ կկատարվի հոգեհանգիստ հանգուցյալի հիշատակին:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ
20 Նոյեմբեր 1956



# ՀԱՆԳԻՍՏ
# Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎՐԹԱՆԵՍՅԱՆԻ



Հոկտեմբերի 18-ի գիշերը, Երուսաղեմի Հայոց Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Վրթանեսյանը, սրտի արատի պատճառով, մահացավ հանկարծահաս կերպով։

Հանգուցյալ Տ. Պարգև սրբազանի անակնկալ մահով Սրբոց Հակոբյանց միաբանությունը կորցնում է իր բարի և նվիրված միաբաններից մեկին։

Լուսահոգի սրբազանը ծնվել է 1905 թվականին Փոքր Ասիայի Պայրբեսիր քաղաքում, որտեղ և ստանում է իր նախնական կրթությունը, իսկ Կոստանդնուպոլսի Կենտրոնական վարժարանում՝ միջնակարգ կրթությունը, 1910—1922 թվականներին։ Աշակերտում է նաև վերաբացված Արմաշի Դպրեվանքին 1923—1924 տարիներին։ 1925 թվականին ընդունվում է Երուսաղեմի Նորաբաց Ժառանգավորաց վարժարանում և ավարտելով այն, 1930 թվականին ձեռնադրվում է կուսակրոն քահանա։ Այնուհետև Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում բարեխղճությամբ վարում է վանական-վարչական պաշտոններ։ 1930—1934 թվականներին վարում է Ս. Աթոռի ավագ թարգմանի պաշտոնը։ 1936—1939 թվականներին նշանակվում է Ս. Աթոռի հյուրընկալ և հանդերձապետ։ Ապա մինչև 1939 թվականը վարում է Ս. Հարության տաճարի տեսչությունը։

1940—1956 թվականներին անդամակցում է Ս. Աթոռի Տնօրեն ժողովին, միաժամանակ կատարելով վանքի գանձապետի պաշտոնը։

Լուսահոգի սրբազանը ունեցել է նաև գրական, բանասիրական վաստակ. հեղինակն է «Ս. Հարության տաճարի մեջ Ս. Լուսավորչի եկեղեցին», «Եղիշե պատմագիր և Վարդանանց պատերազմը» գրքերի։ Վերջին տարիներին ձեռնհասորեն նա էր պատրաստում Սաղիմական օրացույցները։

Տ. Պարգև սրբազանի անունն ու հիշատակը միշտ թարմ կմնան Ս. Աթոռի միաբանության և հավատացյալ ժողովրդի սրտերում։

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

# ԱՐՔՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ



Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, գնահատելով Մայր Աթոռի միաբան, լուսարարապետ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի երկարամյա և օգտաշատ ծառայությունները եկեղեցական-վանական և ուսուցչական-հասարակական ասպարեզներում, Իր քահանայության առաջին տարեդարձի երջանիկ առիթով, հոկտեմբերի 7-ին, արքության պատիվ շնորհեց սրբազանին։

Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը մեր եկեղեցականության երիցագույն և սիրված դեմքերից մեկն է։ Նա իր բազմակողմանի զարգացմամբ, հոգևորականի լայն պատրաստվածությամբ և մանավանդ իր անաչառ ու զվարթ բնավորությամբ իր համեստ անձի շուրջը ստեղծել է համակրանք ու սեր, իր ուսուցչական և քահանայական գործունեության ժամանակ և միաբանական կյանքի տարիներին Մայր Աթոռում։

Սահակ սրբազանը ծնվել է Թբիլիսիում 1879 թվականի օգոստոսի 11-ին (24-ին)։ Մկրտության անունը եղել է Լևոն։ Նախնական կրթությունն ստացել է Թբիլիսիի Ս. Աստվածածին եկեղեցու ծխական դպրոցում, այնուհետև մտնելով Ներսիսյան հոգևոր դպրոցը, ավարտել է այն 1899 թվականին։

Դպրոցն ավարտելուց հետո վարել է ուսուցչության և վերակացության պաշտոն։ Սպասարկել է Արմավիրի և Աստրախանի հայոց եկեղեցիներում։

Ստավրոպոլ քաղաքի ծխականների կողմից ընտրվելով քահանայության թեկնածու, 1903 թվականի փետրվարի 9-ին Արիստակես արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրվում է քահանա և նշանակվում կրոնի ուսուցիչ Ստավրոպոլի գիմնազիաներում և հայկական դպրոցում։

Երիտասարդ Տ. Սահակ քահանայի առաջ բացվում է եկեղեցական-հասարակական գործունեության լայն ասպարեզ։ Նա իր

ծխում դպրոցական նոր շենք է կառուցում Գարապետ Դիրազյանի բարերարությամբ, նորոգում գերեզմանատան և քաղաքի եկեղեցիները: Հայտնի բարերարուհի Տ. Եվդոկիա Գալուստյանին դիմելով, գնել է տալիս եկեղեցու գավիթին կից Էլզարյանի նորաշեն տունը և պետական հրամանով գրանցել տալիս եկեղեցուն: Հիմնում է Հայուհյաց բարեգործական ընկերություն, որի միջոցով թոշակավոր աշակերտուհիներ է պահում գիմնազիայում:

1916 թվականին Կիսլովոդսկի հայ համայնքի ընտրությամբ տեղափոխվում է Կիսլովոդսկ, որտեղ բաց է անում աղոթատուն: Նրան հաջողվում է գիմնազիաներում դասավանդել տալ մինչ այդ գոյություն չունեցող կրոնի և հայոց լեզվի դասեր և նշանակվում է կրոնուսույց գիմնազիաներում և ծխական դպրոցում:

Տ. Սահակ քահանա Տեր-Հովհաննիսյանը ունեցել է նաև գրական-եկեղեցական գործունեություն: 1909—1919 թվականներին նա հրատարակել է ռուսախոս հայերի համար ռուսերեն ընդարձակ օրացույց: Առանձին գրքերով հրատարակել է նաև Կրոնի դասագիրք, Ա մաս (հայ-ռուսերեն բառարանով), Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի կենսագրականը, Գևորգ Ե Կաթողիկոսի կենսագրականը, 1912 թվականին տառերի գյուտի 1500-ամյակի և հայ տպագրության 400-ամյակի կապակցությամբ՝ «Հայ ժողովրդի մեծ տոնը», Հայ եկեղեցու սուրբ պատարագի ռուսերեն թարգմանությունը մանրամասն բացատրությամբ: Թղթակցել է նաև հայ և ռուս պարբերական մամուլին: Իր գործունեության և աշխատանքների համար Տ. Սահակը արժանացել է Խրիմյան Հայրիկի, Գևորգ Ե և Խորեն կաթողիկոսների գնահատության և եկեղեցական պարգևատրումների:

Իր երիցուհու կորստից հետո, 1945 թվականից, Ս. Էջմիածնի միաբանության անդամ է հանդիսանում: 1947 թվականին արժանանում է ծայրագույն վարդապետության աստիճանին և նշանակվում Մայր Տաճարի ավագ լուսարար:

Սկսած 1946 թվականից նա կազմում է Ս. Էջմիածնի օրացույցը:

Երջանկահիշատակ Տ Գևորգ Զ Կաթողիկոսը 1951 թվականի հուլիսի 8-ին արժանացնում է նրան եպիսկոպոսական բարձր աստիճանի, ներկայիս ազգընտիր Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի և Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ Տ. Եղիշե սրբազանի հետ:

Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, չնայած իր առաջացյալ տարիքին, հոգով արի է և աշխատանքում ժիր:

Վստահ ենք, որ արքության պատվի տվչությունը նոր եռանդ, ուժ և կարողություն կներշնչի մեր անխոնջ սրբազանին, նույն նվիրվածությամբ ծառայելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն:

## ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

*Հոկտեմբերի 6-ին, շաբաթ օրը, Մայր Աթոռում ուրախության, հոգևոր բերկրանքի ցնծատոն էր ողջ միաբանության, Ճեմարանի ուսանողության և հավատացյալ հայ ժողովրդի համար։*

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը իր գահակալության առաջին տարեդարձի երջանիկ առիթով, Մայր Աթոռի երիտասարդ ու ճեմարանավարտ հոգեշնորհ Տ. Պարգև, Տ. Եղիշե, Տ. Վահան, Տ. Հայրիկ, Տ. Մուշեղ, Տ. Տիրայր, Տ. Մեսրոպ աբեղաներին շնորհեց մասնավոր վարդապետական իշխանության առաջին չորս աստիճանները։*

*Շնորհաբաշխության այս նվիրական օրը ուրախության արցունք կար Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի աչքերում այն խորունկ համոզմամբ, որ Մայր Աթոռում, հարազատ Հայրենի իշխանության հովանու ներքո, աճում, ամրապնդվում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի։ Ավելի քան մխիթարական ու քաջալերիչ էր այն հանգամանքը, որ չի մեռել նախնյաց ծառայության և նվիրման ոգին նաև մեր օրերում, Հոգևոր Ճեմարանից շրջանավարտ Մայր Աթոռի երիտասարդ միաբանների սրտում, որոնք կոչված են արժանավոր ժառանգորդները լինելու մեր նախնյաց սուրբ արյունով և կյանքով ձեռք բերված անկորնչելի հոգևոր արժեքների։*

*Դեռ երեկ, նրանք, մեր այսօրվա յոթ աբեղաները, եկած ի կողմանց և ի գավառաց Հայաստան աշխարհի (Կորյուն), որպես Հոգևոր Ճեմարանի ուսանողներ, վեհերոտ քայլերով մտան Ճեմարանի դռնից ներս, ու այնտեղ, վանական ու ճեմարանական հոգևոր-մշակութային մթնոլորտում, օրերի հետ աճեցին, զարգացան մտքով, հոգով և մարմնով, և այսօր, վեղար ի գլուխ, հովվական գավազանն ի ձեռին, դարձել են աշակերտ Ճշմարիտ բանին քարոզությանն։*

*Հոգևոր Ճեմարանը իր գոյության կարճ ժամանակաշրջանում պատվով կատարեց իր պարտքը և արդարացրեց Ամենայն Հայոց Հայրապետության ու հայ հավատացյալ ժողովրդի ակնկալությունները։ Հոգևոր Ճեմարանը տվեց Եկեղեցուն և Ազգին իր երախայրիքը, կուսակրոն եկեղեցականների առաջին խումբը, որն ուխտել է աննահանջ սիրով ու նվիրումով, հոգևորականի բարձր գիտակցությամբ, ժուժկալության, աղքատության, անպայման հնազանդության հայրապետահաստատ կանոնների համաձայն, ծառայել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն։*

*Շաբաթ երեկոյան, ժամերգությունից առաջ, եկեղեցական թափորով Վեհարանից Մայր Տաճար առաջնորդվեց Վեհափառ Հայրապետը, և հետ ժամերգության, հավատացյալների և ուխտավորների խուռն բազմության ներկայության, Մայր Տաճարի Իջման Ս. Սեղանի առաջ, պատշաճ հանդիսությամբ կատարեց մասնավոր վարդապետական իշխանության տվչությունը։ Հանդիսության ներկա էին և մասնակցում էին Տ. Եղիշե և Տ. Սիոն արքեպիսկոպոսները։*

*Վեհափառ Հայրապետը նստեց «Աթոռ, երեսն յարևելս, և հրաւիրեալքն բացագլուխ ի ծունր գան առաջի նորա։ Խարտավիլակն էր Տ. Շահե վարդապետ Աճեմյանը, իսկ վարդապետներից մեկը՝ «երեք զգաստացանն ծածկեալ շղարշիւ և կանգնին առընթեր-*

Նաև հուզիչ և սրտագրավ է արդարև մեր եկեղեցական ձեռնադրությանց արարողությունը, եւ առավել մեծ նշանակություն է ունեցել մեր եկեղեցական կյանքում «մանաւոր վարդապետական գաւազան տալոյ» արարողությունը, որ հյորինեալ է Ս. Գրիգորի Տաթևացւոյ նշմարտութեան վարդապետի, գերահանճար հռետորի և անյաղթ ախոյենի սուրբ հաւատոյ։

Կանգնել է Վեհափառ Հայրապետը Փրկչի Իշման սուրբ սեղանի առաջ, և Նրա շուրջը՝ Իր աշակերտները, բռնած միասնաբար մասնավոր վարդապետական իշխանությունը խորհրդանշող գավազանը։

Եվ Վեհափառ Հայրապետը, խոսքն ուղղելով Նորընծա վարդապետներին, Իր հայրական քաղցրաբարբառ և խրատական խոսքն է ուղղում նրանց և ասում.



ՆՈՐԸՆԾԱ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Ձախից աջ՝ Տ. Մեսրոպ վրդ. Անբարյան, Տ. Սուրեն վրդ. Պետիկյան, Տ. Վահան վրդ. Դալամդարյան, Տ. Պարգև վրդ. Գևորգյան, Տ. Եղիշե վրդ. Սարգսյան, Տ. Հայրիկ վրդ. Ավետիսյան, Տ. Տիրայր վրդ. Մարտիկյան։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, Տաթևացու հոգով և նախանձախնդրությամբ, շարականների, աղոթքների, սուրբգրական ընթերցումների կատարմամբ, աստիճան առ աստիճան շնորհում է մասնավոր վարդապետության գավազանի տվչությունը. «Առ զսուրբ գաւազանս ի ձեռաց Հոգւոյն Սրբոյ, ունել իշխանութիւն քարոզել զբան կենաց ողջամիտ վարդապետութեամբ յունկն հաւատացելոց։

Ամենայն Հայոց Հայրապետի սուրբ շրթունքով աստվածային շնորհն է իջնում նրանց վրա, որոք հրաժարեցան յաստիճան վարդապետութեան, և որոնք ստանում են «համարձակութիւն քարոզելոյ զբանն կենաց և հրահանգ՝ պահելոյ զպատուէր օրհնադրութեանց հարցն սրբոց՝ ողջամիտ վարդապետութեամբ բստ Հայաստանեայց Եկեղեցւոյ։

Վեհափառ Հայրապետի «Թագհպանիչ»-ով վերջ է գտնում արարողությունը։

«Յանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։

«Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի», գի այսօր Մայր Աթոռի յորր միաբաններ, յորր երիտասարդ աբեղաներ պսակվեցան վարդապետական իշխանության չորս աստիճաններով և ուխտեցին Քեզ ծառայել մինչև իրենց կյանքի վերջին շունչը։

Սիրելի՛ Նորընծա վարդապետներ. կանգնած եք Միածնի Իջման սուրբ սեղանի առաջ, մեր լույս հավատքի Մայր Տաճարին մեջ, Հայաստան աշխարհի սրտին վրա, նավերժական Արարատի և Արագածի փեշերուն, և այս սուրբ պահուն Ամենայն Հայոց Հայրապետը Ձեզ շնորհեց գավազան կրելու և ժողովրդին Խարոզելու հողևոր իշխանությունը։

Դուք այսօր անգամ մը ևս ուխտեցիք անսասան մնալ Ձեր հավատքին վրա և նվիրումով ծառայել մեր Ս. Եկեղեցիին, մեր Մայր Աթոռին, մեր հավատացյալ ժողովրդին և մեր վերածնված Մայր Հայրենիքին։

Մենք ևս Մեր առաքելական աղոթքով հայցեցինք, որ Տեր Ձեզ պահե պատսպարե ամեն փորձություններից:

Դուք, յոթ վարդապետներդ, Մայր Աթոռիս Հոգևոր Ճեմարանի առաջին ծաղիկներն եք, երջանկահիշատակ Գևորգ Զ Հայրապետի տնկիներ, որ Մեր օրով եկաք Մեր կողքին աշխատելու որպես սպասավորներ Ս. Էջմիածնի և Մայր Աթոռի:

Անցնող մեկ տարվան ընթացքին Մեր ամբողջ ուշադրությունը և գուրգուրանքը կենտրոնացրինք Ձեր վրա. Դուք լավ գիտեք այդ: Ամեն ինչ ըրինք, որպեսզի մանավանդ Ձեզ ներշնչենք անկեղծ հավատք առ Աստված, նվիրում դեպի մեր բազմադարյան Ս. Եկեղեցին, պաշտամունքը ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, սեր և ծառայելու զգացում դեպի հայ ժողովուրդը և Հայրենիքը, աշխատելու եռանդ առանց ձանձրույթի, առանց արծաթսիրության, առանց բամբասանքի, առանց նախանձի, առանց գոռոզության և առանց այլ ախտություններու:

Մենք կամեցանք Ձեր երիտասարդ հոգիներուն մեջ արծարծել Եկեղեցիին ու Ազգին ազնվորեն ծառայելու կրակը, առաջնորդված սուրբ զգացումներով և կյանքի հերոսական ոգիով:

Մենք վստահ ենք, թե այս սերմերը պարարտ հող գտան Ձեր հոգիներեն ներս, ինչպես մեր Փրկչի սերմնացանի առակին մեջ, և արդյունքը պիտի ըլլա մեկի դեմ երեսուն, վաթսուն և հարյուր:

Դուք, սիրելի՛ վարդապետներ, բախտավոր սերունդ եք, եկաք ճիշտ ատենին, Ձեր ձեռքերուն մեջ առնելու եկեղեցական իշխանության գավազանը, շատ երիտասարդ հասակի մը մեջ: Տարբեր պայմաններու մեջ, նման իշխանություն Ձեզ պիտի վստահվեր հավանաբար հինգ-տասը տարի հետո, բայց այժմ Մենք ստիպված ենք այդ տարիներուն չսպասելու և Ձեզ հանձնելու մեր դարավոր Ս. Եկեղեցվո ճակատագիրը:

Այս իրողության մեջ, Դուք պիտի կարենաք գտնել Ձեր փառքը կամ դժբախտությունը: Ձեր դժբախտությունը՝ երբ Ձեզ վստահված գործին մեջ ձախողիք և հուսախաբ ընեք Եկեղեցին և զՄեզ: Ձեր փառքը՝ երբ Ձեր գործը կատարեք պատվով և շինարար արդյունքներով: Աշխատանքը Ձեզ պիտի ազնվացնե, Ձեզ պիտի բարձրացնե, Ձեզ պիտի փառավորե:

Մենք, հավատքի վերածնունդի այս օրերուն, «բարույ պատերազմ»-ը սկսած ենք մղել մեր հուսացյալ ժողովրդի ծոցին մեջ: Այս օրերեն և այստեղեն կսկսի նոր շրջան մը մեր եկեղեցական պատմության մեջ: Դուք, որպես Մեր գործակիցները, Մեզ հետ միասին վկաները պիտի ըլլաք Մեր հաղթանակին, և օր մը հպարտությամբ պիտի հիշեք, թե Դուք ևս ներկա էիք այստեղ, այս ճակատամարտին, և մարտակից էիք Մեզ:

Ձեր կյանքի գործերով Դուք պիտի կարողանաք Ձեր անունները կապել շինարար ու ստեղծարար, աստվածասեր ու ազգօգուտ գործերու, որպես մշակներ առանց ամոթո: Ճանապարհը բաց է Ձեր առաջ. վերցուցեք Ձեր խաչը և հետևեցեք Մեզ:

Բայց գիտցեք, որ Մենք Ձեզ չենք խոստանար ոչ ոսկի, ոչ արծաթ, ոչ հանգստավետ կյանք, ոչ իշխանություն, ոչ մեծարանք և ոչ ալ փառք: Մենք ոչինչ կխոստանանք Ձեզ, բայց ոչինչ խոստանալով ամեն բան կխոստանանք այնպես, ինչպես մեծ առաքյալը Պողոս ոչինչ ուներ, բայց ամեն բան ուներ:

Մենք նաև այսուհետև պիտի հետևինք Ձեր քայլերուն նույն ուշադրությամբ, նույն գուրգուրանքով, նույն պահանջկոտությամբ և ջերմապես պիտի աղոթենք, որ Տեր աճեցնե Ձեր շնորհները, զորացնե Ձեր սրտերը և ըլլա Ձեզ միշտ հովանի:

«Հոգի բարի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի առաջնորդեսցէ զՁեզ և օրհնութիւն աստուածային եղիցի ընդ Ձեզ այժմ և միշտ, ամէն»:

*Վեհափառ Հայրապետի այս գեղեցիկ խրատականը լսում էին նորընծա վարդապետները, խորունկ ուշադրությամբ, հուզումով և իրենց սրտում մի աստիճան ևս խորանում էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն առանց սակարկության նվիրաբերվելու զգացումը:*

*Վեհափառ Հայրապետը Իր եկեղեցական շքախմբով առաջնորդվում է Վեհարան, ուր վարդապետները ընդունում են միաբանության շնորհավորանքներն ու բարեմաղթությունները:*

*Ապա հանուն նորընծա վարդապետների, երախտագիտության և շնորհակալության սրտագին ու որդիական խոսք է ասում Հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետը.*

*«Երբ տասնմեկ տարի առաջ նորաբաց Հոգևոր Ճեմարանն ընդունվելու համար Մայր Աթոռի դարպասներից առաջին անգամ ներս մտանք և տեսանք քրիստոնեության հինավուրց տաճարներից մեկի՝ Ս. Էջմիածնի դեպի վեր խոյացող սլացիկ գմբեթը, դարերի և ժամանակների հարվածներից մաշված և խնկի ծխից սևացած նրա սրբատաշ քարերը, աղոտ պատկերացում ունեինք նրա կատարած դերի մասին Հայ Եկեղեցու և Հայ ժողովրդի պատմության մեջ:*

*Ճեմարանի ուսանողների հավաքույթներից մեկում, երջանկահիշատակ Հայրենասեր Կաթողիկոս Գևորգ Զ-ը մի անգամ ասաց. «Դուք*

այստեղ եկել ենք ծառայելու և նվիրվելու բոլոր քրիստոնյա եկեղեցիների մեջ ծաղիկ հանդիսացող, ուրույն բուրմունք և հոտ ունեցող Հայոց Առաքելական Ս. Եկեղեցուն։ Ձեր մեջ ու այժմ պակասում են այդ Եկեղեցին ճանաչելու և գնահատելու համար համապատասխան գիտելիքները. հենց որ այդ բոլորը ստանաք, վստահ եմ, որ կսիրեք Նրան, իսկ եթե մեկ անգամ սիրեցիք, այլևս չեք կարող բաժանվել Նրանից, ուր էլ որ լինեք։

Արդարև, Ճեմարանում անցկացրած ուսանողական տարիներին ճանաչեցինք ու սիրեցինք Հայ Եկեղեցին, ըմբռնեցինք Նրա ուղղափառ դավանությունը, ծանոթացանք Նրա հայրենասեր և նահատակ զավակների պատմության հետ, որոնց ջերմ հավատքի զգացմունքը սրտներում, որպես գաղափարի և հավատի անմահ վկաներ, ոգևորել են մեզ և առաջնորդել նախնյաց վսեմ իդեալների շավղով։

Մենք հասկացանք, որ Հայ Եկեղեցուն նվիրված մեր խնկելի նախնիքը քրիստոնեության հեզություն հագած, եղբայրական սիրո ոսկեշող ծիրանին ձգած, ազատության գաղափարներով սպառազեն, հավատով և զրլով զինված, մաքառեցին ամեն տեսակի վտանգների դեմ և ապահովեցին ինքնուրույն գոյությունը և ինքնատիպ մշակույթը։

Որքան խորը թափանցեցինք Հայ Եկեղեցու պատմության մեջ, այնքան ավելի սիրեցինք Նրան, ավելի կապվեցինք Նրա հետ, և որոշեցինք ծառայել Հայ Եկեղեցուն, պինդ պահել Նրա դավանությունը, ուղղափառությունը, հայրապետահաստատ կարգն ու կանոնը, ավանդությունները, ծիսակատարությունները և դարերի խորքից եկող, հայ եկեղեցականին հատուկ հայրենասիրությունը և նվիրվածությունը Հայրենիքին։

Վեհափառ Տե՛ր, հավատարիմ մեր ուխտին՝ Հայ Եկեղեցուն ծառայելու ուխտին, հոգևոր կոչում ընդունեցինք։

Այսօր մեզ համար բախտավոր օր է, այն պատճառով, որ մեզ մասնավոր վարդապետության աստիճանի արժանացրեց Ձերդ Վեհափառությունն անձամբ. այս հանդամանքը պատահական չէ. Դուք, տոգորված Ձեր նախորդների եկեղեցասիրական, հայրենասիրական, շինարար ոգով, և ամենից կարևորը՝ Մայր Աթոռի, Լուսո Խորան Ս. Էջմիածնի բարգավաճման և ծաղկման գործով, հատուկ հայրական հոգատարություն, սեր և գուրգուրանք եք ցույց տալիս երիտասարդ միաբանների վրա՝ որպես Ձեր հարազատ որդիների վրա։

Այժմ, երբ շրջապատված եք Ձեր յոթը երիտասարդ վարդապետ որդիներով, մենք վստա՛հ ենք, որ Ձեր հոգին մեծ հրճվանք է ապրում։ Այս խորհրդավոր րոպեին մենք համոզված ենք, որ այստեղ, մեզ հետ է նաև երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի հոգին. Նա էլ մեծ հրճվանքի մեջ է, տեսնելով Իր երազների իրականացումը՝ երիտասարդ, ճեմարանավարտ վեղարավորների ներկայությունը Վեհարանում, ինչպես և Իր հոգևոր զավակների նկատմամբ ցուցաբերված այնքան անկեղծ սերը և գուրգուրանքը Իր արժանավոր հաջորդի՝ Ձերդ Վեհափառության կողմից։

Որդիական սիրով և խոնարհությամբ մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Ձերդ Վեհափառությանը՝ այս բարձր և պատասխանատու շնորհաբաշխության համար։

Թո՛ղ Տերը անսասան պահի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։

Թո՛ղ Տերը զորավիգ լինի Ձերդ Վեհափառության ազգանվեր ծրագրերի իրագործմանը, և առողջություն, ուժ և կարողություն պարգևի, որպեսզի Ս. Գրիգոր Լուսավորչի կանթեղը միշտ անմար մնա Հայոց աշխարհի երկնակամարում։

Նորընծա վարդապետներին շնորհավորեցին և սրտագին բարեմաղթություններ կատարեցին նաև գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը և բարձրապատիվ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն իր հավատացյալ ընթերցողների, շնորհավորում է մեր նորընծա վարդապետներին, մաղթելով նրանց կարողություն և ուժ իրենց հետագա ազգային-եկեղեցական գործունեության ճանապարհին։

***

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՓԱՐԳԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ ծնվել է 1925 թվականին, պատմական Վայոց Ձոր գավառի (այժմ Ազիզբեկովի շրջան) Եղեգիս գյուղում։ 1945 թվականին ընդունվում է Հոգևոր Ճեմարան և ավարտելով դասարանական և լսարանական բաժինները, 1949 թվականին ձեռնադրվում է սարկավագ։ 1951—1954 թվականներին սովորում է Մոսկվայի Հոգևոր Ճեմարանում, 1954 թվականի սեպտեմբերի 12-ին ձեռնադրվում է կուսակրոն քահանա։ Նրա վարդապետական ավարտաճառն է «Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարի առաջին քառորդում»։ Տ. Փարգև վարդապետն այժմ վարում է Մոսկվայի հայոց Նորաբաց Ս. Հարություն եկեղեցու հովվությունը։

* * *

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՎԱՉԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱԼԱՄԴԱՐՅԱՆԸ ծնվել է 1928 թվականին պատմական Անտիոք քաղաքի մոտ, Միջերկրական ծովի ափին, Քեսապի շրջանի Գալատուրան գյուղում: 1943 թվականին ընդունվում է Անթիլիասի Դպրեվանքը: 1946 թվականին ներգաղթում է Հայրենիք և ընդունվում Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը: 1950 թվականին ավարտելով Ճեմարանը, ձեռնադրվում է սարկավագ: 1951 թվականին ուղարկվում է Մոսկվա՝ ուսանելու Հոգևոր Ճեմարանում: 1954 թվականի նոյեմբերի 12-ին ձեռնադրվում է կուսակրոն քահանա: Հայր Վաչանի վարդապետական ավարտաճառն է «Հայ-կաթոլիկ հարաբերությունները 18-րդ դարում»: Տ. Վաչան վարդապետը այժմ վարում է Վրահայոց թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնը:

* * *

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԸ ծնվել է 1929 թվականին Էջմիածնում: 1945 թվականին Հոգևոր Ճեմարան ընդունված առաջին սաներից մեկն է լինում: Ավարտելով Ճեմարանը, նա 1951 թվականին ձեռնադրվում է սարկավագ: Նույն թվականին երջանկահիշատակ Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի կարգադրությամբ ուղարկվում է Մոսկվա սովորելու: Նա կուսակրոն քահանա է ձեռնադրվում 1954 թվականին: Եղիշե վարդապետի ավարտաճառն է «1836 թվի Պոլոժենիան»: Այժմ նա վարում է Մայր Աթոռում լուսարարապետության փոխանորդությունը:

* * *

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ ծնվել է 1928 թվականին Աշտարակի շրջանի Ուշի գյուղում: 1950 թվականին Երևանի Համալսարանի Ֆիլոլոգիական ֆակուլտետի 2-րդ կուրսից անցնում է Հոգևոր Ճեմարան: 1952 թվականին ձեռնադրվում է սարկավագ և ուղարկվում Մոսկվա իր ուսումը շարունակելու: 1954 թվականի Խաչվերացի տոնին, իր մյուս ընկերների հետ, ձեռնադրվում է աբեղա: Տ. Հայրիկ վարդապետի ավարտաճառն է «Սիմեոն Կաթողիկոս Երևանցին և հայ-ռուս հարաբերությունները 18-րդ դարում»: Այժմ Տ. Հայրիկ վարդապետը վարում է Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդական փոխանորդությունը:

* * *

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԵՏԻԿՅԱՆԸ ծնվել է 1927 թվականին Կահիրեում (Եգիպտոս): Որոշ ժամանակ Գալուստյան վարժարանում զբաղվում է ուսուցչությամբ: 1948 թվականին ներգաղթում է Հայրենիք: 1949 թվականին ընդունվում է Հոգևոր Ճեմարան և ավարտելով այն ձեռնադրվում է սարկավագ ու աշխատում որպես ուսուցիչ Հոգևոր Ճեմարանում: 1955 թվականի հունվարին նա ձեռնադրվում է կուսակրոն քահանա: Տ. Մուշեղ վարդապետի ավարտաճառն է «Երեք տիեզերական ժողովները և Հայոց Եկեղեցին»: Այժմ նա Մայր Աթոռում վարում է գրադարանապետի և զարդասենյակի պաշտոնները:

* * *

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐՏԻԿՅԱՆԸ ծնվել է 1930 թվականին Բեյրութում, 1944 թվականին ընդունվում է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը, որտեղ սովորում է մինչև 1947 թվականը՝ Հայրենիք վերադառնալը: 1948 թվականին Երևանի Օտար լեզուների ինստիտուտից անցնում է Հոգևոր Ճեմարան: 1952 թվականին ավարտելով Ճեմարանը սարկավագ է ձեռնադրվում, 1953 թվականի ապրիլին՝ կուսակրոն քահանա: Տ. Տիրայր վարդապետի ավարտաճառն է «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և նրա դերը ազգապահպանման գործում»: Այժմ նա վարում է Ադրբեջանի և Թուրքեստանի թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնը:

* * *

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱՐՅԱՆԸ ծնվել է 1929 թվականին Մուսալեռան Վագըֆ գյուղում: 1944 թվականին նա ընդունվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը, որի դասարանական ընթացքն ավարտում է 1947 թվականին և ներգաղթելով Հայրենիք, ընդունվում Հոգևոր Ճեմարան: 1951 թվականին նա ձեռնադրվում է սարկավագ: 1956 թվականի հունվարին՝ կուսակրոն քահանա: Տ. Մեսրոպ վարդապետի ավարտաճառն է «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությանց փոխհարաբերությունները սկզբից մինչև մեր օրերը»: Այժմ Տ. Մեսրոպ վարդապետը նշանակվել է Վեհափառ Հայրապետի գավազանակիր, Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ և «Էջմիածին» ամսագրի քարտուղար:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

*Անցած թվականի օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին. Մայր Աթոռի հարազատ որդի և հանրածանոթ մի շարք ազգայիններ, իրենց ազգօգուտ և եկեղեցաշեն գործունեության և սրտագին բարերարությունների համար, ի նշան ճշմարիտ սիրո և հայրապետական բարձր գնահատության, արժանանալով Նորին Ս. Օծության ուշադրության, սեպտեմբերի 10-ի, 15-ի, 20-ի և հոկտեմբերի 7-ի թվակիր սրբատառ կոնդակներով, պարգևատրվել են Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշանով.*

*Լոնդոնից. Անգլիայի Հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Գուսակ եպիսկոպոս Թումանյանի միջնորդությամբ՝*

***ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՆԵՐՍԵՍ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ**, բարերար Մայր Աթոռի.*

***ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՔՅՈՒՐՔՃՅԱՆ**, բարերար Մայր Աթոռի.*

***ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԱՎԵՏԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ**, Լոնդոնի Աբգարյան հիմնադրամի վարչության անդամ.*

*Եգիպտոսից. Եգիպտահայ թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի միջնորդությամբ՝*

***ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՑԻԼԻԿ ԱԲԳԱՐՅԱՆ**, ազգային բարերար.*

*Փարիզից. Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանի միջնորդությամբ՝*

***ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ**, ազգային բարերար.*

***ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԱՐՄԵՆԱԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**, ազգային բարերար.*

*Սան-Ֆրանցիսկոյից. Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Զիոն արքեպիսկոպոս Մանուկյանի միջնորդությամբ՝*

***ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԱՆԴՐԵԱՍ ՃԱՂԵՐՅԱՆ**, ազգային բարերար.*

Նորին Ս. Օծությունը Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակին են արժանացել.

*Օգոստոս 12 թվակիր կոնդակով. Հալեպի (Լիբանան) հայոց հոգևոր հովիվ **ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԱՇՏՈՑ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՈՍԿԵՐԻՉՅԱՆԸ**, իր գրական-կրթական 40-ամյա գործունեության և քահանայության 25-ամյակի կապակցությամբ.*

*Կահիրեից (Եգիպտոս), 20 սեպտեմբերի թվակիր կոնդակով. **ՏԻԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱՍԱՐՅԱՆԸ**.*

*Շնորհավորում ենք Հայրապետական բարձր գնահատության արժանացած պատվական ազգայիններին և մաղթում ավելի արդյունավետ և ազգօգուտ, եկեղեցաշեն գործունեություն, ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և հաջողություն հայ ժողովրդյան.*